


7420

53(02)  
S-61



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՉՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՊԵՂԵՑՎԵՐԵՐ ԲՈԼՈՐ յԵՐԿՐԵՆԵՐԻ, ՄԻՋԵՐԻ.

53 (02)

S-51

## ՄԵՆԱ ՅԵԿ ՏՎԻՒՍ

530  
72-156

# ՏԱՐՐԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ

364

ՆՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ՄԱՍ, Ի ՊՐԱԿ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 165.  
ՏԵՐԵՎԱԿԱՆ — 1924.

28.06.2013

7420

53(02)

15-54

Կ

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

088  
30-37

Այս աշխատությունը ներկայացնում է հետևյալ գրքի թարգմանությունը. Մենի և Տվիս, Էլեմենտարny օչեր ֆիզիկի և այլ գործությունների մասին պատճեն մեջ Զախարիաս Պաղյանը և Ա. Տոնյանը:

Գրքի ընտրությունը կատարել են Գլխավոր գլուխական գործության վրա աշխատել են Հ. Զախարիաս Պաղյանը և Ա. Տոնյանը:

Գրական պատասխանատվության տեսակետից կարելու հայտնել, վոր ռուսական հրատարակության մի քանի հատվածներ, վորոնք կարող են դժվար հասկացվել, փոքր ինչ փոխված են, այլ և տեղադրության հավելումնեց ու տեղափոխումներ են կատարված, վորոնք նպատակ ունեն գրքի ընթերցումը հեշտացնելու: Նույն նպատակով մի քանի նոր կլիշեներ են պահպանված, վորոնք վերցված են զանազան դասակրթերից, այլ և կցված են բառարան, վորը պարունակում են այս գրքի մեջ գործածված հայկական տերմինների ռուսերեն թարգմանությունը:

Թե՛ բոլոր փոփոխություններն ու հավելումները և թե՛ թարգմանության վերջնական խմբագրումը կատարված են Ա. Տոնյանի ձեռքով:

Պետքանի խմբագրական կուլեզիա

551

## I ԳԼՈՒԽ

### ՄԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒՅԺԸ

1. ԲՆՈՒԹՅԱՆ ՑԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՈՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆ. Մանր մարմինների անկումը մի շատ սովորական յերեցույթ է, վոր մեր շուրջն ամեն բայլափոխում տեղի յեւնենում։ Փոքր յերեխանները շատ վաղ հասակից ընտելանում են այս յերեսույթին և սովորում են զգույշ լինել, վոր վոտքին վորեւ ծանր բան չգցեն կամ բարձր տեղից վայր չընկնեն։

Մեզ համար այնքան սովորական և բոլոր առարկաների անկումը, վոր դժվարանում ենք յերեխայել մի աշխարհ, վորտեղ այդ այդպիս չլիներ։ Իրոք, շատ տարորինակ կթվար, յեթե ձեռքից բաց թողած քարը դեպի վեր թռչեր կամ ողում կախված մնար, առանց ընկնելու։ Մանուկների համար զրված կախարդական հերյաթներում այդպիսի յերեսույթներ պատմվում են, բայց մեզ հայտնի յեւ վոր, իրապիս, այդպիսի բան տեղի չունի։

Արեւ յերեկ յերեկո մայր մտավ և այսոր առավոտ ծագեց, և մենք հաստատ գիտենք, վոր նա այսոր յերեկո մայր կը մտնի և վաղն առավոտ կծագի։ Բնության դիտողությունը մեզ սովորեցնում է, վոր նրա մեջ ամեն ինչ այնպիսի կանոնավոր որինաչափությամբ և կատարվում, վոր մենք կարող ենք առաջուց առել թե ինչ յերեսույթ պետք և տեղի ունենա արգյալ այս կամ այն պայմաններում։ Այս հնարավորությունը, վոր մենք կարող ենք տվյալ պայմաններում լինելիքը կանխասել, մեզ ընդունակ և դարձնում բնության ույժերին տիրանալու և նրանց մեզ համար աշխատեցնելու։

Միայն նա կարող է լավագույն կերպով հետազոտել բնության ույժերը, ով գիտե բնության յերեսույթները և ընդունակ և նրանց մասին պարզ դատելու։ Ֆիզիկան ուսումնակրում ենք, վորպիսզի սովորենք, թե ինչպես պետք և բնության ույժերը յենթարկենք մեզ։

ԲԵՇՈՒՅԱՆ ՈՒՅԹԵՐԸ ՄԵԽԵ Կարողանում ենք իմանալ յեզ հետազոտել այն պատճառով, վոր նրա մեջ ամեն ինչ կատարյալ որինաշխափուրյամբ ե տեղի ունենում:

**2. ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒՅԹԸ. ԿՇԻՌ.**—Բարձրացնելով վորեւ մարմին, որինակ՝ աթոռը, գիրքը կամ մատիտը, դուք զգում եք ծանրության ույժը, վոր այդ մարմինը դեպի ներքեւ ե ձգում»: Ծանրության այդ ույժն այլ կերպ անվանում են մարմինների կերու: Բացի դրանից, դուք նկատում եք, վոր յերբ մարմինը ձեռքից բաց եք թողնում, ուղղաձիգ ընկնում ե, իսկ յեթե թելից կախեք, վերջինս կպրկի ուղղաձիգ ուղղությամբ: Այս բանից ատաղձագործներն ու վորմագիրներն ոգտվելով՝ բանեցնում են ուղղությունը (ուղղալար, տրամալար, կապարալար, նկ. 1) ստուգելու համար, թե պատերը և դռների ու լուսամուտների շրջանակներն ուղղաձիգ են: Այսպես ուրեմն, ծանրության ույժը, վոր նայել կերու ե կոչվում, ազդում ե ուղղաձիգ ուղղությամբ:




Նկար 1.  
Ուղղություն

**3. ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐՈՒՆ.**—Յեթե ցանկանում ենք, վոր, որինակ՝ մի նեղ տախտակ վայր չընկնի, պետք է ծանրության ույժին հակադրենք նրան հավասար, դեպի վեր ուղղված մի ույժ: Յեթե այդ բանին համար տախտակը սեղանին ենք դրել կամ ձեռքում բռնել, ապա նա հենցում ե և պահպում իր բազմաթիվ զանազան կետերով: Բայց այդ տախտակը կարելի յե հավասարակշռել հորիզոնական ուղղությամբ, հենելով դանակի բերանին (նկ. 2). այն ժամանակ նու կհենվի միայն այն կետերով, վորոնք գտնվում են մի ուղիղի վրա: Տախտակն այս ձևով հավասարակշռելու համար հարկավոր ե դանակը դնել տախտակի ուղիղ մեջտեղում, վորպեսզի դանակի յերկու կողմում տախտակի մասերն ուղիղ միահավասարինեն, կամ, այլ խոսքով, վորպեսզի տախտակի կեսերը դանակի բերանի նկատմամբ համաչափ (սիմմետրիկ) դասավորությունը

ունենան: Այդպիսով ամբողջ տախտակի ծանրության ույժին կարող ենք հակազդել մի այնպիսի նեցուկով, վորը միայն մի ուղիղ գը- ծի ուղղությամբ ե տախտակը վարից վեր ձնշում, և այդ ուղիղն անցնում ե տախտակի մեջտեղով:

Բայց կարող ենք և ավելին անել: Յեթե մի փոս փորենք այն գծի կենդրոնում, վորի ուղղությամբ տախտակը հենված եր, և մատաի սուր ծայրը գնենք այդ փոսի մեջ, ապա տախտակը նեցուկ ունենալով միայն այդ կետում՝ չի ընկնիլ (նկ. 3):



**Նկար 3.** Մատաի ծայրը գտնվում կենդրոնով հենենք մտատի ծայրին: Իսկ և տախտակի փոսում՝ յեթե կենդրոնում փոս փորենք, վորը հասնի մինչեւ տախտակի հաստության մեջտեղը, ապա տախտակը հավասարակշռության մեջ կլինի վոչ միայն հորիզոնական, այլ և թեք գիրքով (նկ. 4): Յեթե մատաի ծայրը դրված ե ուղիղ մեջտեղը, ապա, ինչպես ել շրջենք, տախտակն անշարժ կմնա: Այսպես ուրեմն, տեսնում ենք, վոր ծանրության ույժին, կամ մարմինի կշռին կարելի յե հակազդել մի հակադիր ուղղության ույժով, յեթե վերջինս ազդում ե մի առանձնահատուկ կետում: Այս կետը կոչվում ե մարմինի ծանրության կենդրուն:




Նկ. 4. Կենդրոնով հեն- գած շրջանակը:

Մարմինի ծանրության կենդրոնը մի այնպիսի կես ե, գորտեղ պիտի և ազդել դեպի վեր ուղղված ուժով՝ ծանրության ույժին հակազդելու համար:

## 4. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԳՏՆԵԼ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐՈՒԾ.

Յեթե ուղղորդի ծանրոցը (նկ. 1) մի կողմ թեքենք և բաց թողնենք, ապա նա կսկսի ճոճանակի նման տարուըերփել, մինչև վորկանգ առնի իր ճոճումների միջին կետում, այսինքն այսուղ, վորտեղ նրա ծանրության կենդրոնը ամենացած զիրքն է գրավում: Մենք տեսնում ենք, վոր ծանրության կենդրոնը ձգտում է հասնել այն ամենացած մակարդակին, վոր հնարավոր է:

Այս հանգամանքը թույլ է տալիս մի շատ հասարակ յեղանակով գտնել անկանոն ձև ունեցող մարմնի ծանրության կենդրոնը: Դիցուք, որինակ՝ հարկավոր ե գտնել ստվարաթըդթից, փայտից կամ մետաղից պատրաստած այս պատկերի ծանրության կենդրոնը (նկ. 5): Պատկերի յեզերքի մոտ մի քանի անցքեր բանանք՝ ա, ի, և կ այլն, և պատկերը մեխից կախենք և անցքով: Նույն մեխից կախենք ուղղորդը: Հավա-





նկ. 5 Տախտակի ծանրության բության կենդրոնը պատկերը պատկերի մոտ մեխի վրա գործում պատկերի ծանրության կենդրոնը պետք է գտնվի այն ուղղաձիգի վրա, վոր ցույց ե տալիս ուղղորդի թելը: Նշանակենք այդ զինը մեր թիթեղի վրա, կախենք վերջինս և անցքով և այս զիրքում ևս նշանակենք ուղղաձիգը: Պատկերի ծանրության կենդրոնը պետք է գտնվի նըշանակած յերկու ուղիղների վրա, հետևապես, նրանց հատման կետում: Փորձը խնամքով կատարելու զերքում ծանրության կենդրոնն այնքան ճիշդ է վորոշում, վոր կարելի յե հավասարակշռություն ստանալ, յեթե ուղղաձիգների հատման կետում թիթեղը հենենք ասեղի ծայրին:

Ծանրության կենդրոնը գտնելու այս յեղանակի հիմքն այն է, վոր վորեւ ձեռվ կախած մարմինն այն ժամանակ և դադարի մեջ մնում, յերբ նրա ծանրության կենդրոնը գրավում է ամենացած մակարդակը, վոր հնարավոր է:

## 5. ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԽՄ. Ո՞վ չի փորձել մատի ծայրին



Հավասարակշռության մեջ պահել փայտը կամ մատիտը (նկ. 6): Մեծ շարժունություն և ճարպկություն ե հարկավոր, վորպեսզի փայտը վայր չընկնի: Շատ հեշտ է շիշը բերանն ի վեր սեղանին դնել, բայց միայն վորձառու ձեռնածուն և կարողանում շիշը պնակի յեզրին պահել (նկ. 7):



նկ. 6. Հավասարակշռություն:

նկ. 7. Շիշը ձեռնածուելը:

Գետնին ընկած քարը միայն զգալի դժվարությամբ կարելի յե շրջել, իսկ թեքած «չպառկուկը» («կոստան-նստանը», նկ. 8) ինքն իրեն ուղղվում է: Մատիտը մատի ծայրին պահելը շատ դժվար է, բայց այդ դժվարությունը վերանում է, յերբ նրան միացնում ենք յերկու գըշահատ այնպես, ինչպես պատկերացրած է 9-րդ նկարում:



նկ. 8. Չպառկուկը:

Աշխատենք այս բոլոր յերկութիւների համար բացատրություն պահեն:

6. ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.—Մեղ հայտնի յէ, վոր մարմինը հեշտ ե շրջել, յեթե նրա հենաման հիմքը փոքր ե, և, ընդհակառակն, դժվար ե շրջել, յեթե նրա հիմքը մեծ ե. բայց միայն այս բավական չե կայունության հարցը պարզելու համար:


Մատի ծայրին դրված փայտի դեպքում ծանրության կենդրոնը գտնվում է հենարանից բարձր (նկ. 10), վորի վոր այստեղ հենարանի մակերեսը շատ փոքր ե, — գործնականորեն մի կետ ե, — ապա ամենափոքր շեղման դեպքում փայտի ծանրության կենդրոնը, մատի ծայրը կենդրոն ունենալով գծում է ան աղեղը. Այդ շարժման ժամանակ ծանրության կենդրոնն իջնում է և ավելի ու ավելի կիշնի, յեթե մատի արագ շարժումով այդ չարգելենք, Փայտը հավասարակշռության մեջ է մնում այն ժամանակ, յերբ նրա ծանրության կենդրոնը գտնվում է ա կետում, այսինքն ան աղեղի ամենաբարձր կետում, և, բացի դրանից, ծանրության կենդրոնով անցնող ուղղաձիգն անցնում է նաև հենակետով:

Նույն և նաև պնակի յեզրին դրված շեղմատում: Եիշն այնքան ժամանակ և մնում պնակի յեզրին, վորքան ժամանակ ձեռնածուն հենարանը շեղմատում ծանրության կենդրոնով անցնող ուղղաձիգի վրա յէ պահում: Յերբ շիշը հենաման տեղի շուրջը պտղում է, նրա ծանրության կենդրոնն իջնում է:

Այսպիսի հավասարակշռությունը դրժվար ե պահպանել, ուստի կոչվում է անկայուն հավասարակեռություն:


Մարմնի հավասարակեռությունն անկայուն է, յերե ամենքերման ժամանակ երա ծանրության կենդրոնն իջնում է:

Գետնին ընկած քարի դեպքում (նկ. 11) հիմքն ավելի մեծ է: Յեթե քարը մի կողմից թեքենք, նրա ծանրության կենդրոնը կը արձանա, և յեթե նա բավականին մեծ ե և



Նկ. 10

ծանրը, ապա թեքման համար կպահանջմի զգալի ճիգ: Քարի ծանրության կենդրոնով անցնող ուղղաձիգն անցնում է նրա հիմքի հերսով, քանի դեռ քարը շատ զգալի անկյունով չի թեքվել:



Նկ. 11

Քարը թեքելիս նրա համար ե հարկավոր ճիգ բանեցնել, վոր այդ ժամանակ քարի ծանրության կենդրոնը բարձրանում է ուղղաձիգ վերքով ընկած ժարի մասին ասում են, ուստի այդ դիրքով ընկած ժարի մասարակեռություն ունի:

Զպառկուկը և գրչահատներով մատիտն ել (նկ. 8 և 9) կայուն հավասարակշռություն ունեն, վորովհետև նրանց ծանրության կենդրոնը զբավում է հնարավոր ամենացած դիրքը: Այդ է պատճառը, վոր թեքման ժամանակ նորից ուղղվում էն: Այսպիսով մարմնի հավասարակեռությունը կայուն է, յերե ամեն թեքման ժամանակ նրա ծանրության կենդրոնը շարունակ կմնա հենակետից բարձր և միենույն մակարդակի վրա. այս պատճառով գունդը, ինչպես ել շրջը հենք, հավասարակշռության մեջ է մնում:

Յեթե մարմինն, ինչպես ել թեքենք, հավասարակշռության մեջ է մնում, ապա ասում են, վոր նա անտրեց հավասարակեռություն ունի:



Նկ. 12

Մարմնի հավասարակեռությունն անտրեց ե, յերե թեքման ժամանակ կենդրոնը վոր իշխում է յեզ վոչ վոչ ել բարձանում:

Ծանրության ույժի ազդեցության յենթակա մարմինների հավասարակշռության բոլոր դեպքերում իրավացի յենեակալ կանոնը.

Փանուրյան ուժի ազդեցության յենթակա մարմինը հավասարակշռության մեջ է, յերե այնպես և հենգած, զու նրա ծանրության կենդրոնը չի կարող իջնել. Սակայն պայմանը տեղի յե ունենում, յերբ ծանրուրյան կենդրոնով անցնող ուղղաձիգն անցնում է հենաման մակերեսով կամ կետով:

7. ԿԱՅՈՒՈՒԹՅԱՆ ԱԱՏԻՃԱՆԸ. — Յերբ 11-րդ նկարի քարը կողի շուրջն այնքան ենք պտտել, վոր ընդունել և 13-րդ նկարի կանգուն դիրքը, ապա նրան նորից շրջելու համար ավելի փոքր ճիգ և հարկավոր: Այս պատճառով ասում են, վոր քարն առաջին դիրքուժ ավելի կայուն է, քան յերկրորդում: Ուշադրությամբ դիտելով 11-րդ և 13-րդ նկարները՝ դժվար չե իմանալ, թե ինչու այդ այլպես է: Քարն առաջին դիրքից շրջելու համար պետք է նրա ծանրության կենդրոնը ան-ի չափ բարձրացնել (նկ. 11). իսկ յերկրորդ դիրքից շրջելու համար պետք է ծանրության կենդրոնը միայն օճ-ի չափ բարձրացնել (նկ. 13), վոր անհամեմատ ավելի փոքր է, քան ան-ն:

14-րդ նկարի քարը նույն ծավալը և նույն կշիռն ունի, ինչ վոր նախորդը, բայց նրա հիմքը յերկու անգամ լայն է, և ծանրության կենդրոնի բարձրությունը յերկու անգամ փոքր, քան առաջին



նկ. 13

քարինը: Պառկած դիրքում այդ քարն ավելի կայուն է, քան առաջինը, իսկ կանգուն դիրքում ընդհակառակ դրա պատճառն այն է, վոր յերկրորդ քարունակած դիրքից կանդնեցնելու համար պետք է


նրա ծանրության կենդրուն ավելի բարձրացնել, քան առաջինը ըարինը (eb>ab), իսկ կանգուն դիրքից շրջելու համար ընդհակառակն (gb<cd):

Այսպիսով՝ կայունությունն այնքան ավելի մեծ է, վորքան ավելի լայն է հիմքը և վորքան ավելի ցած է ծանրության կենդրոնը, վորովհետև այս պայմանները մեծացնում են այն տարածությունը, վորի չափ պետք է մարմնի ծանրության կենդրոնը բարձրացնել՝ նրա հավասարակշռությունը խախտելու համար:

Մեր քարի մեծությունն ու ձեն ունեցող մի կտոր յերկաթ ավելի կայուն է, քան քարը, վորովհետև ավելի ծանր է և նրա շրջման համար ավելի մեծ ճիգ պետք է բանեցնել: Այսպես ուրեմն, մարմինի կայունությունն այնքան ավելի մեծ է, վորին ավելի ծանր է այդ մարմինը յեկ վորքան ավելի մեծ տարածություն պես է բարձրացնել նրա ծանրության կենդրոնը, վրապեսզի նու ըցվի:

8. ԻՆՉՊԵՍ Ե ԱԶԴՈՒՄ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ. — Յեթե ուետինե թելը յերկու ձեռով ձգենք, ապա նա մեր յերկու ձեռն ել հավասար ուժով կծիի: Ծանրության ույժը մարմինը դեպի յերկիրն է ձգում, բայց նա, ուետինե թելի նման, չի կարող մարմինը դեպի յերկիրը ձգել առանց միենույն ույժով յերկիրը դեպի մարմինը ձգելու: Այսպիսով մենք կարող ենք այնպես պատկերացնել, վոր ծանրության ույժն ազդում է ինչպես մի տուածգական թել, վորը մարմնի ծանրության կենդրոնը միացնում է յերկի ծանրության կենդրոնի հետ, յեկ որու հետեւանենով մարմինն ու յերկիրը դեպի իրար են ձգվում նրանց ծանրության կենդրոնները միացնող ուղիղ գծով:

9. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՅԵԿ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ. — Ծանրքար բարձրացնելիս մարդու վոաները միենույն ույժով են հենց վում գետնին, ինչ ույժով վոր ձեռները ձնշում են քարը: Մարդու ազդեցությունն այս դեպքում նման է այն պարուրածի գոգանակի ազդեցության, վորը սեղմած է յերկու զանգվածեղ մարմինների միջև (նկ. 15): Յեթե զսպանակը մարմինները հետ մղելով բացգում է, ապա նա յերկու մար-



14 նկ.

մինների վրա գործադրում ե սիհնույն ճնշումը, բայց հակառակը ուղղություններով:

Նույն ձևով, յեթե մարդ հատակի վրայով մի ծանր արկղ ե տեղափոխում, նա միհնույն ույժն ե բանեցնում ձեռներով արկղն առաջ մղելու և վոտներով հատա-



Նկ. 15

կին հենվելու համար, նա չի կարող արկղն ավելի մեծ ույժ ով հրել, քան այն ույժն ե, վորով նա հենվում է հատակին. ուստի, յեթե այն ամենամեծ ույժը, վորով կարելի յե հենվել սայթքուն հատակին, ավելի փոքր ե, քան արկղը տեղափոխելու համար հարկավոր ույժը, ապա արկղը տեղից շարժել չի լինի:

Ամեն անդամ, յերբ ույժի ազդեցությունն կա, անպայման ունենում ենք յերկու մարմին, վորոնց վրա ազդում են հավասար ույժեր հակադիր ուղղություններով: Այս խիստ կարեւը դրությունը, վոր հայտնի յե «Եյուտոնի յերրորդ որենք» կամ «շարժման յերրորդ հիմնական որենք» անունով, սովորաբար հետևյալ ձևով են արտահայտում.

Ամեն ազդեցուրյան համապատասխանում ե նրան հավասար և հակագիր ուղղուրյան հակագգեցուրյուն:

**10. ԶԱՆԳՎԱԾ (ՄԱՍՍԱ).**  Յեթե 15-րդ նկարի մարմինները միահավասար են, որինակ՝ յերկաթի յերկու հավասար կատորներ են, ապա բացվող զապանակը նրանց միահավասար շարժումներ ե հաղորդում: Բայց յեթե կտորներից մեկը շատ ավելի յերկաթ ե պարունակում, քան մյուսը, ապա նա անհամեմատ ավելի դանդաղ կը շարժվի: Նույնպես ել, յերբ մարդ գեանից քար ե բարձրացնում, նա շարժման մեջ ե դնում և բարը, և յերկիրը, բայց վորովհետեւ յերկիրը քարից անհամեմատ ավելի մեծ ե, ապա և յերկիրի շարժումն աննշմարելի փոքր ե:

Մարմինը կազմող նյութի քանակը կոչվում ե մարմինի գանգված (կամ մասսա):

Յերեկու մարմինների միջեվ ազդող ույժը շարժում ե առաջացնում, ապա յերկու մարմիններն ել շարժվում են:

Յերեկու մարմինների գանգվածները հավասար են, ապա մարսիները սիածեսակ են շարժվում: Յերեկու մարմինների գանգվածներն անհավասար են, ապա մեծ գանգված ունեցող մարմինն ավելի գանգաղ ե շարժվում:

**Մարմինի գանգված կոչվում ե մարմինը կազմող նյութի բառեալը:**

Պորեան ավելի մեծ ե մարմինի գանգվածը, այնքան ավելի գանգաղ ե նրա շարժումը, յերբ ազդող ույժը նույնն ե:

**11. ԻՆԵՐՑԻԱ.**  Յերբ կառքը հանկարծ առաջ ե շարժվում, նրա մեջ կանգնած մարդը կարծես դեպի հետ ե հըրվում: Իրապես տեղի յե ունենում միայն կառքի շարժումը, իսկ մարդը, ձգտելով մնալ իր տեղում, այդ շարժմանը մասնակցում ե վոչ միանգամից: Կառքի հետ միասին շարժվելու համար մարդը պետք ե վոտները կառքին հենի և իրեն մի հարված տա դեպի առաջ: Բնդհակառակն, յերբ կառքը հանկարծ կանգնում ե, մարդը չի կարող միանգամից կանգ առնել կառքի հետ և կարծես դեպի առաջ ե հրվում: Կառքի հետ միասին կանգնելու համար մարդը պետք ե այնպիս հեն զի կառքի հատակին, վոր իր մարմինն առաջ չշարժվի:

Շարժվող վագոնից ցատկելիս՝ մարդ պետք ե դեպի շարժման կողմն ուղղվի: այլապես, վոտները գետնին զիազէելով կանգ կառնեն, իսկ մարմինը դեռ կը շարունակի առաջ շարժվել, և մարդը կընկնի:

Յերբ մարդը կանգնած ե շարժվող կառքի մեջ, և վերջնա հանկարծ պտույտ ե գործում, ապա մարդը կարծես հրվում ե դեպի մի կողմ: Իրապես կառքը փոխում ե իր շարժման ուղղությունը, իսկ մարդը ձգտում ե շարժվել այն ուղղությամբ, վորով շարժվում եր առաջ: Կառքը պտույտ գործելիս՝ չընկնելու համար մարդը պետք ե թեքվի դեպի կառքի կողմը: Յերբ պարսատիկով քար ենք նետում, ապա պտտելիս մենք հարկադրում ենք, վոր քարը կոր ճանապարհով շարժվի: Իսկ յերբ պարսատիկի շարժումը վերջանում ե, մեր ուժի ազդեցությունը դադարում ե, և քարը թռչում ե այն ուղղությամբ, վորով շարժվում եր այդ ակնթարթում:

Պուտաբոլի գնդակը շարժման մեջ դնելու համար խաղա-

ցողը վոտքով խփում եւ Գնդակը յերբեք ինքն իրեն չի ըսկում շարժվել և յերբեք ինքն իրեն կսնդ չի առնում: Նա շարժվում եւ այնքան ժամանակ, մինչև վոր կամ խաղացողներից մեկը կամ ողի դիմադրության և գետնի շվման ույժերը նրան կանգնեցնում են: Նետելով գնդակը՝ տեսնում ենք, վոր ուղիղ ճանապարհով չի գնում, այլ կոր, վորովհետև ծանրության ուժն անընդհատ հարկադրում եւ, վոր գնդակի ծանրության կենտրոնը մոտենա յերկրին: Մենք վոչ մի ժամանակ չենք դիտել, վոր մարմինն իր շարժումը փոխեր առանց վորեւ այլ մարմին հետ փոխազդեցության մեջ մտնելու: Այս պատճառով մենք ընդունում ենք, վոր յեթե մարմին վրա ուժեր չազդեցին, վորոնք փոխում են շարժման ուղղությունը կատարածությունը, ապա մարմինը շարունակ կը շարժվեր միենույն ուղղությամբ և միենույն արագությամբ: Այն, վոր մարմիններն անընդունակ են առանց վորեւ ուժի ազդեցության իրենց շարժումը փոխելու, կոչվում եւ մարմինների ինեցիա (անգործություն): Մարմինների այս հատկությունը սովորաբար արտահայտվում եւ որենքի ձևով, վոր կրում եւ «Իներցիայի որենք», «Շարժման առաջին հնմանական որենք» կամ «Նյուտոնի առաջին որենք» անունը, և վորը հետեւյալն եւ:

Ամեն մարմին պահպանում է գաղաքի կամ ուղղագիծ հավասարական տարրական իր վիճակը, բանի զեր վորենք ույժ չի բռնագագաթ առաջական գաղաքի կամ ուղղագիծ հավասարական տարրական իր վիճակը:

12. Տիեզերական ԶԳՈՂՈՒԹՅՈՒՆ.—Մենք գիտենք, վոր մարմիններն ընկնում են վոչ միայն յերկրի մակերեսույթին մոտ տեղերում, այլ և լեռների գագաթներում և ողապարիկներից: գիտենք նաև, վոր յերկրի վրա յերբեմն ողաքարեր («ընկնող աստղեր») են ընկնում, վորոնց անկման բարձրությունը պետք է վոր շատ մեծ լինի: Վերջապես, գիտենք, վոր լուսինը պտտում է յերկրի շուրջը և վոր, հետեւաբար, պիտք է գոյություն ունենա մի ույժ, վորի ազդեցությամբ լուսինն իր ճանապարհը խոտորում է գեղի յերկրը: Այս յերեսույթներն ուսումնասիրելով:

Նյուտոնը հանգավ այն յենթադրության, վոր հենց նույն ծանրության ույժը, վորի ազդեցությամբ բոլոր մարմինները յնըրկրին են ընկնում, տարածվում եւ մինչեւ լուսինն իվերջինս պահում յերկրի շուրջը մի կորաղիծ ճանապարհի վրա:

Աստղաշխական գիտողությունների հիման վրա, յերկար և մանրակրկիտ հաշիվներից հետո, Նյուտոնը յեկավ հետեւյալ յեզրակացության, վորը հայտնի յե Տիյեզերական ձգության ունենով:

Ամեն մարմին ձգում է ամեն մի այլ մարմին այնպիսի ուժով, վոր ուղղի համեմատական է այդ մարմինների զանգվածների արտադրյալին յեզր հակագարեա համեմատական այդ մարմինների ծանրության կենցրունների հետափուրան բառակառության:

Ընդունելով այս որենքի իրավագիտունը՝ աստղաբաշխները կարողացել են մեծ ձշությամբ վորոշել յերկնային կմարմինների շարժումները՝ կարողացել են կանխասել արեի և ուսնի խավարումները, գիսավորների յերեալը, և նույնիոկ կարողացել են նոր մոլորակներ հայտնագործել: Վարովինեան բոլոր գեպքերում տիյեզերական ձգությունն որենքի վրա հիմնված կանխասացություններն արդարացել են, ապա մենք կարող ենք այդ որենքն իրավացի համար առանց բացառության բոլոր մարմինների համար:

Ամեն յեկու մարմին ձգում ենթավոր իրաւությունը՝ 1922

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՈՐԵՆՔՆԵՐ

1. Ամեն պատճառ, վոր ընկնումակ է փոխելու մարմին դադարի կամ շարժման վիճակը, կոչվում է ույժ:

2. Ծանրության ույժն ազդում է ուղղաձիգ ուղղությամբ:

3. Մարմինի վրա ազդող ծանրության ուժն այլ կերպ կոչվում է մարմինի կշիռ:

4. Մարմինի ծանրության կենդրունը մի այնպիսի կետ է, վորանգ պետք է ազդել զեպի վեր ուղղված ույժով ծանրության ույժին հակազդելու համար:

5. Ծանրության կենդրունը ձգում է համեմել հնարավոր ամենացած մակարդակին:

Մասն և Տվյալ Ֆիզիկա

6. Մարմինը ծանրության ույժի ազգեցության տակ հափասարակշռության մեջ և գանգում, յեթե նրա ծանրության կենդրոնը չի կարող իջնել: Այդ այն դեպքերում և լինում, յեթ մարմինի ծանրության կենդրոնով անցնող ուղղաձիգն անցնում և այդ մարմինի հիմքի ներսով կամ նրա հենման կետով:

7. Մարմինի հավասարակշռության կայունությունն այնքան ավելի մեծ է, վորքան ավելի յե մարմինի կշիռը և մեծ այն տարածությանը, վորի չափ պետք է բարձրացնել ծանրության կենդրոնը, վորպեսզի մարմինը շրջվի:

8. Ծանրության ուժն ազգում և մարմինի և յերկրագնդի միջև, հարկադրելով, վորնրանք իրար բնդառաջ շարժվեն:

9. Մարմինը նույն ույժով և գեղի յերկիրը ձգվում, ինչ ույժով վար յերկիրն և գեղի մարմինը ձգվում:

10. Ամեն ազգեցության ժամանակ զոյսություն ունի հավասար, հակադիր ուղղության հակազդեցություն:

11. Զանգվածը նյութի քանակն է: Յեթե շարժող ույժը նույնն է, ապա վորքան ավելի և մարմինի զանգվածը, այնքան գանգաղ և նրա շարժումը:

12. Իներցիա կոչվում է մարմինների անընդունակությունը՝ առանց ույժերի ազգեցության փոխելու իրենց դադարի կամ շարժման վիճակը:

13. Ամեն յերկու մարմին ձգվում են գեղի իրար (տիեզերական ձգողություն):

### ՀԱՐՑԵՐ

1. Ինչու համոզված եք, վար դեղի վեր նետած զնդակը նորից ներք կիշնի:

2. Մարերեցեք այնպիսի յերկութներ, վոր կարող եք վատահորն կանխակալ: Բացարեցեք՝ ինչու համոզված եք, վոր ձեր կանխատցում յունները ճիշտ են:

3. Ինչով և յերեան գալիս ծանրության ույժը, յերը մի մեծ գիրք ձեռքերդ եք առնում:

4. Ազդորոն ինչպիս են բանեցնում տուն շինելիս:

5. «Աւզպածիղ ներքեւ զնացող զիծն ինչպիս և անցնում մեր «հակոտնյաների» («անտիպոզների») համար, այսինքն այն մարդկանց

համար, վորոնք զանգում են յերկրագնդի տրամագծորեն հակադիր ժողոված (գծազրեցեք):

6. Ի՞նչ նշանակություն ունեն օվերես և օներքեւ բառերը, յեթե խոսում ենք տիյեզերական տարածության մասին, բնավ ուշք շղարձնելով յերկրին: Ի՞նչ և նշանակում «գեղի ներքեւ» Մարս սոլուսկի բնակչի համար:

7. Մարզիկը հավասարակշռության մեջ մնալու համար (նկ. 16) մեջքի վար մասով պետք է հենվի մարզափայտափն:

8. Վար կետն և կոչվում մարմինի ծանրության կինդրոն:

9. Ինչու յերը սարի զառիվերն ուժիղ է, բարձրանալիս մարդ սուազ և թիքվում, իսկ իշնելիս՝ յատ:


10. Ի՞նչ կը կատարի, յեթե զատարի ձոճաթոռը թեքենք և բաց թողնենք: Յերկույթը բացատրեցեք:

11. Ի՞նչպիս կը զանեք զատարի մուտի ծանրության կենդրոնը: Ի՞նչպիս կատարեք, վար ծանրության կենդրոնի դիրքն ուղիղ և վորոշված:

12. Ինչու չպառկուկը արջելուց հետո իրեն իրեն բարձրանում է: Համեմատեցեք ծանրաբեռ առազատաշնավի համ:

13. Վարահի և զանգում լծակի, թիւտի, կացնի ծանրության կենդրում:

14. Ինչու 9-րդ նկարի մուտիոր մնամ և կայտն, իսկ 6-րդ նկարինը շրջվում է:



Նկ. 16



Նկ. 17

15. Ինչու թեյլի թուրը (նկար 17) մուտի ծայրին ուղիղ դիրքով զգվար և պահել, իսկ շրջած դիրքով՝ հեշտ:

16. Յերկու միատիստկ սայլեր բարձած են միհնույն ծանրության բառներով, մի սայլի վրա ավազ է, իսկ մյուսի վրա՝ փայտոյա զատարի արկղներ: Վար սայլն և ավելի կայտն:

17. Փոքր նավի մեջ բնչպիս և ավելի ապահով ձանապարհորդել՝ նստած, թի կոսնդնած:

18. Ի՞նչ ձև են տալիս թանարաժաններին, վոր չըթզվեն:

19. Ի՞նչպիսի հավասարակշռության վիճակ ունի սեղանին զըր-

ված զնդակը: Ի՞նչպիսի հավասարակշռության վիճակ ունի հորիզոնական սոնակին հազրած անիվը:

20. Աղյուսը կարելի յե սեղանի վրա դնել յերեք ձևով: Վարձել գրված գեղքում և աղյուսի հավասարակշռությունն ամենից ավելի կայուն և վարձեղքում ամենից նվազ կայուն:

21. Հատակին դրված են յերկու միատեսակ արկդներ՝ մեկը դատարկ, իսկ մյուսը գրքերով լիքը: Վարձ արկդն և ավելի կայուն:

22. Սայլը պետք է բարձել միենույն մեծության մի քանի արկդներով, վորոնցից մի քանիսը ծանր են, մի քանիսը թեթև: Ի՞նչպիսի պետք է տեղափորել արկդները, վոր սայլն ըստ հնարավորության ավելի կայուն լինի:

23. Զրով լիքը դույլը դրված է գետնին: Այդ դույլի մեջ կետույլ ավաղ են ածում, վորով ջրի մի մասը թափում է: Դույլի կայունությունը դրանից մեծանում է, թե փոքրանում:

24. Սեղանի վրա դրված են յերկու զնդակներ, վորոնք միացված են ձգված սետինով: Ի՞նչպիս են դեպի իրար շարժվում այդ զնդակները, ա) յերբ նրանց զանգվածները հավասար են, բ) յերբ նրանց զանգվածները տարբեր են:

25. Յերկիրը շարժվում է դեպի ծառից ընկնող խնձորը:

26. Յերբ տրամվայի վագոնի շարժման ժամանակ մարդ դուրս է թռչում, գեպի մեր պետք է դարձնի յերեսը:

27. Ուժեղ պառայտի ժամանակ վարձ կողմն և թեքվում հեծանալ վորդը: Ի՞նչու:

28. Յերկաթուղու պառայտներում արտաքին սելոները քիչ ավելի բարձր են դրվում, քան ներքինները: Ի՞նչու:

29. Յերբ կառքն արագ գնում է ցիխոտ ճանապարհով, անվիշտինի կտորներ են շպրտվում: Ի՞նչու: Ցիխի կտորն առաջին ակնթարթին ինչ ուղղությամբ է թռչում:

30. Ի՞նչու նետած քարը սառուցի վրա շատ ավելի մեծ տարածություն և անցնում, քան դետնի վրա:

31. Սեղանին դրեք մի թերթ թուղթ և նրա վրա ջրով բաժակը Յեթե թուղթն սկսեք կամացուկ դուրս քաշել, բաժակը թղթի հետ միասին կշարժվի, բայց յեթե արագ դուրս քաշեք, թուղթը դուրս կգա բաժակի տակից, իսկ բաժակն իր տեղից չի շարժվի: Բացարեցեք այս յերկութը:

32. Վարձն և տիյեղերական ձգողության որենքը: Ա՞վ և հայտնագրել այդ որենքը:

## Խ Ն Գ Ի Բ Ն Ե Բ.

1. Ուղղութ շինեցեք և ստուգեցեք դոների շրջանակների, պահպանների յիլեսների ու կողերի ուղղաձգությունը:

2. Գետնին ցցեք մի յերկար ուղիղ փայտ և ուղղորդի միջոցով նրա ուղղությունը գարձրեք ուղղաձիգ:

3. Վորոշեցեք, թե վարտեղ և գանվում զգալի, գրչի, բաց և փակ գրչահատի և այլ իրերի ծանրության կենդրունը:

4. Ստվարաթղթից կարեցեք կամ բարակ տախտակից սղոցեցեք այն տեսակ պատկերները, վորոնք զետեղված են 18-րդ նկարում, և վորոշեցեք յուրաքանչյուրի ծանրության կենդրունը:

5. Ստվարաթղթից կարեցեք կամ փայտից սղոցեցեք 18-րդ նկարում զետեղված պատկերները և նրանց այն տեղերում, վորոնք նշանակված են Ա տառավ, ամբացրեք ծանրոցները: Հավասարակշռության նիշ վիճակ կընդունին այդ պատկերները, յեթե Օ կետում վորեն բարին հենանք:

6. Վարձ գիրքում եք ավելի կայուն կանգնած լինում, վոտներն իրար մոտեցրած, թե հեռացրած:




Նկ. 18

7. Փայտից յերկու գլան շինեցեք, վորոնք միենույն հաստությունն ունենան և սկիսույն բավական ուժեղ թեքությունը: Մի գլանը ցած շինեցեք, իսկ մյուսը՝ բարձր (Նկ. 19): Առաջին գլանը սեղանին կայուն կկանգնի, իսկ յերկրորդը՝ կըրչվի: Ի՞նչու:

8. Մի մարդ նսվակում է կանգնած և բանած և պարանի մի ծայրը, մի ուրիշն ել ափին և կանգնած և բանած և մյուս ծայրը: Միասնական շարժվում նսվակը, յերբ առաջին մարդն և ձգում, և յերբ յերկրորդն է ձգում:


9. Յեթե յերկրորդ մարդը (ա. խնդ. 8-րդ) կանգնած լինի վոչ թե ափին, այլ մի այլ նավակում, վոր առաջինից յերկու անգամ թեթել է, այդ գեղքում ի՞նչպես կշարժվեն նավակները, յերբ առաջինը ձգի, և յերբ յերկրորդը ձգի:

10. Մի հոկայի մասին պատմված հերիաթում ասված է, թե նա այնքան ուժեղ թռիքը է ունեցել, վոր յերբ մի անգամ ծովով զնալիս է յեղել, և քամին գաղաքել է, նա կոնդնել է նամի խելքին և սկսել այնպիսի ուժով փչել առազատներին, վոր նամակ առաջ է



Նկ. 18ա

շարժվել: Առացուցեք, վոր այդպիսի պայմաններում, ի՞նչպիսի ուժով էլ հոկան փչեր, նավը չեր շարժվի: Կարող եք նույն շարժվել յեթե հոկան ափին կամպներ և առազատներին փչեր:



Նկ. 19

12. Ի՞նչու քարն ափելի ուժեղ նետելու համար պետք է ձեռն ափելի մեծ թափով շարժել:

13. Ի՞նչ է լինում ձիավորին, յերբ ձին արագ վազելիս 1) հաշ-

կարծ կանգ և առնում, 2) հաճկարծ գեղի աջ և ծալում:

14. Ի՞նչպես է, վոր կարողանում եք առանց վոտները գետնին զիացնելու ձոճվել ձորթով կամ մարզողակներով:

## II ԳԼՈՒԽ

### ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ՄԵԳԵՆԱՆԵՐ

13. ԱՇԽԱՏԱՆՔ.—Յերբ, որինակ՝ բանվորը գետնից առանցի հակը բարձրացնում վնում է սայլին, նու աշխատանք է կատարում: Ծանրության ույժը հակը ձգում է գեղի յերկիր, իսկ բանվորը, հաղթահարելով այդ ձգողության ույժը, բեռը բարձրացնում է մինչև սայլը: Յերբ բանվորը հակն ավելի մեծ աշխատանք է կատարում, քան այն գեղքում, յերբ հակը գետնից վերցնում սայլին է զնում:


Յերբ սանդուխքով բարձրանում էք, զուր ևս աշխատանք էք կատարում, վորօվհեակ բարձրացնում էք ձեր մարմինը, հաղթահարելով ձեր կողի ույժը: Դժվար չե նկատել վոր սանդուխքով բարձրանալիս աշխատանքը մեծանում է, յերբ հետներդ վորի է ծանրություն եք տանում, որինակ՝ ջրով լի զույլը:

Միայն ծանրություն բարձրացնելը չէ, վոր, ի՞նչպես տում են, ֆիզիկական կամ մեքենական աշխատանք է: Յերբ վայտ եք սղոցում, մեխ եք խփում, հողը փորում եք, հատակ եք սըրում, խոտ եք հարում, ջուր եք մղում, թիավարում եք, հերկում եք և այլն, և այլն, գուք մեքենական աշխատանք եք կատարում: Ի՞նչ ընդհանուր բան ունեն այս բոլոր բազմազան յերես յթները: Ի՞նչու այս բոլորն աշխատանք ենք կոչում:

Ուշագրությամբ զիաելով այդ բոլոր յերես յթները՝ տեսնում ենք, վոր ամեն անգամ մի վորոշ ույժ վորոշ առածության վրա հաղթահարում է վորոշ զիմազրություն: Այսպիսով աւխատանքը ույժի ազդեցությունն է վորոշ համարի յերկարությամբ:

14. Թեթև չԱՐԹՈՒԹՅՈՒՆ. — Դիցուք սայլապան ուզում

և ապրանքի հակը սայլին դնել: Դրա համար, ըստ յերեսութին, հարկավոր և հակն ուղղակի բարձրացնել մինչև սայլը: Բայց հակը շատ ծանր է, սայլապանը դժվարանում է բարձրացնել: Այդ գեղքում նա վերցնում է մի տախտակ, դնում է այնպես, վոր մի ծայրը գետնին լինի, մյուսը՝ սայլի կողին (նկ. 20) և հակը տախտակի վրայով, կամ ինչպես առում են,



Նկ. 20

«Թեր հարթության» վրայով բարձրացնում դնում ե սայլին: Հակը թեր հարթության վրայով շարժելն ավելի հեշտ է, քան ուղղաձիգ վեր բարձրացնելը: Այդպիսի թեր հարթությունը ներկայացնում է ամենապարզ «մեքենան»: Թեր հարթության միջոցով մարդ կարող է այն անել ինչ վոր չի կարող միայն ձեռներով:

Այդպիսի մեքենայով աշխատանքը տնտեսվում է արդյոք թե ընդհակառակն, ավելի յետ աշխատանք ծախսվում, քան առանց այդ մեքենայի: Այս հարցին կարող ենք պատասխանել միայն այն ժամանակ, յերբ ի վրակի կլինենք աշխատանքը չափելու թե մեկ, և թե մյուս գեղքում: Նախքան աշխատանքի չափման անցնելը պետք է պայմանավորվենք, թե ինչ միավոր-

ներով չափենք ույժը, յերկարությունը և աշխատանքի քանակը:

15. ՈՒՅՑԺԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ. — Ամենից ավելի պարզ կը լինի, յեթե ույժը չափենք կշռի միավորներով: որինակ՝ ոռոսական փթերով և գրվանքաներով կամ մետրական քիլոգրամներով և գրամներով:

Չափման համար կարելի յէ բանեցնել զըսպանակավոր կշեռքը (նկ. 21): Յերբ ծանրոցը ներքել կեռից կախում ենք, նրա կշիռը զսպանակը ձգում է, իսկ ցուցիչը շարժվում է մի բանոնի յերկարությամբ, վորի վրա նշանակած բաժանումները ցույց են տալիս ծանրոցի կշիռը (գրվանքաներով կամ քիլոգրամներով):

Ծանրության ույժը միայն գեպի ներքեւ և ազդում, բայց զսպանակավոր կշեռքով կարելի յէ չափել ամեն մի ույժ, ինչ ուղղությամբ ել նա ազդելիս լինի: Ինչպիսի ույժ ել ձգելու լինի կշեռքը, մենք կարող ենք այնպես համարել, վոր ույժը, հավասար է մի փրփի, յերե նա նույնչափ է ձգում զսպանակը, վաշչափ մեկ փութ կենոր:

Նույնը նաև մետրական չափի համար: Աւժը հավասար է մեկ քիլոգրամի, յերե նա նույնչափ է ձգում, վաշչափ մեկ քիլոգրամ կօբաք:

16. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ. — Աշխատանքը ույժի աղկեցությունն է վորոշ ձանապարհի յերկարությամբ, ուստի աշխատանքի միավորը կախված է վոչ միայն ույժի, այլև յերկարության միավորից: Ոռոսական չափերով իբրև աշխատանքի միավոր ընդունվում է այն աշխատանքը, վոր կատարում է մեկ փութ ույժը մեկ վոտնաչափ ճանապարհի վրա: Աշխատանքի այս միավորը կոչվում է փութ-վոտնաչափ:

1 Փութ-վոտնաչափ աշխատանքը հավասար է 1 փութ ույժի աշխատանքին մի վոտնաչափ տարածության վրա:

Նույնպես և մետրական չափով իբրև աշխատանքի միավորը ընդունվում է մեկ քիլոգրամ ույժի աշխատանքը մեկ



մետր ճանապարհի վրա: Աշխատանքի այս միավորը կոչվում է յիլոգրամ-մետր (կամ մետր-յիլոգրամ):

1 յիլոգրամ-մետր հավասար է 1 յիլոգրամ ու յի աշխատանքի 1 մետր տարածության վրա:

Աշխատանքի փոքր քանակները յերբեմն չափում են զրամ-մետրներով կամ գրամ-սանիսիստեմով: Այս միավորների մեծությունները պարզ են նրանց անուններից:

Աշխատանքի քանակը հետեւյալ ձևով են հաշվում:

Դիցուք, որինակ՝ 5 քիլոգրամ ույժը մի վարոշ զիմաղրություն հաղթահարել և 3 մետր ճանապարհի վրա: Դասում ենք այսպիս:

1 քիլոգրամ ույժը 1 մետր ճանապարհի վրա տալիս է 1 քլոր, մ  
5 » » 1 » » » » 5 քլոր, մ  
5 » » 3 » » » » 5 × 3 = 15 քլոր, մ  
5 քլոր, ույժ × 3 մետր = 15 քլոր, մ ետք:

Ուրիշ որինակ՝ 200 գրամ ույժը մի վարոշ զիմաղրություն հաղթահարում է 30 սանտիմետր ճանապարհի վրա: Դատերվ առաջիկ նման ստանում ենք.


200 գր. × 30 սմ = 6000 գրամ-սանտիմետր:

Այսպիսով տեսնում ենք, վար

յիլոգրամ-մետր ե՞ւ 1 քլոր ույժ × 1 մետր: Գրամ-սանիսիստեմ ե՞ւ 1 քր ույժ × 1 սմ: Փուր-ունաշափին ե՞ւ 1 գուր ույժ × 1 գունաչափ:

17. Թեր չմըթութՅԱՆ վրա ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՅԻՔԻ ԶԱՓՈՒԽԾՈՒ. — § 14-ում մենք հարց տվինք թե վար գեպրում և աշխատանքն ավելի՝ յեր հակն ուղղաձիգ ենք բարձրացնում թե յերբ թեր տախտակի վրայով ենք տեղափոխում: այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ չե, վար փորձն անպայման ապրանքի հակի վրա կատարենք, հարցը կարող ենք հետազոտել թեր հարթության մի փոքրիկ մողելի վրա: Դիցուք փորի բարձրությունն է 0,5 մետր, իսկ ԱՕ յերկարությունն է 1 մետր (նկ. 22):

Իբրև ծանրոց վերցնենք 6 քիլոգրամ կշռող մի փայտի կտոր:



Յերբ այդ ծանրոցն ուղղաձիգ բարձրացնում ենք հարթության բարձրության չափ, մեր կատարած աշխատանքը լինում է 6 քլոր. × 0,5 մ. = 3 քլոր. ~մ:

Այժմ այդ ծանրոցը բարձրացնենք թեր հարթության վրայով, վարի համար զիմենք պարանի և զապանակափոր կշեռքի ողնության: Դիցուք շարժման ժամանակ կշեռքը ցույց է տալիս 4 քլոր.: Այն ժամանակ ծանրոցն ԱՕ հարթության վրայով տեղափոխելու աշխատանքը լինում է 4 քլոր. × 1 մ. = 4 քլոր. ~մ: Այս գեղքում 1 քլոր. ~մ. ավելի աշխատանք ստացվեց, քան ուղղաձիգ բարձրացնելիս: Սակայն, թեր հարթության ողնության զիմենք կարող է այսուամենայնից հարմար լինել, վարովհետեւ այս զեպքում ավելի փոքր ույժ և պահանջման մեջ ամենի փոքր ույժով ենք աղջում, բայց դրա փոխարեն ծանրոցն ավելի մեծ տարածություն ենք տեղափոխում:

Աշխատանքի սկալ բանակի համար գործած ավելի փոքր և ույժը, այնտեղ ավելի գեծ և նախապարհը:

18. ՈԳՏԱԿԱՐ ՅԵՎ ԱՆՈԳՈՒՏ ԱՇԽԱՏԱՅԻՔ. — Թեր հարթությամբ ծանրոցը բարձրացնելով մենք կատարեցնենք, կամ, ինչպիս տառում են, ծախսեցինք 4 քլոր. ~մ ետք աշխատանք: Արդյունքն այն յեղափ, վար ծանրոցը 0,5 մետրով բարձրացավ, վար համապատասխանում է 3 քլոր շետքը աշխատանքի: Հետեւաբար, ծախսում 4 քլոր. ~մ ետքից ստացանք միայն 3 քլորովամ-մետք պիտանի, ոգտակար աշխատանք. մնացած 1 քլորովամ-մետք անոնքուս ծախսվեց, նա գործազրվեց այն շփումը հաղթահարելու վրա, վար կա ծանրության և թեր հարթության միջև: Հարթությանը վորեն բան, որինակ՝ սապոնացուր քսելով կարող ենք նպազեցնել շփումը և այդպիսով նաև ծախսում աշխատանքի քանակը, վարը 4 քիլոգրամ-մետքից քիչ լինի, բայց յերբեք չի կարող ավելի փոքրանալ, քան ստացած ոգտակար աշխատանքը, ոգտինքն 3 քիլոգրամ-մետքը: Յեթե մեզ հաջողվեր շփումը կատարելապես վոչնչացնել, ծախսած աշխատանքը ճիշտ հավասար կլիներ ստացածին, այդինքն 3 քլոր. ~մ ետքից:

Օտագած ոգտակար աշխատանքը յերեխ չի կարող ավելի լինել ծախսածից, եզեւական զեպքում, յեր գոյուրյուն չունեն սփումներ:

յեվ զիմագրություններ, սգտակար աշխատանքը հավասար է ծախսածին:

Այսպես ուրեմն, թեք հարթության համար իդեալական դեպքում՝

Սացած աշխատանք=ծախսած աշխատուի:

Վորովին աշխատանքը հավասար է ույժի և ճանապարհի արտադրյալին, ապա ստացած աշխատանքը՝ պետք է հավասար լինի ծանրոցի կշռի և հարթության բարձրության արտադրյալին, իսկ ծախսած աշխատանքը՝ բարձրացնող ույժի և հարթության յերկարության արտադրյալին:

Կերպարագություն=ույժ× յերկարություն:

Այսուղից հետեւմ ե, վոր ծանրոցը թեք հարթությամբ բարձրացնելու համար հարկավոր է ծանրոցի կույց այնին անգամ փոքր ույժ, վորքան անգամ հարթության բարձրությունը փոքր է յերկարությունից: Անհրաժեշտ է հիշել, վոր այս որենքը ճիշտ է միայն այն ժամանակ, յերբ շփում չկա:

Այս դրությունը կոչվում է թեք հարթության ունենություն:

Այս որենքն իմանալով կարող ենք թեք հարթության վերաբերող զանազան խնդիրներ լուծել: Լուծենք, որինակ հետեւյալ խնդիրը. Դիցուք § 14-րդում զետեղված որինակում հակի կշիռը 200 քլգր. ե, սայլի բարձրությունը՝ 1 մետր, իսկ տախտակի յերկարությունը՝ 2,5 մետր: Ուզում ենք իմանալ, թե սայլապանն ինչ ույժով պետք է շարժի հակը թեք տախտակով, յեթե ընդունենք, վոր վոչ մի շփում չկա:

Վերը բերած հավասարության հիման վրա կարող ենք պարզեցնել.

$$200 \text{ քլգր.} \times 1 \text{ մ.} = \text{ույժ} \times 2,5 \text{ մ.}$$

Այսուղից գտնում ենք

$$\text{Ույժ} = \frac{200 \times 1}{2,5} = 80 \text{ քլգր.}$$

Ստացվում է 80 քլգր.-ի հավասար ույժ, այն յենթադրությամբ, վոր շփում չկա: բայց իրավես, շփման հետեւանքով, 80 քլգր.-ից մեծ ույժ է պահանջվում:

Այսպես ուրեմն, թեք հարթության որինակի վրա մենք ծանոթացնենք մի որենքի, վոր, ինչպես կը տեսնենք, ճիշտ է նաև մյուս մեքենաների համար:

Յեթե շփումներ չկան,

Անցած աշխատանք=ծախսած աշխատանք:

Այս դրությունը կոչվում է աշխատանք-ների հավասարության ունենություն:




19. ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆՇԱՐԺ ՃԱԽԱ-

ՐՄԿԻ ՄԻՋՈՑՈՎ. - Ճախարակը մի փոք-  
րիկ անիվ է, վորը կարող է պատվիր  
լամբի վրա հաստատած մի առանցքի  
շուրջը: Յեթե լամբն անշարժ ամբաց-  
րած է կամ, ինչպես 23-րդ նկարում,  
անշարժ հենարանից կախված է, ճա-  
խարակը կոչվում է անշարժ: Այսպիսի  
անշարժ ճախարակը բանեցնում են ույ-  
ժի ազդեցության ուղղությունը փոխելու համար:

Յեթե ճախարակի վրայով պարան է զցած,  
վորի ծայրերից կախված են Պ և Ծ հավասար  
ծանրոցները, ապա հասկանալի յե, վոր ճախարա-  
կը և ծանրոցները հավասարակշռության մեջ կը  
լրնեն: Իրոք, առանցքի յերկու կողմերում ճախա-  
րակի անզի յերկու կեսերը և յերկու հավասար  
ծանրոցները համաչափ են դասավորվում, ուստի  
պատճառ չկա, վոր ճախարակն այս կամ այն կողմը  
պատվի (այսուղի հաշվի չենք առնում պարանի կշիռը, վոր ան-  
շան է):

Ծ ծանրոցը պարանի վրա թողնենք, իսկ Պ ծանրոցը հա-  
նենք և պարանի ճախ ծայրը զապանակավոր կշիռով ձգենք  
(նկ. 24): Ծ ծանրոցը կսկսի բարձրանալ: Դիցուք Ծ ծանրոցի  
կշիռն 90 քլգր. է, և նա 1 մետր բարձրացավ: Այս դեպքում  
բարձրացման աշխատանքը կը լինի 90 քլգր.-մ: Այն ույժը,  
վորով այս զետեղում պետք է ձգենք պարանի մյուս ծայրը,  
անպայման մեծ կլինի 90 քլլուղբամից: Դիցուք այդ ույժը 100  
քլլուղբամ է: Մեր ձեռքի անցած ճախարակը պետք է հավա-  
սար լինի Ծ ծանրոցի անցած ճախարակին, այսինքն 1 մետ-  
րի. կնշանակի՝ մեր ճախատ աշխատանքը հավասար կլի-  
նի 100 քլլուղբամ-մետրի:



նկ. 23

նկ. 24

Ինչպես թեք հարթության գեղքումն եր, այստեղ ևս աշխատանքի մի մասն անողուա և ծախովում: Մեր որինակում աշխատանքի այս անողուա մասը 10 քիլոգրամ մետր և և ծախովում և ծախարակի առանցքի շփումն ու պարանի «կոշտությունը» հաղթահարելու վրա: Յեթե առանցքը լավ յուղի և ավելի ճկուն պարան բանեցվի, անողուա աշխատանքն դգալիորեն կպակասի: Ինչպես թեք հարթության գեաքումն եր, այստեղ ևս, յեթե այսպես կոչված «փաստակար զիմադրություններ» բնավ չկան, անողուա աշխատանք ամենենին չի ստացվում, ուստի և ծախսած աշխատանքը դառնում և ստացածին հավասար:

**Ծախսած աշխատանք=ստացած աշխատանք:**

Չեորի ույժ $\times$ ձեռքի ճանապարհ=ծանրոցի կշիռ $\times$ ծանրոցի ճանապարհ:

20. ԱՐԳԱՎՈՐԻՔ. Անշարժ ճախարակի համար վերը բերած որինակի մեջ ծախսվեց 100 քլգր.-մ աշխատանք, բայց ստացվեց 90 քլգր.-մետր. Կնշանակի՝ այդ գեղքում սպատակար աշխատանքի փոխվեց ծախսած աշխատանքի 0,9 մասը կամ  $90^{\text{m}}/\text{o}$  լր:

Ոգտակար աշխատանքի բանակի հարաբերությունը ճախսած աշխատանքի բանակին կոչվում և արգասիք:

**Ստացած աշխատանք**=**Արգասիք**,  
**Ծախսած աշխատանք**=**Թեզասիք**.

Վարովինեալ ամեն մի մեքենայի համար իրավես ստացած աշխատանքը ծախսածից միշտ պակաս և լինում, ապա և արդարիք 1-ից միշտ փոքր և լինում: Արգասիքը տոկոսով արտահայտելու համար պետք և արգասիքն արտահայտող կոստրակը 100-ով բազմապատճեր: Տոկոսով արտահայտված արգասիքը միշտ փոքր և լինում  $100^{\text{m}}/\text{o}$ -ից:

Արգասիքի մեծությունը մեքենայի ամենազլիսավոր հատկություններից մեկն է: Մեքենան աշխատում են այնպես շինել վոր նրա արգասիքը վորքան կարելի յեւ մեծ լինի: Դրա համար աշխատում են մեքենայի մեջ զանազան փաստակար զիմադրությունները նվազեցնել, վորպեսզի անողուա աշխատանքը պահպան պահպանի:

Վորքան ավելի մեծ և արգասիքը, անտեսական տեսակերպ այնքան ավելի լավ և մեքենան,—ուստի ամեն մի զյուտ, վորի միջոցով հարացվոր և արգասիքը մեծացնել, նըպաստում և արտադրության զարգացման:

21. ՇԱՐԺԱՐԾԻՆ ՃԱԽԱՐԱԿԻ. — Անշարժ ճախարակի մեզ հարացրություն և տալիս ույժի ուղղությունը փոխելու, բայց հարացրություն չի տալիս փոքր ույժով մեծ դիմացրությունը հաղթահարելու, ինչպես այդ անում ենք թեք հարթության միջոցով: Այս իրագործելու համար կարող ենք բանեցնել կամ շարժուն ճախարակի, կամ շարժուն և անշարժ ճախարակների միացումը:

25-րդ նկարում պատկերացրած և անշարժ ճախարակի միացումը շարժունին, վորի լումբից կախած և (Q ծանրոցը: Ամենից առաջ նկատենք, վոր (Q ծանրոցը կրող ճախարակը կախված և պարանի յերկու մտաերից. այնպես վոր յեթե պարանի P աղատ ծայրն իջեցնենք վորի տարածությամբ, որինակ՝ 1 մետր, ապա (Q ծանրոցը կրածրանա միայն այդ տարածության կեսի չափ, այսինքն  $\frac{1}{2}$  մետր, վոր հեշտ և նկատել փորձով:

Դիցուք (Q ծանրոցը կշռում և 80 քլգր.: Ակսենը պարանի P ծայրը միորինակ ձգել զապանակավոր կշեռքով. դիցուք վերջինու ցույց և տալիս, վոր մենք 50 քլգր.-ի ույժով ենք ձգում: Այս գեպըում, պարանի ծայրը 1 մետր տեղափոխելով՝ մենք ծախսած կլինենք մի աշխատանք, վորը հավասար և 50 քլգր. $\times$ 1մ.=50 քլգր.-մ., իսկ ստացած աշխատանքը կլինի՝  $80 \text{ քլգր.} \times \frac{1}{2} \text{ մ.}=40 \text{ քլգր.-մ.}$

Այսպիսով գորս և զալիս, վոր 50 քիլոգրամ ույժով մենք բարձրացնում ենք 80 քիլոգրամ կշռող ծանրոցը, սակայն այդ գեղքում 10 քիլոգրամ.-մետր ավելի յենք աշխատանք ծախսում, քան յեթե ծանրոցն առանց ճախարակի բարձրացնելինք: Ինչպես վոր թեք հարթության և անշարժ ճախարակի զեպքումն եր, այստեղ ևս ավելարդ 10 քիլոգրամ.-մետրը զնում և շփումը և պարանի կրշտությունը հաղթահարելու, իսկ ներկա զեպքումն նուև շարժուն ճախարակը բարձրացնելու վրա:

Գնդավոր առանցակալներ ունեցաղ ձախարակ բանեցնելով, շարժուն ձախարակը հնարավորության չափ թիթեացնելով և մյուս վնասակար դիմադրությունները թուլացնելով՝ կարող ենք անողուտ աշխատանքը դպալի կերպով նվազեցնել. իսկ իդեալական դեպքում, ինչպես թեք հարթության և անշարժ ձախարակի համար, ստանում ենք՝

ծախսած աշխատանք=ստացած աշխատանք:

Ույժ×ույժի ճանապարհ=ծանրոցի կշիռ×ծանրոցի ճանապարհ:

22. ՃԱԽԱՐԱԿԻ ՄԻՋԱՑՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՈՒՅԹԻ ՀԱՅ-  
ՎՈՒՄԸ. — Լուծենք մի ոյսպիսի խնդիր. կարող ե 75 քլպր.  
կշուղ մարդը շարժուն ձախարակի ողնությամբ (նկ. 25) 120  
քլպր. կշուղ ծանրոցը բարձրացնել:

Յենթագրենք հարկավոր և ծանրոցը բարձրացնել 1 մետր:  
Այն ժամանակ պարանի աղատ ծայրը սկիաք և տեղափո-  
խել 2 մետր. Աշխատանքների հավասարության որենքի հիման  
վրա կարող ենք դրել՝

Ույժ×2 մետր=120 քլպր.×1 մետր, վորտեղից ստա-  
նում ենք՝

$$\text{Ույժ} = \frac{120 \times 1}{2} = 60 \text{ քլպր.}$$

Այսպիսով դուքս և գալխ, վոր ծանրոցը բարձրացնելու  
համար հարկավոր ե 60 քլպր. ույժ, և հետեաբար, 75 քլպր  
կշուղ մարդը կարող է այդ ծանրոցը բարձրացնել: Այս որի-  
նակում ծանրոցը կախված եր յերկու պարանից և բառ այդու  
ծանրոցի կշուղ յերկու անդամ վորքը ույժ պահանջվեց, կամ  
ինչպես ասում են, ույժի մեջ 2 անգամ վաստակեցինք:

Մեծ ծանրություններ բարձրացնելու համար շինուած են  
միքանի շարժուն և մի քանի անշարժ ձախարակների միա-  
վորություններ, վորոնք կոչվում են բազմանախարակ կամ  
խառն բազմանախարակ (նկ. 26). Բազմանախարակի մի-  
ջնակ ույժի մեջ այնքան անգամ ենք վաստակում, վորքան  
այն պարաների բիլն ե, վորոնց վրա կախված ե բարձ-  
րացվելի ծանրոցը.




Նկ. 26

26. Ոդ նկարում պատկերացրած բազմանախարակը բանեցնելով՝ ույժի մեջ 6 անգամ ենք վաստակում, բայց զրա փոխարեն պարանի աղատ ծայրը սկիաք և 6 անգամ ավելի տարածություն իջեցնենք, քան ծանրոցի բարձրացման տարածությունն ե:

Այսպիսով բազմանախարակի համար ևս ույժի մեջ և մնում նկ. 25 աշխատանքների հավասարության որենքը:

23. ՀԱՎԱՍԱՐԱԲԱՅՈՒԿԻ ԼԾԱԿ. — Իբրև լը-  
ծակի որինակներ կարող են ծառայել՝ կշեռքը, նավագարի թին, ընկույզկոտրիչը և այլն: Ամեն մի փայտ, ամեն մի ձող, վորը վորեւ տեղում հենարան ունի և վորը բանեցնում ենք ույժի ազդեցությունը հաղորդելու համար, լծակ ե:

Դիտենք այս լծակը, վոր բաբանն (արանգին, ալնգողին, նկ. 27) և ներկայացնում. Տախտակը հենարանին և զրվում իր միջին մասով այնպես, վոր նրա ծանրության կենդրոնը գտնը-  
վում և հենարանի ուղիղ վերկը, և տախտակի յերկու կեսերն իրար հավասարակշուղ են: Այս պատճառով մենք կարող ենք  
բնավ ի նկատի չառնել տախ-  
տակի կշիռը: Բացի սրանից,  
ճոճումների ժամանակ տախ-  
տակը շատ քիչ և շփում հե-  
նարանին, այնպես վոր կարող  
ենք անուշաղիր թողնել նաև  
այդ շփման ույժը:



Նկ. 27

Եերկակայենք, վոր հենարանի յերկու կողմում նրանից

հավասար հեռավորությունների վրա տախտակին նստած են յերկու տղա, վորոնք միևնույն կշիռն ունին: Այն ժամանակ տախտակը պետք է հավասարակշռության մեջ լինի, չտառանավի վոչ այս և վոչ այն կողմը, վորովհետեւ յերկու կողմից աղդող ույժերը հավասար են և միանգամայն համաչափ դասավորված: Տախտակը հավասարակշռության մեջ կը լինի ճիշտ այնպես, ինչպես վոր կշեռքի լծակն և հավասարակշռության մեջ լինում, յերբ յերկու նժարների ծանրությունները հավասար են (նկ. 28):


Այժմ պատկերացնենք, վոր տախտակը փոքր ինչ թեքվում է. այն ժամանակ տղաներից մեկը քիչ կը ցածանա, մյուսը կը բարձրանա: Վորովհետեւ յերեխաները հենարանից հավասար հեռավորությունների վրա յեն նստած, ապա յերկրորդ տղան ճիշտ այնքան կը բարձրանա, վորքան առաջինն իջել է:

Յերեխաների կշիռը նույնն է, և հավասար չափով են տեղափոխվել, կը նշանակի՝ նրանց տեղափոխման աշխատանքները նույնպես հավասար են:

$1\text{-ինի } \text{կշիռ} \times 1\text{-ինի } \text{ճանապարհ} = 2\text{-րդի } \text{կշիռ} \times 2\text{-րդի } \text{ճանապարհ}$

Ուրեմն այս դեպքն ևս յենթարկվում է աշխատանքների հավասարության ունենալիքին:

24. 1-ԻՆ ՏԵՍԱԿԻ ԱՆՀԱՎԱՍԱՐԱԲԱԶՈՒԿ. — Յեթե բարանին (նկ. 29) մի կողմից մի տղա նստի, մյուս կողմից յերկուար, բոլորն ել հավասար ծանրության, ապա տախտակն այն ժամանակ կը հավասարակշռվի, յերբ մենակ նստածը հենարանից 2 անգամ հեռու լինի, քան մյուս յերկուար: Այս դեպքում, յեթե տախտակը քիչ թեքվի, մի կողմում նստած յերկու տղաները յերկու անգամ քիչ կը բարձրանան, քան մեկը կիշնի:



նկ. 28 ԿՇԵՐՔ




նկ. 29

Նույնպես ել յերբ մարդ նիզի ոգնությամբ քարը բարձրացնում է (նկ. 30), վորքը ույժը հաղթ սհարում է մեծը, վորովհետեւ այն ույժը, վորով մարդը ճշգում է նիզի կոթը, շատ ավելի փոքր է, քան այն, վոր պահանջվում է քարն ուղղակի ձեռներով բարձրացնելու համար: Յենթարկենք, վոր քարը բարձրացնելու համար հարկավոր է 180 քլգր. ույժ: Հաշվենք, թե ինչ ույժ պիտի գործադրի մարդը: Դիցուք ամբողջ նիզի յերկարությունը (նկ. 31) 150 սմ. է, նրա մի բազուկը՝ անհակետից մինչև օ կոթը, վորի վրա ազդում է ձեռքը, 125 սմ., իսկ մյուս բազուկը՝ անհակետից մինչև քարին դեմ տված ծայրը, 25 սմ.: Այսպիսով մի բազուկը մյուսից 5 անգամ յերկար է:



նկ. 30. Առաջին տեսակի լծակ.



նկ. 31.

Դիցուք ձեռքը նիզի կոթն ուղղաձիգ իջեցրեց ու տարածությամբ, այն ժամանակ նիզի մյուս ծայրն ուղղաձիգ կը տեղափոխվի ԾՅ տարածությամբ:

Աշխատանքների հավասարության որենքի հիման վրա՝  
 $Ույժը \times նրա ճանապարհը = քարի զիմաղրությունը \times նրա ճանապարհը$

$$f \times ce = 180 \times db$$

$$\frac{f}{180} = \frac{db}{ce}$$

Այստեղից յերկում է, վոր  $f$  ույժը պետք է այնքան անգամ փոքր լինի 180 կիլոգրամից, վորքան անգամ ԾՅ ճանապարհը փոքր է ույժը: աս և զան յեռանկյունների նմանությու-

նից պարզ է, վոր մենք այնպես եւ հարաբերում օօ-ին, ինչպես անդուկը առ բաղուկին։ Հետևաբար,  $f = 180$  քիլոգրամից այնքան անգամ պետք է փոքր լինի, վորքան անգամ առ բաղուկը փոքր է առ բաղուկից, այսինքն 5 անգամ։

$$f = \frac{180}{5} \text{քլգր.} = 36 \text{ քլգր.}$$

Այս լծակի որինակից կարող ենք տեսնել, վոր մեքենայի ողնությամբ մենք ի վիճակի չենք կատարած աշխատանքը մեծացնելու. ընդհակառակն, աշխատանքի վորոշ քանակ կորչում է շփումը հաղթահարելու համար. բայց մենք կարող ենք ըստ մեր ցանկության փոփոխել աշխատանքը բաղկացնող բազմապատկիչները՝ ույժը և ճանապարհը, Յեթե ցանկանում ենք ույժի մեջ վաստակել, այսինքն մի քանի անգամ ավելի մեծ ույժ ստանալ, կորցնում ենք ճանապարհի մեջ՝ ստանում ենք նույն քան անգամ փոքր ճանապարհ, և ընդհակառակն, կորցնելով ույժի մեջ՝ կարող ենք նույնքան անգամ վաստակել ճանապարհի մեջ։

Լծակի որենից սովորաբար հետեւալ յերկու ձեերից մեկով են արտահայտում. կամ ասում են՝ լծակի միջոցով ույժի մեջ վաստակում ենք այնքան անգամ, վորքան անգամ կորցնում ենք նաև նաև անգամարի մեջ, կամ ասում են՝ ույժերը հակադարձ համեմատական են լծակի բազուկների յերկարություններին։

Դժվար չե տեսնել, վոր թե՛ մեկ և թե՛ մյուս յեղանակը հանդում եւ աշխատանքների հավասարության որենքին։

**25. 2-րդ ՏԵՍԱԿԻ ԼԾԱԿ.**—Նիզը կարելի յեւ բանեցնել իբրև լծակ նաև այնպես, ինչպես պատկերացրած եւ 32-րդ նկարում։ Այսուեղ հենակեաը գտնվում է լծակի ծայրին, մի ույժը (ձեռքի ույժը) ազդում է կոթի վրա, իսկ մյուս ույժը (քարի դիմադրության ույժը) լծակի միջին կետերից մեկի վրա։ Շատ ուրծիքներ այս տեսակի լծակ են ներկայացնում, որինակ՝ ընկույզկոտրիչը կամ մետաղահատ մկրատը. դրանք կոչվում են 2-րդ տեսակի լծակներ։

Այսուեղ ևս հաշիվ այնպես եւ կատարվում, ինչպես առա-

ջին տեսակի լծակի համար. Դիցուք նիզի ամբողջ յերկարությունը դարձյալ 150

սմ. եւ, և քարը նիզի վրա հենվում է 180 քիլոգրամից անգամ առ բաղուկը փոքր է առ բաղուկից, այսինքն 5 անգամ։

**Այս լծակի որինակից կարող ենք տեսնել, վոր մեքենայի ողնությամբ մենք ի վիճակի չենք կատարած աշխատանքը մեծացնելու. ընդհակառակն, աշխատանքի վորոշ քանակ կորչում է շփումը հաղթահարելու համար. բայց մենք կարող ենք ըստ մեր ցանկության փոփոխել աշխատանքը բաղկացնող բազմապատկիչները՝ ույժը և ճանապարհը, Յեթե ցանկանում ենք ույժի մեջ վաստակել, այսինքն մեր որինակում 6 անգամ։**

**Աշխատանքների հավասարության որենքի հիման վրա՝**



Ույժը  $\times$  նրա ճանապարհը = դիմադրությունը  $\times$  նրա ճանապարհը։  
 $f \times 6 = 180 \times 1,$

**Գորտեղից**

$$f = \frac{180}{6} = 30 \text{ քլգր.}$$

**Տեսնում ենք, վոր 2-րդ տեսակի լծակի համար հաշիվը նույն ձեռվ եւ կատարվում, ինչպես 1-ին տեսակի լծակի համար։ Այս յերկու տեսակի լծակների տարբերությունը միայն այն է, վոր 1-ին տեսակի լծակի գեղքը ույժերն ազդում են հենակետի տարբեր կողմերից, իսկ 2-րդ տեսակի լծակի գեղքը ույժում միևնույն կողմից։**

**26. ՄԵՐԵՆԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ.**—Թեք հարթության, ճախարակների և լծակների որինակներում տեսանք, վոր աշխատանքների հավասարության որենքն իրավացի յեւ։ Այդ որենքը՝ ծախսած աշխատանիք=սացած աշխատանիք, իրավացի յեւ նաև այլ իդեալական մեքենաների համար. Բազմազան մեքենաների




Ակ. 33.

վրա մենք կարող ենք տեսնել, վոր մեքենայի մի ծայրում մի վորոշ ույժ աշխատանք է կատարում, իսկ մյուս ծայրում տեղի յե ունենում մի վորոշ զիմագրություն հաղթահարելու աշխատանքը: Իդեալական գեպքում, յերբ մեքենայի մեջ վոչ մի վասակար զիմագրություն չկա, ույժը նույնական է:

Իրականում ամեն մեքենայի մեջ վասակար զիմագրություններ գոյություն ունին, ուստի և ծախսած աշխատանքի մի մասը կորչում է, այսինքն ծախսած աշխատանքն ավելի յի, քան ստացած աշխատանքը:

Ույժ × նրա նախապարհը մեծ է, քան զիմագրություն × նրա նախապարհը:

27. ԼԾԱԿԻ ՀԵՆՍՐԱՆԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՈՒՅԹԸ.—Լծակի հենարանի վրա ազդող ույժի մեծությունն իմանալու համար վերցնենք, որինակ՝ բարանը, վոր վերը քննեցինք (նկ. 27): Այս գեպքում պարզ է, վոր հենարանը ճնշող ույժը պետք է հավասար լինի տղաների կշռի և տախտակի կշռի զումարին: Մինչդեռ այս գումարը գեպի ներքեւ է ձգում և ճնշում հենարանը, վերջինս ել իր հերթին նույն ույժով պետք է տախտակը զեպի վեր ճնշի: Յեթե տղաների և տախտակի կշռը հենարանի զիմագրությունից մեծ լիներ, տախտակը պետք է իջներ: Յեվ ընդհակառակն, յեթե հենարանի զիմագրությունը մեծ լիներ տղաների և տախտակի կշռների զումարից, տախտակը վեր կը բարձրանար:




նկ. 34. Վերին ույժը հավասարական և ստորիններին:

շարժման վայրկյանին կշռներն այլ կշռու ցույց կը տա:

Այսպես ուրեմն, յեթե պինդ մարմինն անշարժ է, ապա նրա վրա դեպի մեկ կողմին ազդող ույժերի գումարը հավասար է դեպի հակադիր կողմին ազդող ույժերի գումարին:

28. ՎՈԼՈՐՍՆ.—Վոլորան կոչված մերենան բաղկացած է մեծ շառավիղ ունեցող մի անվից, վոր ամուր հաստատած է փոքր շառավիղ ունեցող գլանի վրա և վերջը նետ միասին պտավում է մի ընդհանուր առանցքի շուրջը (նկ. 35, 35ա): Վոլորանը բանեցնում են, որինակ՝ ջրհորից ջուր հանելու համար: Անվին փաթաթած լի պարանի կամ նրա վրա հաստատած կոթի միջոցով անիվը պտավում են, այդ ժամանակ գլանն ել և պտավում: այն պարանը, վորից կախած է դույլը, փաթաթվում է զլանին և գույլը բարձրանում է: Անիվը ու զլանը մի անգամ պտավող ույժի ճանապարհը հավասար է անվի շրջապատին, իսկ զիմագրության ույժի, այսինքն գույլի կշռի, ճանապարհը հավասար է զլանի շրջապատին: Այստեղից կարող ենք յեզրակացնել, վոր ազդող ույժն այնքան անգամ է փոքր դույլի կշռից, վորքան անգամ շրջապատն անվի շրջապատից:




նկ. 35ա. Վոլորան հետեւյալ հավասարությունը.

Ույժ × ճանապարհ = զիմագրություն × ճանապարհ:

Ույժ × 2 π × 50 = 40 × 2 π × 10, վորտեղից


$$\text{Ույժ} = 8 \text{ քլզը.}$$



նկ. 35


Նույն խնդիրը կարող ենք լուծել նաև հետեւյալ ձևով: Առիջն ու գլանը կարող ենք դիտել վրապես 1-ին տեսակի լծակ, վրի հենակետը գտնվում է զ ընդհանուր առանցքի վրա, իսկ բազուկները հավասար են անվի աՅ շառավղին և զլանի աՅ շառավղին: Լծակի որենքի հիման վրա՝  
 $\text{ույժ} \times \text{զ} = \text{բազուկ} = \text{դույլի} \cdot \text{կշիռ} \times \text{այ բազուկ}$   
 $\text{ույժ} \times 50 = 40 \times 10$   
 $\text{ույժ} = 8 \text{ քիլոգրամ}.$

Այսպիսով՝ վոլորանի համար ույժը կարելի յէ հաշվել լծակի ուենի հիման վրա:



նկ. 35 բ.

ՄՈՄԵՆՏ. — Ուշադրություն դարձնելով բարձրացող դույլի շարժմանը (§ 28), կամ թեք հարթությամբ բարձրացող մարմնի շարժմանը (§ 14), տեսնում ենք, վոր այդ մարմիններն ամբողջովին մի ուղղությամբ են շարժվում, այնպես վոր մարմինի յուրաքանչյուր կետը նույնպիսի ճանապարհ է գըծում, ինչպիսին և նրա ամեն մի այլ կետը: Այսպիսի շարժումը կ'ըշտում է փոխադրական:



նկ. 35 գ.

Այլ տեսակի շարժումներ են պտտվող լծակի և պտտվող վոլորանի շարժումները: Վոչ լծակը և վոչ ել վոլորանն ամբողջովին չեն տեղափոխվում, այլ միայն պտտվում են առաջինը հետակետի, յերկրորդը տանցքի շուրջը, և այդ ժամանակ մարմնի տարբեր կետերը տարբեր շարժում են ունենում: Այսպիսի շարժումը կոչվում է պտտական շարժում:

Ցեթե մի մարմնի վրա, վորը կարող է առանցքի շուրջը պտավել, վորեւ ույժ և ազդում, ապա առանցքի և ույժի ուղղության ուղղահայաց հեռավորությունը կը չփում է ույժի բազուկ: Բազուկ բառն այսպես սահմանելով մենք պետք է հիշենք, վոր լծակի նկատմամբ հենարանի և ույժի հեռավորությունը միայն այն ժամանակ կը լինի այդ ույժի բազուկը, յերբ ույժն ուղղահայաց է լծակի ձողին:

Լծակների և վոլորանի որինակների վրա մենք տեսնում ենք, վոր հավասարակշռությունն ստացվում է, յերբ

$\cdot \text{ույժ} \times \text{նրա բազուկ} = \text{դիմագրություն} \times \text{նրա բազուկ}:$

Այստեղից յերեսում է, վոր ույժ  $\times$  բազուկ  $=$  արտադրյալը շատ կարևոր դեր է խաղում պտտական շարժումն ուսումնասիրելիս: Այս պատճառով այդ արտադրյալն առանձին անուն ունի և կոչվում է ույժի մոմենտ (միտաչափ):

Ույժի մոմենտը  $=$  ույժ  $\times$  բազուկ:


30. ՄՈՄԵՆՏՆԵՐԻ ՈՐԵՆՔԸ. Մարմինը կարող է պտրտվել դեպի աջ և դեպի ձախ, կամ, ինչպես ասում են, «ժամանուցի սլաքով» և «ժամացուցի սլաքին հակառակ»: Վորպեսզի մարմինը հավասարակշռութան մեջ լինի, բավական չե, վոր նրա վրա ազդող ույժերի մոմենտները մեծությամբ իրար հավասար լինին, այլ անհրաժեշտ է նաև, վոր ույժերից մեկը մարմինը դեպի մի կողմ պտտի, իսկ մյուսը դեպի մյուս կողմ:

Այսպիսով՝ առանցքի շուրջը պտտվող մարմնի հավասարության համար անհրաժեշտ է, վոր մարմինը դեպի աջ պտտող ույժի մոմենտը հավասար լինի մարմինը դեպի ձախ պտտող ույժի մոմենտին:

Այս դրությունը կոչվում է մոմենտների ուենի:


31. ՊՏՈՒԺԱԿ.—Վերը դիտած մեքենաները չեն կարող գործածվել շատ մեծ ծանրություններ բարձրացնելու համար: Իրոք, յեթե պտահանջվում է բարձրացնել, որինակ՝ վազոնը կամ շոգեկառքը, ապա շատ անհրաժեշտ է, նույնիսկ ուղղակի անհարին, բանեցնել թեք հարթությունը, ճախարակները կամ լծակը:

Այդպիսի աշխատանքներ կատարելու կարիքը դեռ հին ժամանակներում առաջ ե բերել պտուտակի գյուղաը: 36-րդ նկարում պատկերացրած ե այսպես կոչված դամկրատը (պտուտակակոր բառնալիքը) վորը, պտուտակի ողնությամբ, բանեցնում են մեծ ծանրություններ բարձրացնելու համար: Պտուտակը,



նկ. 36. Դամկրատ.

վորը դամկրատի ամենազլիավոր մասն ե, բաղկացած ե մի զլանային ձողից, վորի վրայով անցնող ակոսը պտուտաներ գործելով հավասարաչափ բարձրանում ե: Նույն տեսակ ակոս վորված ե նաև դամկրատի յերկաթյա հիմքի ներսը, վորը մայր պտուտակի



նկ. 37.

գեր ե կատարում: 37-րդ նկարը, վորուեղ պտուտակի ներքեի մասում ակոսների միջև գտնվող ցցված պարույրը դեպի կողմ ե տարված, ոգնում է իմանալու, վոր պտուտակը կարելի ե դիտել վորպես գլանի վրա վիաթաթած թեք հարթություն:

Մի պտույտ գործելիս պտուտակը տեղափոխվում ե դեպի վեր կամ դեպի ներքեւ յերկու հարեան ակոսների, կամ «պարույրների» («թելերի») հեռավորությամբ: Այդ տարածությունը կոչվում ե պտուտակի բայլ:

Դիցուք պտուտակի գլխին դրված ե 2 տոնն, այսինքն 2000 քլգր. քեռ, և պտուտակի քայլն ե 5 սմ. = 0,05 մետր: Այն ժամանակ պտուտակի մի պտույտի ժամանակ 2000 քլգր. քեռը կը բարձրանա 0,05 մետր, այսինքն կատարված աշխատանքը կը լինի  $2000 \times 0,05 = 100$  քլգր.-մ.՝ Պտուտակը պտը համար նրա վերեկի մասում վորած անցքում դրվում ե

մի ձող, վոր ազգում ե վորպես լծակ: Յեթե ձողը յերկար ե, այն ժամանակ շատ փոքր ույժով կարելի յե շատ մեծ ծանրություններ բարձրացնել: Դիցուք, որինակ՝ այն պտուտակը, վորի վրա դրված ե 2000 քլգրամ, պտուտմ ենք 1 մետր յերկարության լծակով: Այդ դեպքում պտուտակի մի պտույտի ժամանակ լծակի ծայրի վրա ազգող ձեռքը կանցնի  $2\pi \times 1 = 6,28$  մետր ճանապարհ, իսկ բեռը կը բարձրանա 0,05 մետր: Իդեալական դեպքի համար, յերբ շփումն անտեսում ենք, աշխատանունը ըստ իրի հավասարության որևէնքի հիման վրա կունենանք.

$$\text{Ույժը} \times 6,28 \text{ մ.} = 2000 \text{ քլգր.} \times 0,05 \text{ մ}$$

$$\text{Ույժը} = \frac{100}{6,28} = \text{մոտ } 16 \text{ քլգր.}$$


Իրապես շփման հետևանքով շատ ավելի մեծ ույժ ե հարկավոր:

Պտուտակը գործածվում ե բազմաթիվ այլ և այլ մեքենաների մեջ, յերբ հարկավոր ե փոքր ույժի միջոցով մեծ ծանրություններ բարձրացնել կամ մեծ ճնշումներ առաջացնել:

**32. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.** — Ամեն վոք գիտե, վոր ձեռնասանակով բարձր սարից իշնելով՝ մենք կարող ենք վոքը սարը բարձրանալ: Ճիշտ այդպես ել հեծանվով մեծ բլրից իշնելով՝ մենք կարող ենք առանց վուներով աշխատելու մյուս բլրի մի վորոշ մասը բարձրանալ: Սարը բարձրանալու վրա աշխատանք ծախսելով՝ մենք կարծես այդ աշխատանքն ամբարում ենք և հետո այդ պաշարի մի մասն ոգտագործում նորից բարձրանալու համար: Դիտենք ձլորդի ընկնող յերեխայի շարժումները: Այս որինակը շատ հարմար ե, վորովհետև շփման ազգեցությունն այստեղ աննշան ե: Յերբ ձլորդը հեռացնում են հավասարակշռության դիրքից, յերեխայի ծանրության կենդրոնը վորոշ չափով բարձրանում ե, և հետևաբար, աշխատանք ե կատարվում: Յերբ ձլորդը բաց են թողնում, յերեխան անցնում ե հավասարակշռության դիրքով և հեռանում ե դեպի մյուս կողմն այնպես, վոր նրա ծանրության կենդրոնը նորից բարձրանում ե գրեթե նույնքան, վորքան առաջ, և հետևաբար, գրեթե առաջին աշխատանքին հավասար աշխատանք ե կատարվում:

Այս յերկույթը հետազոտելու համար պետք է այնպես առել, վոր շփումը հնարավորության չափ քիչ լինի: Դրա համար կարելի յէ կը կնել այն փորձը, վոր առաջին անգամ կատարեց իտալացի մեծ ֆիզիկոս Գալիլեյը (1564-1643):

Ծինենք մի մեծ ճոճանակ, վորի համար պատին խփած մեխից կախենք բարակ թելի ծայրին կապած մի ծանր գնդակ:



Նկ. 38. Գալիլեյի ճոճանակը.

Կամ պատկերացնի ճոճավորի մեջնող որ հորիզոնական ուղիղը: Յեթե ճոճանակը հավասարակշռության դիրքից այնքան հեռացնենք, վոր գնդակի ծանրության կենդրոնը հասնի ու հորիզոնականին, ապա գնդակի բարձրացման աշխատանքը հավասար կը լինի գնդակի կշռին՝ բարձրությամբ:

Յերբ գնդակն իջնում է, նա անցնում է և կետով և նորից բարձրանում գրեթե մինչև ու հորիզոնականը: Յեթե ի կամ և կետում պատին մեխ խփելինք, վոր արգելեր ճոճանակի թելի վերին մասի շարժումը, ապա գնդակը կը բարձրանար մի, համապատասխանաբար ու աղեղով վորն այլ ձև ունի, քան այն աղեղը, վորով գնդակն իջնում եր: Զնայած ճանապարհի ձեմ այս փոփոխման, գնդակն առաջվա նման բարձրանում է մինչև ու հորիզոնականը և յերբեք ավելի բարձր չի գնում: Գնդակի բարձրացման ժամանակ ստացվող աշխատանքը հավասար է նրա կշռին՝ բարձրապատկած ու բարձրությամբ: Գնդակի բարձրացման ու տարածությունը յերբեք մեծ չի լինում այն ու բարձրությունից, վորից գնդակն ընկնում է: Այն աշխատանքը, վոր ճանրության ույժը կատարում է գնդակն

իջնելիս, գրեթե ամբողջովին վերստացվում է գնդակը բարձրանալիս:

Այսպիսով հանգում ենք հետեւյալ յեղակացություններին:

1. Միայն ծանրության ույժի ազգեցությամբ մարմնի ծանրության կենդրոնը յերբեք չի կարող ավելի վեր բարձրանալ, քան այն մակարգական վեճինում է:

2. Ծանրության ույժի կատարած աշխատանքը կամ, ընդհակառակն, ծանրության ույժի զեմ կատարած աշխատանքը կախված չէ այն հանապարհից, վորով մարմնինը շարժվում է, յեզ հավասար և մարմնի կողին՝ բազմապատկած մակարգական տարբերությամբ:

3. Խրապես սացած աշխատանքը յերբեք ծախսածից ավելի չի լինում:

4. Իդեալական զեպքում՝

**Սացած աշխատանք = ծախսած աշխատանք:**

33. **ՄՇՏԱՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՆ.**— Յերկար դարերի ընթացքում շատերն աշխատել են, այժմ ել յերբեմն աշխատում են, շինել մշտաշարժ մեքենա (perpetuum mobile), այսինքն այնպիսի մեքենա, վորը շարժվիր և կարողանար աշխատանք կատարել առանց վորիե տեղից աշխատանք ստանալու: Հազարավոր փորձեր են յեղել այդպիսի մեքենա կառուցանելու, բայց այդ փորձերից և վոչ մեկը հաջողությամբ չի սլաքվել: Յերբեք վոչվոքի չի հաջողվել այնպիսի մեքենա շինել. վորի միջոցով ավելի աշխատանք ստացվեր, քան ծախսվում է: «Իդեալական զեպքում» ստացած աշխատանքը հավասար է ծախսածին», այս որենքը, ձշավում է բնության բոլոր ույժերի համար: Վոչ մի յեղանակով «վոչնչից» չի կարելի աշխատանք ստեղծել: Այս նույն միտքը հաճախ արտահայտում են հետեւյալ բառերով.

**«ՄՇՏԱՇԱՐԺ մեքենա չի կարող լինել»:**

**ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

1. Աշխատանք = ույժ  $\times$  ճանապարհ:

2. Աշխատանքը չափելիս պետք է ույժը և ճանապարհն արտահայտել միևնույն սիստեմի միավորներով:

3. Աշխատանքի միավորներն են՝ քիլոգրամ-մետր, պատմանական մետր, փութ-փունաչափ և այլն:

4. Մեքենաները հնարավորություն են տալիս մեծ ճանա-

պարհի վրա փոքր ույժ բանեցնելով հաղթահարել փոքր ճանապարհի վրա մեծ դիմադրությունը կամ ընդհակառակն:

5. Իրական մեքենաների համար՝ ստացած աշխատանքը միշտ փոքր է ծախսածից:

6. Իդեալական մեքենաների մեջ՝

Ստացած աշխատանք = ծախսած աշխատանք:  
(Աշխատանքների հավասարության որենքը):

7. Արդասիք =  $\frac{\text{Ստացած աշխատանք}}{\text{ծախսած աշխատանք}}$ ;

8. Ույժի մոմենտ = ույժ  $\times$  բազուկ:

9. Մարմինը հավասարակշռության մեջ է, յեթե դեպի աջ պտտող ույժի մոմենտը հավասար է դեպի ձախ պտտող ույժի մոմենտին:

10. Այն աշխատանքի համար, վոր կամ ծանրության ույժն է կատարում, կամ վորեւ ույժ ծանրության ույժի դեմ և կատարում, տեղի ունի հետեւյալը.

Աշխատանքը = կշիռ  $\times$  մակարդակների տարբերություն:

11. Միայն ծանրության ույժի ազդեցությամբ մարմինը յերբեք ավելի չի բարձրանալ, քան այն մակարդակը, վորից ընկնում է:

12. Մշտաշարժ մեքենա չի կարող լինել:

### Հ Ա Ր Ց Ե Ր

1. Թվեցեք աշխատանքի մի քանի տեսակներ և ցույց տվեք, վոր նրանք յենթարկում են աշխատանքի ընդհանուր սահմանման, ըստ վորի աշխատանքը դիտում ենք, վորպես ույժի ազդեցություն վորոց ճանապարհի վրա:

2. Յերբ մի ծանր քար ձեռքում անշարժ բռնում էք, աշխատանք կատարում եք, թե վոչ:

3. Տունը կառուցանելիս վորմաղիքը շարում է 3-րդ հարկի պատերը, իսկ բեռնակիրը նրա համար այստեղ աղյուս է կրում: Յերբ բեռնակը բարձրին, ծանր է արդյոք նրա աշխատանքը, նաև պատասխանեց. «Յես ի՞նչ աշխատանք եմ կատարում: Յես միայն աղյուսն եմ կրում, իսկ ամրող աշխատանքը վորմաղիքն է անում»:

Գիտական տեսակետից ձիշտ է դատում բեռնակիրը:

4. Ինչում ե կայանում ազդեցությունը և ինչում հակազդեցությունը, յերբ բանվորը, թեք հարթության վրայով ծանրոցը բարձրացնում է (նկ. 20):

5. Կարելի՞ յէ 26-րդ նկարի բազմաձախարակի միջոցով ծանրոցը հետեւյալ կերպով բարձրացնել. ծանրոցը կապել պարանի Բ ծայրին, իսկ ձեռներով ձգել շարժուն ճախարակի լամբից: Այս գեղքում ի՞նչ ույժ կը հարկավորվի ծանրոցը բարձրացնելու համար:

6. Անշարժ ճախարակի վրայով անցնող պարանի մի ծայրից ձեռքիրով բռնած և մարդը, իսկ մյուս ծայրից կախած և մի ծանրոց, վորի կշիռը հավասար է մարդու կշուն: Ի՞նչ տեղի կունենա, յեթե մարդը պարանով վեր մագլցի:

7. Ներկարարը նստած է տախտակի վրա, վորը կապած և անշարժ ճախարակի վրայով անցնող պարանի մի ծայրից զ ծանրոցի փոխարեն (նկ. 39): Կը բարձրանա ներկարարը, յեթե նա ինքը ձգի պարանի Բ ծայրից:


8. Յերբ մի թիակով եք թիավարում բայց յերկու ձեռքն ել բանեցնելով, հավասամը աշխատանք են կատարում մեկ և մյուս ձեռը:

9. Ինչու մկրատով ստվարաթուղթի կտրելիս մկրատը լայն բանալով՝ ստվարաթուղթը մոտեցնում ենք մկրատի առանցքին:


10. Ինչու յերկար փայտն ավելի հեշտ է կոտրվում, քան լուցկու փոքրիկ կատորը:

11. Հասակավոր մարդը և տղան փայտին հազցրած տակառով ջուր են տանում, փայտի ծայրերից բռնած: Տակառի կշիռը 45 կիլոգրամ է: Փայտի վհր մասում պետք է տեղավորել տակառը, վոր հասակավորին 30 կիլոգրամ ընկնի, իսկ տղային 15 քլոր:

12. Վեր տեսակի լծակ է թիակը. վորը պիտի համարելնրա հնաման կետը. վորտեղ են ույժերի ազդման կետերը:



նկ. 39 ա.



նկ. 39

13. Մի մարդ կողովը ձեռնափայտին հազցրած ուսին տանում է. Ինչպես ե ավելի հեշտ տանելը՝ ուսին մոտ պահած, թե հեռու:

14. Հին ռուսական բեզմենը (նկ. 39 ա) բազկացած է մի ձո-

զից, վորի մի ծայրին գտնվում ե մի ծանրոց, իսկ մյուս ծայրին մի կեռ՝ ապրանքը կախելու համար. իբրև հենակետ ծառայում ե մետաղթելից շինած մի ողակը վորը կարող է ձողի յերկարությամբ տեղափոխել: Կշռելիս ողակն այնքան ենք տեղափոխում, մինչև վոր ձողը հորիզոնական դիրք ընդունի: Այնուհետև ողակի դիրքից հեշտ ե վորոշել ապրանքի կշռը:

Բացատրեցեք կը ունեմ այս յեղանակը և ապացուցեք, վոր կը ունի հավասար հավելումներին համապատասխանող նշանները հավասարահեռ չեն լինիլ:

15. Նուրբ կշեռքով կշռելիս շատ փոքր կշռաքարերի փոխարեն գործածում են 1 սանտիգրամանոց մի կշռաքար, վորը աղեղի ձև ունենալով՝ կարող ե դրվել լծակի զանազան տեղերում։ Այս կշռքարը կարող է փոխարինել սանտիգրամի մասերը։ Բացատրեցեք՝ ինչնու։

16. Յերկու տղա բարան են նստած (նկ. 27) և իրար հավասարա-  
կշռում են: Ի՞նչպես կարող են նրանք տախտակը ճոճել, առանց վոտ-  
ները գետնին դիպջնելու:

17. *Φωιτή δωματίου τρέπεται πάντα προς την ανατολήν*

18. 30-րդ և 32-րդ նկարներում պատկերացրած քարերը հավասար կշիռ ունին: Հավասար ճիգ և պահանջվում արդյոք յեղից բռնելով մեկ և մյուս քարը ընթելու համար:

19. Հավասարմբ աշխատանքներ են կատարվում նախորդ խնդրի քարերը շրջելիք:

20. 30-րդ նկարում պատկերացրած քարը շրջելիս՝ վորքան ավելի  
ե պտտած այդ քարը, այնքան ավելի փոքր ճիղ և հարկավոր շրջումը  
շարունակելու համար; Խնչու:

21. Դռան վոր մասում պետք է շինել բռնատեղը, վորպեսզի դռւ-  
ուը հեշտ բացվի:

22. Յերբ հարկավոր և բարձր յելարանը պատին հենելու համար վեր բարձրացնել նրա ներքեկի ծայրին ծանրություն են կապում։ Ի՞նչու՞:

23. Սենյակի դռան և դարպասի դռնակի համար հարկավոր են խնդիրներ զներ: Դարպասի դռնակն ունի 2 արշին լայնություն և  $1\frac{1}{2}$  սրշին բարձրություն, իսկ սենյակի զուռը 1 արշին լայնություն և  $2\frac{3}{4}$  սրշին բարձրություն: Նրանց կշիռները հավասար են: Վեր ծխնդիրները կետք ե ավելի ամուր լինեն:

ՅԱԶԻԱԾ

24. Մի բան տաշելիս դանակն ինչու և թնջպես և ձնշում մեր ձեռքը:

25. Ինչու յերկաթուղու կայարանը նպատակահարմար և շրջան  
ճանապարհի բարձր տեղում այնպես, վոր ճանապարհը կայարանի յեր-  
կու կողմից ել իջնի:

26. Խնչող ձեռնասալի հետևի պատճ աշխատում են, զորքան զարկելի ե, անվիճ մոտ շինել:

27. Դույլի յերկու յերրորդը ջրով լիքն եւ օրա սոչ այսպաս ա-  
վազ ածեցին, վոր ջուրը բարձրացավ մինչև դույլի բերանը: Ի՞նչպես

28. Նախընթաց խնդրում վրաեղ և այն աշխատանքի աղբյուրը,  
մու ծակ սահմանամակ ժամանակ ծախսվում է:

29. Գնդակը 2 մետր բարձրությունից գետնին և ընկնում։ Կարստը և գնդակը գետնից յիտ թռչելով 2 մետրից ավելի բարձրանալ։

30. Ի՞նչպես պետք է գետնին զցիլ գնդակը, վոր յատ թաշումն  
ալելի շատ բարձրանա, քան այն բարձրությունը, վորից զցիլ ենք:

31. Խնչ ե perpetuum mobile-ն (մշտաշարժ սպառակություն)։  
 32. Խնչն մշտաշարժ մեքենան հնարողների մասին ասում են, վոր

33. Ի՞նչ զիտեք Գալիլեյի մասին։ Ի՞նչ կարևորագույն հայտնա-

զործություններ և արևլ բավարար:

ବୁଦ୍ଧିରେ

1. Բանվորն աղյուս և կրում վորմագրի համար, վորը 4 մետր  
բարձրության վրա աշխատում է: Նա ինչքան ոգտակար աշխատանք  
կա կատարել 400 քայլ: աղյուս կրելով:

2. Խոչքան անողութ աշխատանք կը կատարի սախորդ լսողի բանվորը, յեթէ/նրա մարմնի կշիռը 70 քիլոգր. և, խոկ պատգարակինը 5 օրու, և յեթէ աղջութը կրելու համար 20 անգամ վերև ե բարձրանում:

3. Ինչքան անոգուտ աշխատանք կը կատարեմ սալբուրց լուսով դիրների բանվորը, յիթե աղյուսը տեղափոխելու համար մի անշարժ ճախարակ բանեցներ, վորի միջոցով 15 քելոր. կը ող տաշտակի մեջ առուստ կառող եր վեր բարձրացնել 10 սվազում:

4. Ի՞նչ մեծություն ունի արգասիքը՝ ալյուսը պատզարակությունը և աշխարհական բարձրացնելիս (ա. 3-րդ խնդիր)։

Վնասակար դիմադրությունները, զորոսք չ-բեր և օ-բեր լուրջը  
ներում չեն հիշատակված, հաշվի չենք առնում:

Այն ուժը, վորով բանվորը կարող է հակը տեղափոխել, հավասար է 30 քլգր.-ի: Կը հաջողվի՞ բանվորին հակը տեղափոխել: Ամենաքիչն ի՞նչ յերկարություն պիտի ունենա տախտակը, վոր բանվորն այդ կարողանա անել:

6. Հարթ ճանապարհը դեպի սարն այնպիսի թեքությամբ է բարձրանում, վոր յուրաքանչյուր 10 մետր ճանապարհին համապատասխանում է 1 մետր բարձրացում: Շփումն անտեսելով հաշվեցեք, թե սայլն ու բեռը միասին ինչքան պետք է կշռն, վոր ձին այդ ճանապարհով կարողանա տանել, յեթե այդ ձին հորիզոնական ճանապարհով կարող է միայն 100 քլգր.-ի ույժով ձգել:

7. Մի մարդ 800 քիլոգրամ ծանրության նավը պետք է ջրից ափը դուրս բերի, վորը 5 մետրին 1 մետր իջնում է: Այդ մարդն իր ձեռքի տակ ունի մի քանի տախտակներ ու գլաններ, այլև մի բազմածախարակ յերկու անշարժ ճախարակներով: Կարժղ և նա նավը ցամաք դուրս բերել, յեթե բազմածախարակի պարանից ձգի 40 քիլոգրամից քիչ ավելի ույժով: Նկարեցեք:


8. Յեթե նախընթաց խնդրի մարդը ձեռքի տակ բազմածախարակ չունենար, ի՞նչպես կարող եր նրա փոխարեն բանեցնել վոլորանը կամ անվորդը: Նկարեցեք:

9. Գործասեղանի պառուտառի քայլը 1 սմ. եւ, իսկ ձողի յերկարությունը հավասար է 35 սմ-ի: Ի՞նչ ույժով կը սեղմիլի տախտակը, յեթե ձողի վրա ազդենք 10 քիլոգրամ ույժով:

10. Լծակի յերկարությունը 125 սմ. եւ նրա վեր մասում պետք է դնել զւանը, վոր կոթը  $\frac{1}{2}$  փթի ույժով ձնշելով կարելի լինի 2 փութ չուգունը բարձրացնել:

11. Մեխը մուրճի միջոցով հանում են (նկ. 40): Վեր տարածությունն է ազդող ույժի բազուկը և վերը՝ դիմադրության բազուկը:

12. Հենակետից մինչև մուրճի կոթի ծայրը (նկ. 40) 30 սմ. եւ, իսկ մինչև մեխը 5 սմ.: Մեխը դուրս քաշելու համար հարկավոր է 10 քլգր. ույժ գործադրել: Ի՞նչ մեծություն ունի մեխի դիմադրությունը:



Նկ. 40.

13. Հեծանվի վոտնակի մեղեխը 18 սմ. եւ, իսկ ատամնավոր անվի շառավիղը 12 սմ.: Ի՞նչ ույժով է լարվում շղթան, յերբ վոտնակը  $\frac{2}{3}$  քիլոգր. ույժով սեղմում են:

14. Հեծանվի հետեւ անվի շառավիղը 35 սմ. եւ, իսկ հետեւ ատամնավոր անվինը՝ 3,5 սմ.: Անիվն ի՞նչ ույժով է գետինը բռնում, յերբ շղթան 7 քլգր. ույժով ձգվում եւ:

15. Նախընթաց խնդիրներում նկարագրած հեծանվի վոտնակը սեղմում են 4 քլգր. ույժով, մեղեխի հորիզոնական դիրքի ժամանակ: Այդ միջոցին հետեւ անիվն ի՞նչ ույժով է բռնում գետինը:

16. Բեռը ձեռնասայլի վրա այնպես է զրված, վոր բեռնած սայլի ծանրության կենդրուով անցնող ուղղաձիգը անվի առանցքից մինչև կոթերի ծայրերը յեղած հեռավորության մի յերրորդ մասովն է անցնում: Ձեռնասայլը կոթից բարձրացնելու համար անհրաժեշտ է 35 քլգր. ույժ: Վերքան և կշռում սայլը բեռան հետ:

17. Յերկու մարդ, վորոնք միասին 160 քլգր. են կշռում, պետք է 640 քլգր. կշռող սնդուկը մինչև 2-րդ հարկի լուսամուտը բարձրացնեն: Ճախարակների ի՞նչպիսի միավորությամբ կարող են այդ անել:

18. Ածուխը լաստանավից փոխադրում են շողենավը մի ամանի միջոցով, վորի կշիռը 25 քլգր. եւ, և վորը յուրաքանչյուր նվազ 125 քլգր. ածուխ է բարձրացնում: Շփումն անտեսելով հաշվեցեք արգասիքը:

19. Ի՞նչպես կարելի եր փոփոխել խնդրի պայմանները, վորպեսզի արգասիքն ավելի մեծանար:

20. Սանդուխքով 3 մետր բարձրանալիս վերքան աշխատանք եք կատարում, յեթե ձեր մարմինի կշիռը 50 քիլոգրամ եւ:

21. Յերբ սանդուխքով իջնում եք, վերադարձնելում եք արդյոք այն աշխատանքը, վորը բարձրանալիս ծախսել եք:

22. Ցցահար մեքենան 50 փութ կշիռ ունի և բարձրացվում է 1 սահման: Վերքան աշխատանք է ծախսվում դրա վրա:

23. Ցիցը վերքան կիջնի նախորդ խնդրի ցցահարի հարվածից, յեթե ցցի դիմադրությունը միջին հաշվով 7000 փութ եւ:

### III ԳԼՈՒԽ

#### ՇԱՐԺՈՒՄ

34. ՇԱՐԺՈՒՄԸ ՎՈՐՈՇՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԸ.—Յենթաղբենք ճանապարհորդը նստած է շարժվող տրամվայի վագոնում. Ի՞նչ կարելի է ասել նրա շարժման մասին: Նա ինքը կարող է ասեր, վոր անշարժ նստած եւ, վոտով գնացողը, վորի մատով նա

անցնում ե, կասի, վոր այդ մարդն առաջ ե շարժվում, իսկ ավտոմոբիլով տրամվայից առաջ անցնող մարդը գուցե և ասի, վոր մեր ճանապարհորդն իրեն շարժման հակառակ ուղղությամբ ե գնում:

Նրանցից վճրն ե յերեսույթն ուղիղ բացատրում:

Ցուրաքանչյուրն իր տեսակետից ճիշտ ե ասում, վորով հետև միևնույն շարժումը տարբեր ե յերեսում տարբեր տեսակետներից: Մարմնի շարժումը կարելի յե վորոշել միայն մի այլ մարմնի նկատմամբ, վորը մենք անշարժ ենք համարում: Յեթե տարածության մեջ միայն մի մարմնի գոյություն ունենար, անհնարին կը լիներ իմանալ՝ շորժվում ե նա, թե վոչ: Կարող ենք արդյոք դասել արեկի և նրա ամբողջ համակարգության շարժման մասին, յեթե «անշարժ» աստղերը չինեյին:

Մարմինների շարժումը միշտ նկարագրվում ե վորոշ մարմինների և կետերի նկատմամբ, վոր մենք կամավորապես անշարժ ենք ընդունում: Գործնական հարցերի քննության ժամանակ սովորաբար խոսք ե լինում յերկրի մակերեսու յթի նկատմամբ կատարվող շարժման մասին, և այդ ժամանակ յերկրի մակերեսույթն անշարժ ե համարվում:

Միևնույն շարժումը կարելի յե դիտել վորպես տեղի ունեցող յերեմն այս և յերեմն այն մարմինների կամ կետերի նկատմամբ: Այս նպաստում ե, վոր շարժման վերաբերյալ շատ հարցեր պարզանան: որինակ՝ դիտենք փողոցվ անցնող մարդու շարժումը: Յեթե մենք ցանկանայինք լիովին լուծել այդ մարդու՝ տարածության մեջ կատարած շարժման հարցը, պետք ե հաշվի առնելինք և յերկրի որական պատումն իր առանցքի շուրջը և տարեկան շարժումն արեկի շուրջը, և արեկի շարժումը: Սակայն խնդիրն այդպես բարդացնելը գործնական վոչ մի նշանակություն չեր ունենալ: Իրոք, գործնական տեսակետից մարդու շարժումը լիովին իմանալու համար պետք ե միայն դիտենալ առաջին՝ այն ժամանակը, յերբ մարդը այսինչ տեղով, որինակ՝ փողոցի այսինչ լապտերի մոտով անցնում է: յերկորդ՝ այն ուղղությունը, վորով այդ մարդը փողոցով գնում է: յերրորդ՝ նրա շարժման արագությունը: Այս ավալ-

ներով կարելի յե լուծել մարդու շարժման վերաբերյալ բոլոր գործնական հարցերը:

Դիցուք, որինակ՝ մարդը ցերեկվա 12 ժ. 10 րոպեյին լապտերի մոտ ե յեղել և դեպի արևելք ե շարժվում, յուրաքանչյուր վայրկյանում անցնելով 1,5 մետր: Այդ դեպում մենք կարող ենք ամեն մի տվյալ ժամանակի համար մարդու տեղը վորոշել: Մենք կարող ենք, որինակ՝ վորոշել վոր 12 վայրկյանից հետո մարդը կը գտնվի լապտերից դեպի արևելք  $1,5 \times 12 = 18$  մետր հեռավորության վրա:

Այս անշարժ կետը, վորից մենք կը հաշվենք անցած տարածությունները, կը կոչենք սկզբնակետ կամ յելակետ: Շարժման ուղղությունը մենք կորոշենք այն կետերի վերաբերմամբ, վոր անշարժ կը համարենք: Շարժման արագությունը բնորոշում ե թե շարժումը վոր աստիճան դանդաղ կամ շուտ ե կատարվում:

Շարժման սկզբնակետը, ուղղությունը յեվ արագությունը այն տվյալներն են, վորոնք վորում են շարժումը:

35. ՀԱՎԱՍԱՐԱՎԱՐ ՇԱՐԺՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ. — Յերբ ասում ենք, վոր մարմինը մի վայրկյանում 1,5 մետր արագությամբ հավասարաչափ շարժվում ե, ապա տինտես ենք հասկանում, վոր վոչ միայն յուրաքանչյուր վայրկյանում այդ մարմինն անցնում է 1,5 մետր, այլև վոր յուրաքանչյուր տասնորդական վայրկյանում անցնում է 1,5 մետրի ուղիղ  $\frac{1}{10}$  ը, յուրաքանչյուր հարյուրորդական վայրկյանում ուղիղ  $\frac{1}{100}$  ը և այլն: Ի հարկե, հնարավոր չե, վոր մարդ քայլելիս լիովին հավասարաչափ շարժվի, ինչպես և հնարավոր չե, վոր նա լիովին ուղիղ գծով շարժվի: Գրեթե բոլոր շարժումները, վոր մենք հավասարաչափ ենք կոչում, միայն մոտավորապես են հավասարաչափ:

Մարմինը հավասարաչափ ե շարժվում, յերեն նա կամավորապես ընտրած հավասար ժամանակախցոցներում հավասար տարածություններ ե անցնում:

36. ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՓՈՒՄԸ. — Յեթե հեծանվորդը 5 վայրկյանում 35 մետր և անցնում, ապա տառում ենք, վոր

նրա արագությունն է  $\frac{35}{5}$  (մետր) = 7 մետր 1 վայրկյանում:

Նույն ձեռվ արագությունները կարելի յե չափել 1 ժամում անցած վերստերի, 1 րոպեյում անցած վոտնաշափերի, 1 վայրկյանում անցած սանտիմետրների թվով և այլն:

Արագության բվական մեծությունն սացվում է՝ անցած արագությունն արտահայտող թիվը բաժանելով ժամանակամիջոցն արտահայտող թվով.

$$\text{Արագություն} = \frac{\text{արագություն}}{\text{ժամանակ}}$$

Տարածություն հարաբերությունն այն գեպքում է տալիս արագության ճիշտ մեծությունը, յերբ շարժումը հավասարաչափ է: Անհավասարաչափ շարժման գեպքում, յերբ արագությունը տարբեր ժամանակների համար տարբեր է լինում,  $\frac{\text{տարածություն}}{\text{ժամանակ}}$  հարաբերությունը տալիս է այսպես կոչված միջին արագությունը:

Որինակ՝ Մուկվայից Լենինգրադ, վոր 600 վերստ է, ճեղնթացը զնաց 12 ժամում: Վերքան եր զնացքի արագությունը: Իրապես, ճանապարհի ընթացքում զնացքը շարժվել է շատ տարբեր արագություններով կայարաններում զնացքը բորբոքին կանգ է առել, իսկ կայարանների միջև զնացել է նախ դանդաղ, ապա արագ և ապա նորից դանդաղ: Անցած տարածությունը ժամանակով բաժանելով ստանում ենք զնացքի միջին արագությունը.

$$\frac{\text{տարածություն}}{\text{ժամանակ}} = \frac{600}{12} = 50 \text{ վերստ 1 ժամում:}$$

Անհավասարաչափ շարժման միջին արագությունը հավասար է այնպիսի հավասարաչափ շարժման արագության, վորի գեպքում մարտին նույն արագությունը ժամանակամիջոցում կարող է նույն արագությունն անցնել:

**37. ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՅԵՎ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ.**— Յեթե ճանապարհորդը շարժվող վագոնի մեջ քայլում է, ապա նա շարժվում է վագոնի վերաբերմամբ, իսկ վագոնն այդ նույն ժամանակը շարժվում է յերկաթուղու վերաբերմամբ: Ուրեմն ճանապարհորդը միաժամանակ յերկու, իրարից անկախ, շարժումներ է կատարում: Ի՞նչպիսի շարժում է անում նա յեր-

կաթուղու վերաբերմամբ: Յենթադրենք շարժման դիտողությունն սկսում ենք այն մոմենտին, յերբ ճանապարհորդը դանվում է ճանապարհին ընկած քարի հենց ուղիղ վերկը: Դիցուք զնացքը շարժվում է դեպի հյուսիս, և նրա արագությունն է 1 վարկյանում 4 մետր, իսկ ճանապարհորդը վագոնում քայլում է զնացքի շարժման ուղղությամբ, 1 վայրկյանում անցնելով 1 մետր: Պարզ է, վոր մի վարյանից հետո ճանապարհորդը քարից 4 + 1 = 5 մետր դեպի հյուսիս կը գտնվի:

Յերե յերկու շարժումներ միեվնույն ուղղությունն ունեն, ապա երանե համազոր են մի յերրորդ շարժման, վորը նույն ուղղությունն ունի յեզ վորի արագությունը հավասար է տվյալ շարժումների արագությունների գումարին:

Յեթե յենթադրենք, վոր ճանապարհորդը վագոնում նույն արագությամբ քայլում է զնացքի շարժման հակագիր ուղղությամբ, ապա մի վարկյանում նա քարից դեպի հյուսիս հեռացած կը լինի 4 - 1 = 3 մետր:

Այն գործողությունը, վորի միջցով դանում ենք յերկու կամ մի քանի տվյալ շարժումներին համազոր շարժումը, կոչվում է շարժումների գումարում (կամ բաղադրում): Տվյալ շարժումները կոչվում են գումարելի (կամ բաղադրիչ) շարժումներ, իսկ ստացածը՝ համազոր (կամ բաղադրյալ) շարժում:

Միեվնույն կողմն ուղղված յերկու ուղղագիծ շարժումների համազորն այդ նույն կողմն է ուղղված, յեզ ներ արագությունը հավասար է բաղադրիչ շարժումների արագությունների գումարին:


Հակագիր կողմեր ուղղված յերկու ուղղագիծ շարժումների համազորի արագությունը հավասար է բաղադրիչ շարժումների արագությունների արագությունների գումարը:

### 38. ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՈՒՂՂԱՀԱՅԱՅ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ

**ԳՈԽՄԱՐՈՒՄՆԵՐԸ.**— Այժմ յենթադրենք, վոր մինչդեռ վագոնը դեպի հյուսիս է շարժվում, ճանապարհորդը նրա մեջ քայլում է լայնքով արևմուտքից դեպի արևելք: Դիցուք վագոնի և ճանապարհորդի արագությունները նախկինն են: Վագոնը 1 վարկյանում 4 մետր դեպի հյուսիս կը շարժվի, իսկ ճանապարհորդը 1 մետր դեպի արևելք: Ճանապարհորդի ընդհանուր տեղափոխությունը

վոչ դեպի հյուսիս կը լինի և վոչ ել դեպի արեւելք, այլ մի միշտ ջակա ուղղությամբ: Այն տարածությունը, վորի չափ 1 վայրկյանում ճանապարհորդը կը տեղափոխվի, փոքր կը լինի 5 մետրից, այսինքն բաղադրիչ արագությունների գումարից: Այս դեպքում բաղադրյալ շարժման արագությունը չի կարելի հասարակ թվաբանական գործողությունը ստանալ, այլ պետք է գործածել մի այլ հասարակ յեղանակ՝ գրաֆիկական յեղանակը, վորից ոգտվում են շատ հարցեր լուծելիս:

**39. ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԸ.**— Թղթի վրա նշանակենք մի կետ, վորը դիցուք պատկերացնում ե շարժման սկիզբը, և տվյալ շարժումներից առաջինի ուղղությամբ տանենք մի հատված, վորի յերկարությունն ընտրած մասշտաբով պատկերացնում ե նրա տեղափոխությունը 1 վայրկյանում: 41-րդ նկարում շարժման սկզբնակետը պատկերացրած ե Օ կետով, իսկ այն ճանապարհը, վոր վագոնի մեջ ճանապարհորդը 1 վայրկյանում անցնում է, ՕՇ հատվածով: այստեղ այնպիսի մասշտաբ ե ընտրված, վոր 1 մետր տեղափոխությունը պատկերացված ե 1 սանտիմետր յերկարության հատվածով: Հետո պատկերացնում ե այն տեղը, ուր 1 վայրկյանից հետո ճանապարհորդը կը համներ, յեթե վագոնն անշարժ լիներ: Բայց վագոնն այդ նույն ժամանակը 4 մետր դեպի հյուսիս ե շարժվում: Այդ տեղափոխությունը կը պատկերացվի Օյ հատվածով, վորի յերկարությունը 4 սմ: Ե: Յեթե ճանապարհորդը շարժվեր հաջորդաբար, այսինքն նախ կատարելով առաջին շարժումը, ապա յերկրորդը, նա կը գծեր Օքր կամ Օյր բեկյալ ճանապարհը և թիվ կետը կը համներ յերկու վայրկյանից հետո, բայց, իրականության մեջ, նա միաժամանակ շարժվում ե վագոնի մեջ դեպի արեւելք և վագոնի հետ միասին դեպի հյուսիս և թիվ կետն ե հասնում մեկ վարկյանից հետո: Վորովինետն ճանապարհորդը յուրամանչյուր ակնիքարք շարժվում ե միաժամանակ և դեպի արեւելք և դեպի հյուսիս, ապա նրա ճանապարհը վոչ թե Օքր կամ Օյր բեկյալը կը լինի, այլ Օքր կամ Օյր բեկյալը պատկերացնում ե նրա դուրս կատարելով:



Ակ. 41

Այսպիսով այժմ կարող ենք սահմանել համազոր շարժումը դաշտու կանոնը:

պիսով Օք հատվածը ուղղությամբ և մեծությամբ պատկերացնում ե ճանապարհորդի իրական ճանապարհը 1 վայրկյանում, այսինքն պատկերացնում ե նրա բաղադրյալ շարժման արագությունը:

**ՄԵԽՔ ՊՄԱՆՔ** Օք հատվածը, վորը պատկերացնում ե համազոր շարժման արագությունը: Բայց ինդիքը որանով գեռվերջնականորեն լուծված չե, պետք ե նաև գտնել այդ արագության թվական մեծությունը: Դրա համար կարող ենք այսպես վարվել: Կը չափենք Օք հատվածը և կը հաշվենք, թե նրան ինչ մեծության արագություն ե համապատասխանում մեր ընտրած մասշտաբով:

**ՄԵՐ ՈՐԲԻՆԱԿՈՒՄ** Օք յերկարությունը հավասար է մոտ 4,1 սանտիմետրի: Հետեւաբար, կարող ենք համարել, վոր համազոր արագությունը հավասար է մոտ 4,1 մետրի 1 վայրկյանում:

**ՅԵՐՔ ԱՅՆԱՂԻՍԻ ՄԵծությունները**, ինչպես են տեղափոխությունը կամ արագությունը, պատկերացնում ենք ուղղագիծ հատվածներով, ապա այդ հատվածները նկարում ենք մի ծայրը սլաքով, ցույց տալու համար, թե վոր կողմն ե ուղղված շարժումը:

Համազոր շարժման գրաֆիկական կառուցումը հիմնված է նրա վրա, վոր յուրաքանչյուր բաղադրիչ շարժումը միուսներից անկախ ե տեղի ունենում:

**40. ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌԱԳԻԾԸ.**— Իրար հետ անկյուն կազմող յերկու շարժումների համազորը զրաֆիկական յեղանակով գտնելը կոչվում է շարժումների զուգահեռագծի յեղանակ: Դժվար չե տեսնել, վոր Օքր պատկերը (Ակ. 41) մի զուգահեռագիծ ե (մեր մասնավոր որինակում ուղղանկյուն), վորի յերկու հարկան կողմերը՝ Օք և Օյ, բաղադրիչ շարժումներն են պատկերացնում, իսկ նույն 0 գագաթից տարած Օք անկյունագիծը պատկերացնում ե համազոր շարժումը:


Այսպիսով այժմ կարող ենք սահմանել համազոր շարժումը դաշտու կանոնը:

**41. ԶՈՒԳԱՀԵՌԱԳԻԾԻ ԿԱՆՈՆԸ.**— I. Հարմար մասօւաբ քետելով՝ բաղադրիչ շարժումները պատկերացնում են հատվածներով, վորոնց ուղղությունները ցույց են տալիս շարժումների ուղղությունները,

իսկ յերկարությունները համեմատական են արագություններին։ 2. Սյդ հասվածները ընդունելով զուրաց զուգահեռազգի յերկու համեմատ կողմեր՝ կառուցանում ին զուգահեռազգին յեվ տանում նույն զագարից յելնող անկյունազինը։ 3. Զափում են անկյունազին յերկարությունը յեվ ընտրած մասշաբի համաձայն զորում համազոր արագության մեջությունը։

42. ՄԻՔԱՆԻ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳՐԻՄԱՐՈՒՄԸ. — Յեթե տված են յերեք և ավելի մեծ թվով բաղադրիչ շարժումներ, ընդհանուր համազոր ույժը կարելի յե հետեւյալ ձևով գտնել։ Նախ գումարում ենք տվյալ շարժումներից վորեւ յերկուսը, ապա այդ յերկու շարժումների համազորին ավելացնում ենք յերրորդ շարժումը, նոր համազորին ավելացնում ենք չորրորդ շարժումը և այսպիս շարունակ, մինչև բոլոր տվյալ շաժումներն սպառվին 42-րդ նկարում Օօ-ի և Օօ-ի գումարումը տալիս է Օօ անկյունազինը. Օօ-ի և Օօ-ի գումարումը տալիս է Օօ-ն, Այսպիսով Օօ-ն ներկայացնում է Օօ, Օօ և Օօ բաղադրիչ շարժումների համազորը։


Նկ. 42



Բոլորովին նույնն է, թե ինչ կարգով ենք գումարում բաղադրիչները, այլև վոչ մի նշանակրություն չունի՝ արդյոք բոլոր բաղադրիչները մի հարթության վրա յեն, թե վոչ։ Գումարման կանոնը բոլոր դեպքերի համար միևնույնն է։ Այս կառուցումն ես հիմնված է նրա վրա, վոր յուրաքանչյուր բաղադրիչ շարժում մյուսներից անկախ է տեղի ունենում։

43. ՇԱՐԺԱԿԱՆ ԿՌՈՒՆԿ. — Եթե այնպիսի շարժման որինակը վոր յերեք բաղադրիչ շաժումների արդյունք է հանդիսանում, կարելի յե վերցնել ծանրության տեղափոխումը կամքափոր կոռունկի միջոցով, վորը հաճախ գործածվում է մեծ գործարաններում։ Այդպիսի կոռունկը բաղկացած է մի կամրջից, գորի ծայրերը կարող են պատերի յերկարությամբ դրված ուկաներով գլորվել, վորի չնորհիվ ամրող կոռունկը կարող է գործարանի յերկարությամբ տեղափոխվել մի ծայրից մյուսը. կա-

մըրջի յերկարությամբ դրված ուկաներով շարժվում է մի սայլակ, վորը կարող է շենքի լայնությամբ ծայրից ծայր տեղափոխվել. վերջապես, սայլակի մեջ տեղափորված է մի մեքենա, վորը բաղմանախարակի միջոցով ծանրոցն ուղղաձիգ բարձրացնում է կամ ցածացնում։ Յերբ միաժամանակ շարժման մեջ է դրվում և կամուրջը, և սայլակը, և ծանրոցը, այն ժամանակ ծանրոցի շարժումը բաղադրվում է իրար ուղղահայաց յերեք շարժումներից։



44. ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ. — Յերբ քննում եյինք ծանրոցը թեք հարթությամբ բարձրացնելու դեպքը (§§ 17, 18), տեսանք, վոր իդեալական գեպքում գարիվեր տեղափոխելիս կատարած աշխատանքը հավասար է ուղղաձիգ բարձրացնելիս կատարած աշխատանքին։ Այդ նույն մեղքակացությանն ենք

հանգում հետևյալ դատողությամբ։ Թեք հարթության վրա տեղի ունեցող շարժումը կարելի յէ դիտել վրապես յերկու շարժումներից բաղադրված՝ հորիզոնական տեղափոխումից մինչև սայլը և ուղղաձիգ բարձրացումից։ Յեթե շփումը հաշվի չառնենք, հորիզոնական տեղափոխման վրա վոչ մի աշխատանք չի ծախսվում, հետեւապես, ամբողջ աշխատանքը հավասար է ուղղաձիգ բարձրացման աշխատանքին։

Հաճախ հարմար է լինում փորեե տվյալ շարժում դիտել վրապես միքանի բաղադրիչ շարժումների համազոր։ Բաղադրիչ շարժումների փորոշումը տվյալ համազոր շարժման միջոցով կոչվում է շարժման վերլուծում իր բաղադրիչներին։

Տվյալ շարժումը յերկու բաղադրիչների վերլուծելու խընդիրն անորոշ է, այսինքն կարող է անթիվ լուծումներ ունենալ, յեթե լրացուցիչ պայմաններ չեն տված։ Վորապես ի խընդիրը փորոշ լինի. պետք է բացի տվյալ շարժման ուղղությունից և արագությունից տալ նաև, որինակ՝ փորեե այսպիսի պայման՝ 1) յերկու բաղադրիչ շարժումների ուղղությունները, 2) նրանց արագությունները, 3) բաղադրիչ շարժումներից մեկի արագությունը և մյուսի ուղղությունը։

Ամեն տվյալ շարժում կարելի յէ բաղադրիչ շարժումների վերլուծել։

**45. ՈՒՅԹԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՅԵԿ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ.** — Ույժը, շարժման նման, փորոշվում է յերեք տվյալներով՝ աղդման կետով, ուղղությամբ և մեծությամբ։ Այստեղից յերկում է, փոր ույժն ել կարելի յէ պատկերացնել ոլաքով ոժաված ուղղագիծ հատվածով, փորի սկզբնակեալը կը պատկերացնի ույժի աղդման կետը, ուղղությունը ցույց կը տա ույժի ուղղությունը, իսկ յերկարությունը կը պատկերացնի ույժի մեծությունը մեր ընարած մասշտաբով։ Ճիշտ նույն ձևով, ինչպես շարժումների այստեղ ևս համար, կարող ենք ույժերի գուգանեռագիծ կառուցանել և նրա միջոցով տվյալ յերկու բաղադրիչ ույժերի համազորը գտնել։ Կարող ենք նաև ընդհակառակն, փորեե տվյալ ույժ բաղադրիչների վերլուծել։ Շարժումների զուգահեռագծի կանոնից (**§ 41**) ույժերի զուգահեռագծի կանոնն ստանալու համար պետք


ե միայն «շարժում» բառը «ույժ» բառով փոխարինել, իսկ «արագություն» բառը «ույժի մեծություն» բառերով։

Քանի վոր ույժերի գումարման համար տեղի ունի գուգահեռագծի կանոնը, ապա այստեղից հետեւմ է, վոր յուրաքանչյուր բաղադրիչ ույժ իր ազդեցուրյունը ուրիշներից անկախ է կատարում։

Այս գրությունը կոչվում է «շարժման յերկրորդ հիմնական որենք» կամ «Նյուտոնի յերկրորդ որենք» և սովորաբար այս ձևով է արտահայտվում։

Ույժի ազգեցուրյունն անկախ է այն բանից՝ արդյո՞ք գագարի քարտիան մեջ գտնվող մարմնի վրա յէ ազդում ույժը, մենակ է ազդում, թե այլ ույժերի հետ միասին։

**46. ՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ.** ՅԵԿ ՎԵՐԸ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՆԿՅՈՒՆԻ Ե ԿԱԶՄՈՒՄ. — Դիտենք ույժի վերլուծման մի շատ պարզ որինակ։ Դիցուք տղան հորիզոնական ճանուպարհով սահնակը քաշում է, պարանը ուսին գցած (**նկ. 43**)։ Այս գեղքում ույժը ուղարկում է սահնակի ուղղությունն ունի իսկ սահնակը հորիզոնաբար է շարժվում. Վերն ասացինք, փոր աշխատանքը հաշվելիս ույժը և ճանապարհը պետք է միենույն ուղղությամբ չափել։ Այս ի նկատի ունենալով կարելի յէ յերեսակայել փոր այն ույժը, փորով տղան սահնակը քաշում է, բաղկացած է յերկու բաղադրիչներից, մեկը՝ հորիզոնական, փորն աշխատանք է կատարում, մյուսը՝ ուղղությամբ պատկերացնել և հորիզոնական տեղափոխության ժամանակակից պատկերացնել։



Նկ. 43  
գափոխության ժամանակ անողութ է մնում։


Յենթագրենք աղան պարանը 5 քիլոգրամ ույժով և ձգում, իսկ տղայի ուսի բարձրությունն այնքան է վոր անը ուղղանքուն յեռանկյան կողմերը հետեւյալ յերկարություններն ունին։

$a = 150$  սմ.,  $b = 90$  սմ. և  $ab = 120$  սմ.: Հետեաբար, կողմերի հարաբերություններն են՝

$$ac : bc : ab = 5 : 3 : 4.$$

Այս պայմաններում, զուգահեռագծի կանոնով բաղադրիչների վերլուծելով այն ույժը, վորով տղան սահնակը ձգում է, կը գանենք, վոր հորիզոնական բաղադրիչը 4 այնպիսի միավոր է պարունակում, վորպիսի 5 միավոր պարունակում է ույժը, այսինքն սահնակը հորիզոնական ուղղությամբ ձգող ույժը հավասար է 4 քիլոգրամի:

47. ՈՒՅԹԵՐԻ ԶՈՒԳԱՀԵՌԱԳԾԻ ԿԱՆՈՆԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ.— Ույժերի զուգահեռագծի կանոնը փորձով ստուգելու համար վերջնում ենք յերեք զսպահակավոր կշեռք: Նրանց միջոցով ձգում ենք 0 կետում հանդիպող յերեք պարաները (նկ. 44), և և կշեռքների ցույց տված ույժերի վրա զուգահեռագծի կանոնով կազմում ենք նրանց համազոր օդ ույժը և չափում սրամեծությունը: Պարզ վում է, վոր այն դեպքում է հավասարակշռություն և առաջգում, յերբ կշեռքի ցույց տված ույժը օդին է հավասար:



նկ. 44

48. ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՌՈՂ ՈՒՅԹԸ.— Հավասարակշռող ույժ կոչվում է այնպիսի ուժը, վորը մենակ հավասարակշռում է տվյալ յերկու կամ մի քանի ույժերին: Տվյալ ույժերի համար համազոր ույժը յեվ հավասարակշռող ույժը միշտ իրար հավասար էն յեվ ազդում են սինվերյան ուղիղի հակադիր ուղղություններով:

Դերը դիտած որինակում (նկ. 44) տվյալ ույժերն են չեն, համազոր ույժը պատկերացվում է օդ անկյունագծով, իսկ հավասարակշռող ույժն է օչ, վոր հավասար է օդին և ազդում է վերջնիս հետ միասին մի ուղիղով, բայց հակադիր ուղղությամբ:

49. ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔՆԵՐԸ.— Մարմինների շարժման հիմնական որենքները, վոր նախընթաց գլուխներում ուսումնասիրեցինք, ավարտված ձեռվ առաջին անգամ տվել են յուտոնը «Թիզիկայի մաթեմատիկական սկզբունքները» (Physiologiae naturalis principia mathematica) հոչակավոր աշխատության մեջ 1687 թվին: Այդ որենքները հետեւյան են:

1. Ամեն մարմին պահպանում է զագարի կամ ուղղագիծ հավասարաչափ շարժման իր վիճակը, բանի գեռ վորեվե ուղղ եռան չի հարկացրում փոխելու այդ վիճակը:

2. Ույժի ազգեցուրյունն անկախ է այն բանից՝ զագարի՝ թե շարժման վիճակի մեջ գտնվող մարմենի վրա չե ազգում, մենակ և ազգում, թե այլ ույժերի հետ միասին:

3. Ամեն ազգեցուրյան ժամանակ գոյուրյուն ունի նրան հավասար յեզ հակադիր ուղղության հակադիրություն:

Այս որենքները մեզ հնարավորություն են տալիս կանխասելու, թե այս կամ այն պայմաններում ինչպիսի շարժում պետք է ստացվի: Այն հանգամանքը, վոր այդպիսի կանխասացությունները փորձով հաստատվում են, վոչ միայն համոզում ենք, վոր այդ որենքներն իրավացի յեն, այլև նորից հաստատում են բնության յերևույթների ընդհանուր որինաչափությունը: Յերեսույթների ուշադիր ուսումնասիրումը ավելի ու ավելի յե պարզում այն հիմնական իրողությունը, վոր սինզերի մեջ ամեն մի մարմին փոխադարձ ույժերով կապված է մյուս բոլոր մարմինների հետ. այնպիս, վոր մի մարմին ամեն մի շարժումը վորու, թեկուզ ամենաքուլ, ազգեցուրյուն է անում բոլոր մարմինների վրա:

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սկզբնակետը, ուղղությունը և արագությունն այն տվյալներն են, վորոնք բնորոշում են շարժումը:

2. Մարմինը հավասարաչափ է շարժվում, յեթե կամավորակես ընտրած հավասար ժամանակամիջոցներում հավասար տարածություններ է անցնում:

3. Հավասարաչափ շարժման արագությունը =  $\frac{\text{տարածություն}}{\text{ժամանակ}}$

4. Յեթե յերկու բաղադրիչ շարժումներ ուղիղ գծով միեւ-

նույն կողմն են ուղղված, ապա համազոր շարժումն այդ նույն կողմն ե ուղղված, և նրա արագությունը հավասար ե բաղադրիչ շարժումների արագությունների գումարին:

5. Յեթե յերկու բաղադրիչ շարժումներ ուղիղ գծով հակադիր կողմեր են ուղղված, ապա համազոր շարժումը մեծ բաղադրիչ արագության կողմն ե ուղղված, իսկ նրա արագությունը հավասար ե բաղադրիչ շարժումների արագությունների տարրերության:

6. Յեթե յերկու բաղադրիչ շարժումների արագությունները պատկերացված են զուգահեռագծի յերկու հարևան կողմերով, ապա համազոր շարժման արագությունը պատկերանում ե այդ զուգահեռագծի անկյունագծով:

7. Ամեն շարժում կարելի յե վերլուծել բաղադրիչ շարժումների:

8. Աղջման կետը, ուղղությունը և մեծությունը այն արվյալներն են, վորոնք բնորոշում են ույժը:

9. Ույժերը կարելի յե նույն յեղանակներով գումարել և փերլուծել, ինչ վոր շարժումները:

10. Ինչպես դադարի, նույնպես և շարժման մեջ գտնրվող մարմնի վրա ույժը միատեսակ ե աղդում, թե այն դեպքում, յերբ նա մենակ ե և թե այն դեպքում, յերբ միաժամանակ ուրիշ ույժեր ել են աղդում:

11. Տիեզերքի բոլոր մարմնները փոխազդեցության մեջ են, այնպես վոր ամեն մի մարմնի շարժումն աղդում ե բոլոր մյուս մարմնների վրա, թեկուղ աննշան չափով:

## ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ի՞նչպես կորոշեք այն ամենամեծ արագությունը, վորով կարող եք մի փոքր տարածություն վազելով անցնել:

2. Շարժվող գնացքի մեջ վերջին վազոնի հարթարդակին (պլատֆորմին) կանգնած մարդը պարզած ձեռքից քարը վայր ե գցում: Գետնին դիպելու մոմենտին քարը մարդու ձեռքի ուղիղ տակը կը գտնի, թե վոչ:

3. Մեկը վերջին վազոնի հետեւ հարթարդակից քարը հորիզոնաբար նետում և գնացքի շարժման հակադիր ուղղությամբ, հաղորդելով

նրան գնացքի արագությունը: Նետած քարը յերկաթուղու վերաբերմամբ ի՞նչպես կը շարժվի:

4. Յերբ գնացքը հավասարաչափ շարժումով արագ գնում է, վագոնում վոր ուղղությամբ ավելի հեշտ կը լինի քայլել՝ դեպի շողեկանքը, թե հակառակ:

5. Յերբ և ավելի գծվար լինում վագոնում քայլելն սկսել՝ յերբ գնացքը կանգնած է, թե յերբ հավասարաչափ շարժվում է:

6. Ի՞նչից ե, վոր չենք նկատում յերկրի որական պտտումը:

7. Ի՞նչու թափ առնելով ավելի հեռու յենք ցատկում, քան առանց թափ առնելու:

8. Ի՞նչու հեծանվով քամու ուղղությամբ գնալն ավելի հեշտ է, քան քամուն հակառակ:

9. Յերկու գնդակ սեղանից միաժամանակ ընկնում են. մեկն ուղղաձիգ և ընկնում, իսկ մյուսին հորիզոնական հարված են առլիս: Վոր գնդակն ավելի շուտ կը հասնի հատակին:

10. Թռչող թռչունի վրա կրակելիս՝ վժրաեղին պետք ե նշան բռնել:

11. Հեռու նշանի վրա կրակելիս՝ հրացանի փողը պետք ե նշանից բարձր ուղղել: Ի՞նչու:

12. Ի՞նչու ուղղաձիգ ընկնող անձրևի կաթիլները շարժվող վագոնի լուսամուտների վրա թեք հետքեր են թողնում:

13. Կարթի թելը կապարով միասին զցած ե արագանոս զետի մեջ: Ի՞նչ ույժեր են աղդում թելի ծայրի վրա: Ի՞նչպես ե ուղղված այդ ույժերի համազորը:

14. Մի մարմին, վորի վրա յերեք ույժեր են աղդում, զո՞նվում ե հավասարակության մեջ: Ի՞նչ առնչություն պետք ե ունենան այդ ույժերից յուրաքանչյուրը և մյուս յերկի համազորը:

15. Իրար հետ ի՞նչ անկյուն պետք ե կազմին մեկ քիլոգրամանոց յերկու ույժերի ուղղությունները, վորպեսզի նրանց համազորն ևս հավասար լինի 1 քիլոգրամի:

16. Վագոնը թեք ճանապարհով իջնում է: Գծագրով պատկերացրեք վագոնի կշռի վերլուծությունը և կառուցեք այն բաղադրիչը, վորը վագոնը շարժման մեջ ե դնում:

17. Տղան բաց ե թողնում վիշտապակի (թռուցիկ, թռչակ) և թելի ծայրը ձեռքին պահած՝ 20 մետր վազում ե այն ժամանակամիջոցում, վորի ընթացքում վիշտապակի ուղղաձիգ բարձրացումը 15 մետր է: Վորոշեցեք վիշտապակի բաղադրյալ շարժումը:

18. Գծագրով ցույց տվեք, վոր հորիզոնական քամին վիշտապակի մակերեսութիւն խփելով այնպիսի բաղադրիչ և տալիս, վոր վիշտապակը վեր ե բարձրանում:

19. Քամին փշում և առագաստի մակերևույթին 45° անկյունով  
1 քառ. մետրի վրա 6 քլզր. ձնշում և գործադրում. ի՞նչ մեծություն  
ունի այդ ձնշման այն բաղադրիչը, վոր առագաստի մակերևույթին  
ուղղահայց է:

IV ԳԼՈՒԽ  
ՀԵՂՈՒԿԻ ՑՆՇՈՒՄԸ

**50. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ.** — Գյուղում անային ամեն տեսակ կարիքիների համար ջուրը սովորաբար ձեռք և բերվում կամ մոտակա բնական աղբյուրից կամ փոքրիկ ջրհորից. այլ ե մեծ քաղաքներում: Քաղաքին բավարար քանակով մաքուր ջուր մատակարարելը նրա բարեկարգության կարևորագույն պայմաններից մնին ե: Վորպեսզի ջուրը բաղաքի բարձր տեղերը և բարձր տները հասնի, պետք ե բարձր ճնշման տակ դանվի:

Քաղաքային ջրանցքներում ջրի բաշխումը երկու յեղանակով է կատարվում. առաջին յեղանակով ճնշումն ստացվում է հեսց ջրի կոտի հետևանքով, կամ ինչպես ասում են «ինքնահոսմամբ» իսկ յերկրորդ յեղանակով ճնշումն ստացվում է այդ նպատակով շինված ջրմուղների միջոցով:

51. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒՅԹԻ ՄԻՋՈ-  
ՅՈՎ, («ԻՆՔՆԱՀՈՍՄԱՄԲ»).—Զրի բաշխումը ծանրության միջո-  
ցով հեշտ ե իրագործել, յեթե քաղաքի մոտակայքում լին կամ  
մի այլ ջրամբար կա, զորի մակարդակն ավելի բարձր ե, քան  
քաղաքի ամենաբարձր շենքերը։ Զրամբարների այդպիսի նպաս-  
տավոր դիրք ուստական հարթավայրում չկա, բայց հաճախ կարելի  
յե տեսնել լեռնային յերկրներում։ Այդպիսի պայմաններում  
ջրամբարից ջուրը լայն խողովակներով քաղաք և հասցվում փոր-  
տեղ ավելի նեղ խողովակների ցանցով ճյուղավորվում ե գետի  
քաղաքի փողոցները, ի վերջո, ավելի նեղ խողովակներով ջուրը  
բաշխվում ե առանձին տներին և շենքերին։ Խողովակներում  
ջուրը «ճնշման» տակ ե գտնվում, այդ իսկ պատճառով բաց  
ծորակներից դուրս ե թափվում առավել կամ նվազ ուժեղությամ  
հոսանքով։

ՅԵԶԵԿՈ

Վորպեսզի ավելի պարզ գաղափար կազմենք ջրի ճնշման մասին, տեսնենք, թե այդ ճնշումն ինչպես ե ստացվում և ինչպես ե չափվում:

52. ՃՆՇՈՒՄ.— Դիցուք մի խորանարդաձև արկղ ունենք,  
վորի յուրաքանչուր կողմը հավասար է 1 գեցիմետրի։ Դիցուք  
այդ արկղը զբած է հորիզոնական սեղանին և մինչև բերանը  
ջրով լիքն է։ Արկղի ամբողջ ջրի կշռը կը լինի 1 քիլոգրամ կամ  
1000 գրամ. այդ կշռի ույժը ճնշում է արկղի հատակը, վորի  
մակերեսը հավասար է 1 քառ. գեցիմետրի կամ 100 քառ. սան-  
տիմետրի։ Հետեաբար, հատակի յուրականչյուր քառ. սանտի-  
մետրին 10 գրամ ույժ է ընկնում։ Այս արտահայտվում են  
հետեյալ բառերով. «հատակի յուրաքանչուր քառակուսի սան-  
տիմետրի վրա ջրի ճնշումը 10 գրամ է»։

ձեռումն այն ուղմն է, զոր ազգում և մակերսի մեկ միավորի վրա: ձեռումները չափելու համար իբրև միավորներ ծառայում են: 1 գրամը 1 բար. սանիթմետրի վրա, 1 բիլոգրամը 1 բար. սանիթմետրի վրա, 1 բիլոգրամը 1 բար. մետրի վրա. Կամ, ոռուական չափեողը՝ 1 գրամներ 1 բար. վոնաշափի վրա լին այլն:

53. ՃՆՇՈՒԽԾԸ ԶԱՆԱԶԱՆ ԽՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԽՄ.—ՅԵթե  
հարթ հորիզոնական հատակ ունեցող ամանի մեջ մի շերտ չուր-  
ածենք 1 սանտիմետր բարձրությամբ, ապա հատակի յուրա-  
քանչյուր քառ. սանտիմետրի վրա կը լինի 1 գրամ ճնշում։  
ՅԵթե շերտի բարձրությունը 3 կամ 7,5 սանտիմետր լինի, ա-  
պա հատակի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրի վրա  
ճնշումը կը լինի համապատասխանաբար 3 կամ 7,5 գրամ։  
Այստեղից հետևում է, որ ազատ մակերեսույթ ունեցող ջրի  
խորության աճման հետ միասին ճնշումն աճում է, և, հատկա-  
պես, յերբ խորությունը 1 սանտիմետր է աճում, ճնշումն ա-  
ճում է 1 քառ. սանտիմետրի վրա 1 գրամ։ Յերբ խորությունն,  
որինակ՝ 10 մետր է աճում, ճնշումն աճում է 1 քառ. սան-  
տիմետրի վրա 1000 գրամ կամ 1 քլգր.։

Ցերէ շրի մակերեվույթին ազատ է, ապա ննջումն ուղիղ համար մատական է խորության:

54. ՃՆՇՄԱՆ ԿԱԽՈՒՄԸ ՀԵՂՈՒԿԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇՌԻՑ.—  
Վերն առաջ բերած դրությունը՝ վոր ճնշումն ուղիղ համեմատական ե խորության, անձիշտ կը լիներ, յեթե յուրաքանչյուր խոր. սանտիմետր ջուրն ստորին շերտերում ավելի ծանր լիներ, քան վերին շերտերում: Բայց ջուրը նույնիսկ շատ մեծ ճշշումների տակ չնշին չափով ե սեղմվում, ուստի և ինչպես ժակերկութի մոտ, այնպես ել խորքերում, 1 խոր. սանտիմետր ջրի կշռը կարելի յէ հավասար համարել 1 գրամի:

Գորեվե ճյուրի 1 խոր. սանտիմետրի կտորը կոչվում ե այդ ճյուրի տեսակարար կտոր: ✓

Որինակ՝ 1 խոր. սանտիմետր մնդիկը կշռում ե 13,6 գրամ: Հետևաբար, մնդիկի տեսակարար կշռը հավասար ե 13,6 գրամի:

Սյստեղից հետևում ե, վոր մնդիկը 13,6 անգամ ծանր ե նույն ծավալով ջրից: Յեթե անոթի մեջ լցված մնդիկի շերտը 1 սմ. բարձրություն ունի, ապա ճնշումը հատակի 1 քառ. սանտիմետրի վրա 13,6 գրամի յէ հավասար: Յեթե մնդիկի շերտի բարձրությունը, որինակ 5 սմ. ե, ապա ճնշումը կը լինի  $13,6 \times 5 = 68$  գրամ 1 քառ. սանտիմետրի վրա:

ՄԵԴԻԿԻ ճնշումն ուղիղ համեմատական ե երա խորուրյանը յեվ տեսակարար կտորին:

Նույն ձևով կարող ենք նաև այսպիսի հաշիվ անել: Մի խոր. սանտիմետր գինու սպիրտը (ալկոհոլ) կշռում ե մոտ 0,8 գր.: Ճնշման մեծանալով սպիրտն ել ե միայն աննշան չափով սեղմվում, այդ պատճառով յեթե խորությունը 1 սմ. ավելանա, սպիրտի շերտի ճնշումը մոտ 0,8 գրամով կածի: Որինակ, յեթե սպիրտի շերտի բարձրությունը 15 սմ. ե, ապա նրա ճնշումը կը լինի  $0,8 \times 15 = 12$  գր. 1 քառ. սանտ. վրա:

Սպիրտի ճնշումն ուղիղ համեմատական ե երա խորուրյանը յեվ տեսակարար կտորին:

Նույնը տեղի ունի նաև ամեն այլ հեղուկի համար, այսինքն Սպաս մակերեվույր ունեցող հեղուկի ճնշումն ուղիղ համեմատական ե այդ հեղուկի խորուրյանը յեվ տեսակարար կտորին:


Վորովինակ մնդիկը, ինչպես և ջուրը, ճնշման մեծանալով շատ քիչ ե սեղմվում, ապա կարելի յէ այնպես համարել, վոր

յերբ խորությունը 1 սմ. աճում ե, ճնշումը 1 քառ. սմ-ի վրա 13,6 գրամով ե մեծանում:

55. ՀԵՂՈՒԿԻ ՃՆՇՈՒՄԸ ՉՈՒՆԻ ԱՆՈԹԻ ՇԱՎԱԼԻՑ ՅԵՎ ՊԵՎ. — Յերեակայենք, վոր մի գլանավին անոթի մեջ, վորի հատակի մակերեսը  $\frac{1}{2}$  քառ. սանտիմետր ե, մի շերտ ջուր ե ածած 1 սանտ. բարձրությամբ: Պարզ ե, վոր ջրի կշռույթի մոտ, այնպես ել խորքերում, 1 խոր. սանտիմետր ջրի կշռը կարելի յէ հավասար համարել 1 գրամի:

Հետևաբար, այդ ճնշումը նույն ե, ինչ վոր կը լիներ, յեթե հատակի մակերեսը 1 քառ. սանտիմետր լիներ, իսկ շերտի բարձրությունը դարձյալ 1 սմ., վորովինակ այս գեղքում ևս յուրաքանչյուր կես քառ. սանտիմետրի վրա կես գրամի ճընշում կը լիներ: Յեթե 10 գրամ կշռու 10 քառ. սանտ. մակերեսի վրա յէ ճնշում գործում, ապա ճնշումը դարձյալ լինում ե 1 գրամ 1 քառ. սանտիմետրի վրա:

Վերցնենք զանազան ձևի և զանազան ծավալի հաղորդակից անոթներ և նրանց մեջ ջուր ածենք (նկ. 45): Յթե լայն անոթի ստորին մասում ճնշումը ավելի մեծ լիներ, քան նեղ անոթի ստորին մասում, ապա ջրի սյուների բարձրությունը անոթի ստորին մասում ճնշում անոթների մեջ նույն մակարդակի վրա յէ կանգնում: Բոլոր անոթների մեջ նույն մակարդակի վրա յէ կանգնում: Նույնը կստանայինք, յեթե ջրի փոխարեն վերցնեյինք մնդիկ սպիրտ կամ վորեն այլ հեղուկ:



Նկ. 45.

Հաղորդակից անոթների մեջ հեղուկը մինուսը մակարդակի վրա յէ կանգնում:

56. ՃՆՇՈՒՄԸ ԿԱԽՈՒՄԸ ՉՈՒՆԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԻՑ.—

Այն փորձում, վոր հենց նոր նկարագրեցինք, Ա անոթի հեղուկի կշռու ճնշում ե ուղղա-

ձիգ դեպի ներքեւ, սակայն այդ ճնշումը հաղորդվում է հորիզոնական ուղղությամբ և միացուցիչ խողովակով և հավասակում է այն ճնշումը, վորով և կետում ազդում է Յ անոթի հեղուկի կշիռը: Ճիշտ նույն պես՝ հավասարակշռություն է ստացվում նաև այլ դեպքերում, ինչպիսի ուղղություն ել ունենամիացուցիչ խողովակը և ինչպիսի հեղուկ ել լինի անոթների մեջ՝ ջուր, սպիրտ, յուղ, թե մի այլ հեղուկ:

Այս նույն յեզրակացության է բերում նաև մշտաշարժ մեքենայի անկարելիության որենքը: Իրոք, յեթե խաղաղ հեղուկի մեջ վորում ճնշումը դեպի մի կողմն ավելի լիներ, բան դեպի մյուս կողմը, ապա ջուրը կակսեր շարժվել դեպի փոքր ճնշման կողմը: Կստացվեր մի հոսանք, վորի մեջ զետեղած փոքրիկ տուրբինն իր պտտմամբ հնարավորություն կը տար աշխատանք ստանալու առանց վորու ծախքի: Բայց մենք զիտենք, վոր այդ անհնարին է:

Խաղաղ հեղուկի սեղ սիենիուկն խորուրյունն ունեցող տեղերում նետում բոլոր ուղղություններով նույն է:

Այժմ հեշտ է հասկանալ թե ինչու ինքնահոսմամբ գործող քաղաքային ջրանցքի խողովակներում ջուրը ճնշման տակ է գտնվում: Խողովակները ջրամբարի ջրի մակարդակից ցած են գտնվում, ուստի խողովակներից բարձր դասավորված ջրաշերտը խողովակների մեջ ճնշում են առաջնուում: Վորով հետեւ այդ ճնշումն անկախ է ավաղանների ձևից ու մեծությունից, այլև խողովակի ուղղություննից, և կախված է միայն ջրամբարի և խողովակի բարձրությունների տարբերություննից, ապա քանի դեռ ջուրն անշարժ է, ջրամբարի՝ քաղաքից մոտ կամ հեռու լինելը վոչ մի նշանակություն չունի: Այս պատճառով ջրանցքի խողովակներում յեղած ջրի ճնշումների տարբերության մեջոցով կարելի յե վորոշել քաղաքի զանազան մասերի բարձրությունների տարբերությունը:

57. ՀԵՂՈՒԿԻ ՃՆՇՄՄՆ ՀԱՇՎՈՒՄԸ. — Նախընթաց հողվածներում առաջ բերած որենքների հիման վրա ստանում ենք հետևյալ կանոնը.

Հաշվելու համար, թե սվյալ խորուրյան սեղ վորեան և հեղուկի նետումը, պեսք և հեղուկի տեսակարգ կտրու բազմապատկեր խորուրյամբ:


Այս կանոնով հաշվելիս անհրաժեշտ է ուշադրության առնել հետևյալ հանգամանքները: 1) Խորությունը պետք է չափել ուղղաձիգ ուղղությամբ՝ տվյալ կետից մինչև հեղուկի ազատ մակերեսույթը. 2) Յեթե հեղուկի տեսակարար կշիռն արտահայտված է նրա մեկ խոր. սանտիմետրի կշռած գրամների թվով, իսկ խորությունը սանտիմետրներով, ապա ճշումն ստացվում է գրամներով մեկ քառ. սանտիմետրի վրա. 3) Յեթե 1 խոր. մետր հեղուկի՝ քիլոգրամներով արտահայտված կշիռը բազմապատկենք մետրերով արտահայտած խորությամբ, ապա ճնշումը կստացվի քիլոգրամներով մեկ քառ. մետրի վրա. 4) Յեթե 1 խոր. գոտնաչափ հեղուկի՝ գրվանքաներով արտահայտած կշիռը բազմապատկենք գոտնաչափերով արտահայտած խորությամբ, ապա ճնշումը կստացվի գրվանքաներով մեկ քառ. գոտնաչափի վրա:

58. ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ԶԱՓԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ. — Վերը բերած որենքները պարզ միջոց են տալիս ջրի ճնշումը ծորակում չափելու: Դրա համար բավական է ծորակին միացնել մի ուղղաձիգ խողովակ և չափել այն բարձրությունը, վորին ջուրն այդ խողովակում համառում է. Ջրի սյունի յուրաքանչյուր սանտիմետրը կը համապատասխանի 1 գրամ ճնշման 1 քառ. սանտիմետրի վրա: Սակայն այս յեղանակը հարմար է միայն փոքր ճնշումների դեպքում, վորովհետև յերբ ճնշումը մի քանի հարյուր գրամ է 1 քառ. սանտիմետրի վրա, խողովակի մեջ պետք է ստացվի մի քանի մետր բարձրության ջրասյուն, վոր, ի հարկեատ անհարմար է:


Զափախողովակը կարելի յե կարճացնել, յեթե ջրի ճնշումը հավասարակշռելու համար, այդ խողովակի մեջ ջրից ավելի ծանր հեղուկ ածենք: Շատ հարմար է այդ նպատակով մնդիկ բանեցնել, վոր ինչպես արդեն գիտենք, 13,6 անգամ ջրից ծանր է. պարզ է, վոր տվյալ ճնշումը հավասարակշռող մնդիկի սյունի բարձրությունը 13,6 անգամ փոքր կը լինի ջրի սյունի բարձրությունից: Այն գործիքը, վոր բաղկացած է մնդիկ պարու-

նակող ծնկավոր խողովակից և ծառայում ե ճնշումները չափելու համար (նկ. 46), կոչվում ե սնդիլիքի բաց մանումետր (անգլայտաշախ):

Սակայն սնդիլիք մանումետրն ել անհարմար է, յերբ ճնշումները շատ մեծ են, այդպիսի դեպքերում բանեցնում են, այսպես կոչված, մետաղական մանումետրը (նկ. 47): Հեղուկը, վորի ճնշումն ուզում ենք չափել, ծորակով ներս ենք թողնում ՅԵԷ միտաղյա կոր խողովակի մեջ, վորի հատվածքը մոտավորապես ձգված ելլիպսի ձև ունի և վորի Է ծայրը փակ է: Յերբ հեղուկը ճնշման տակ խողովակն ե ճափումը:



նկ. 46. ճնշման  
չափումը:



նկ. 47.  
Միտաղական մանումետր:


59. ՃՆՇՈՒԽՄԸ ԶՐԱՆՑՔԻ ՍՈՐԱԿ-ՆԵՐՈՒԽՄ.— Յեթե չափենք միենույն շենքում, որինակ՝ մեր գալրոցում, ջրանցքի զանազան ծորակների մեջ աիրող ճնշումը, ապա կը գտնենք, վոր ճնշումն ամենից ավելի յե ստորին հարկում և քանի վեր ենք բարձրանում, այնքան նվազում ե: Պարզվում է, վոր ճնշման նվազումը ճշտորեն համապատասխանում է վերն արած մեր հաշիվներին, այսինքն, յերբ, որինակ՝ մի մետր բարձրանում ենք, ճնշումը նվազում է 100

գրամով մեկ քառ. սահմանմետրի վրա, իսկ 1 մետր իջնելիս ճնշումը նույն չափով ավելանում է:


Ճնշման փոփոխությունն առաջանում է նրանից, վոր ծորակի մակարդակից վեր գտնվող ջրի շերտի բարձրությունը փոփոխվում է: Ճնշումը չափելով հեշտ ե հաշվել այն բարձրությունը, վորակ ճնշումը միանգամայն կանհետանա:

60. ՃՆՇՈՒԽՆ ՓՈՓՈԽՈՒԽԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈՍՈՂ ՀԵՂՈՒԿԻ ՄԵՋ.— Վերը դիտած որենքները միայն այն դեպքում են իրավացի, յերբ հեղուկը դադարի մեջ է: Յեթե ջրանցքում ճնշումը բավականաչափ մեծ չե, և մենք տան վերին հարկում ծորակը բաց ենք անում այն ժամանակ, յերբ ստորին հարկում ել բաց ծորակ կա, ջուրը շատ դանդաղ է հոսում: Ընդհանրապես նկատված է, վոր ցերեկը, յերբ թե այդ տանը և թե հարկան տներում միաժամանակ շատ ծորակներ են բաց անում, ջուրն ավելի թույլ է հոսում, քան զիշերը, յերբ քիչ ծորակներ են գործում:

Ճնշման փոփոխությունը հոսող ջրի մեջ՝ կարելի յե դիտել այն գործիքի վրա, վոր պատկերացրած ե 48-ըդ նկարում: Այս գործիքը ներկայացնում է ինքնահոսմամբ գործող ջրամցքի մողելը: Բանովթը պատկերացնում է ջրամբարը, 10-ն դիմավոր՝ «մազիստրալ», խողովակը, իսկ ա, թ և օ ուղղաձիգ խողովակները պատկերացնում են այն խողովակները, վորոնցով սնները ջուր են ստանում: Զրի սյուների բարձրությունները ա, թ և օ խողովակներում՝ ցույց են տալիս, թե հորիզոնական խողովակի զանազան տեղերում ինչքան է ջրի ճնշումը:



նկ. 48. Հոսանք չկա: Հեղուկը նույն մակերսովթի վրա յե կանգնած:



նկ. 49. Ճնշումը նվազում է:

Քանի դեռ օ անցքը փակ է, և ջուրը հանդարտ ե նրա

մակարդակը բոլոր խողովակներում նույն բարձրությունն ունի, ինչ վոր Բ ավագանում: Այս նշանակում եւ քանի դեռ բոլոր ծորակները փակ են, ամբողջ հորիզոնական մագիստրալի մեջ ձնշումը նույնն է, ինչ վոր ջրամբարի մոտ: Բայց յերբ 0 անցքը բանանք, և ջուրն սկսի հոսել, մագիստրալի յերկարությամբ ձնշումն այլևս միևնույնը չի մնար, այլ վորքան ավելի հեռանանք ջրամբարից, այնքան ավելի կը նվազի: Այդ նրանից կերևիա, վոր ա, Յ և խողովակներում ջրի մակարդակները կը ցածանան, ինչպես այդ պատկերացրած եւ 49-րդ նկարում: Այս փորձից յերեւմ ե, վոր յերբ ջուրը խողովակով հոսում է, ձնշումը խողովակի մեջ ջրի հոսանքի ուղղությամբ նվազում է, այնպես վոր մեծագույն ձնշումն այնտեղ եւ լինում, վորտեղ ջուրը խողովակի մեջ եւ մտնում, իսկ վորքագույնն այնտեղ, վորտեղ խողովակից դուրս եւ գալիս:


Նկարագրած փորձը հնարավորություն եւ տալիս հասկանալու, թե ինչու, յեւ տան մեջ ջրանցքի ծորակներում ձնշումը փոփոխվում: Յերբ շատ ծորակներ են բացած, ձնշումը նրանց մոտակայքում պակասում է: Բայց ծորակներից հեռու տեղերում ձնշումն ավելի մեծ է: իսկ յեթե բոլոր ծորակները փակ են, և ջուրը հանդարտ է, ձնշումը բոլոր խողովակներում նույնն է:

61. ՋԲԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՅԼ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ .— Խեքնահոսման վրա հիմնված ջրամատակարարվում ունենալը, վորտեղ այդ հնարավոր է, անտեսական տեսակետից խիստ շահավետ է, վորովհետեւ այդ գեպքում ջրի տեղափոխման աշխատանքը կտոտարում է ծանրության ույժը և մեղնից աշխատանքի ծախքը չի պահանջում: Սակայն այդ կարելի յեւ իրագործել միայն այն քաղաքներում, վորոնց մոտակայքում բարձրագիր ջրամարաններ կան: Ինքնահոսմամբ գործող ջրանցքներ կան, որինակ՝ Յերեանում, Դերենում, Անապայում և այլն: Ռուսական հարթավայրի մեծ քաղաքում, ինչպես, որինակ՝ Մոսկվայում, Լենինագրադում, Կազանում, Խարկովում և այլն, այդպրոսի ջրամատակարարումը հնավավոր չէ, և մարդիկ հարկադրված են դիմելու այլ յեղանակների, վորոնց ժամանակ ջուրը քաղաք հասցնելը և բաշխելը աշխատանքի մշտական ծախք և պահանջում: Պարզենք, թե այդպիսի աշխատատանքն ինչպես և կատարվում և բարաքին կափարիչից սկսվում եմ յերկար խողովակ՝ Տ, վոր մըտ-

62. ՋԲՀՈՒՐ.—Փոքր ավանդներում և դյուղերում ջրամատակարարումը ջրհորների միջոցով է հողացվում: Ջրհորից ջուրը բարձրացնելու աշխատանքն իր ամենապարզ ձևով տեղի յեւնենում պարանից կապած դույլի միջոցով, վոր ուղղակի ձեռքով են քաշում: Ավելի հարմար ե այդ աշխատանքը կատարել լծակի (ջրհորի «կուռնկի»), վոլորանի կամ ճախարակների միջոցով: Այս որենքները, վորոնց համաձայն գործում են այս մեքենաները, արդեն տվել ենք առաջին գլուխներում: Ջուրը բարձրացնելու աշխատանքը մարդուն ծանոթ ե շատ վաղ ժամանակներից, և հենց այս աշխատանքի վրա նա հասկացավ, վոր ջուրը ցած տեղից բարձր տեղ հասցնելու համար հարկավոր ե աշխատանք ծախսել: Դուրը բարձրացնելիս կատարվող ոգտակար աշխատանիք հավասար է ցի կուրին բազմապատճեն նրա ուղղաձիգ բարձրացմամբ:

63. ԾԾՈՂ ՋԲՀԱՆ.—Մի կողմ թողած ջուրը դույլերով բարձրացնելու այս նախնական յեղանակը, կան մեքենաներ, վորոնցով այդ աշխատանքը շատ ավելի հարմար ե կատարվում: Այդ տեսակ պարզագույն մեքենաներից մեկն ե սովորական ծծող ջրհորը, վոր գործածքում եր հունաստանում արդեն Աղեքսանդր Մեծի (350 ա. Ք. թ. մ.) ժամանակները:

50-րդ նկարի միջոցով դժվար չեն հասկանալ, թե այդպիսի ջրհորն ինչ կազմություն ունի և ինչպես է գործում: Ջրհանի գլխավոր մասը կազմում է Ը սնամեջ զլանը, վորի հատակին շինված և կափարիչը, մասանի դռան նման, միայն դեպի վեր եւ բարձրանում: Այս կափարիչը կանվանենք ներքին կափարիչ: Գլանի ներսն ընդհուպ շարժվում է Ծ մխոցը, վորի միջի անցքը փակված ե միայն դեպի վեր բարձրացող օն կափարիչով: Այս յերկորդ կափարիչը կոչվում է արտաքին կափարիչ: Ներքին կափարիչից սկսվում ե մի յերկար խողովակ՝ Տ, վոր մըտ-



Նկ. 50. Ծծող ջրհան:

նում ե այն ջրամբարը, վորից ջուր պետք ե հանվի։ Մխոցը բարձրացնելիս՝ ողը, ներքին կափարիչը բանալով՝ որ խողովակից մտնում ե զլանը։ Յերբ մխոցը կանգ ե առնում, ներքին կափարիչը փակվում է, և ողը չի կարողանում դլանից յետ գնալ խողովակի մեջ։ Մխոցն իջեցնելիս դլանի մեջ դտնված ողն արտաքին կափարիչը բաց ե անում և դուրս գալիս։ Յերբ մխոցը նորից բարձրացնում ու իջեցնում ենք, նույն յերկույթը կրկնվում է, այսինքն ողի մի նոր քանակ դլանն ե մըտնում և այստեղից դուրս գալիս։ Մխոցը մի քանի անգամ վեր ու վար շարժելուց հետո ջուրը խողովակով բարձրանում է, բաց անում ներքին կափարիչը, ինչպես առաջ ողն եր բաց անում, անցնում դլանը, այնուհետև բաց անում արտաքին կափարիչը և, վերջապես, դուրս թափվում։

Հարց ե առաջանում, այդ ի՞նչ ույժ ե, վորի ազդեցությամբ ողը, կափարիչը բարձրացնելով խողովակից անցնում ե զլանը։ Հաչակավոր հույն փիլիսոփա Արիստոտելը (384—322 թ. Ք. Ճն. ա.) և նրա հետևորդներն այդ յերկույթը բացատրելու համար ասում ենին, վոր «բնությունը դատարկությունից վախենում ե», բայց ընթերցողը հեշտ կնկատի, վոր այս բառերը յերկույթն ամենեին չեն բացատրում։

64. ՈԴԻ ԿՇԵԽ ՈՒԽԻ. — Ով առիթ ե ունեցել ուժեղ քամու զեմ վազելու կամ հեծանվով գնարու, ով տեսել ե վոթութիկների պատճառած ավերածությունները, ովդիտել ե հողմազացի պատվելը, պետք ե պարզ զգա, վոր ողը, չնայած իր անտեսանելի լինելուն, նույնքան նյութական ե, վորքան և ջուրը կամ քարը, այս պատճառով ողն ել պետք ե կշիռ ունենաւ վորքան հայտնի յե, ողի կշռի խնդիրը վոչ վոք չի պարզել մինչև Գալիլեյը, սա առաջինը փորձեց կշռել մի ապակյա գունդ, վորի մեջ աշխատում եր վորքան կարելի յե շատ ոդ մտցնել։ Սր ժամանակ կշռի հավելում եր ստացվում, վոր Գալիլեյը միանգանայն ուղղի վերաբրում եր գնդի մեջ լցրած ողի կշռին։ Բայց Գալիլեյին ևս չհաջողվեց պտրզել, վոր Ջրհանի մեջ ջուրը վեր բարձրացնող պատճառը ողի կշռին ե, և վոչ թե այն, վոր «բնությունը դատարկությունից վախենում ե»։ Յերբ Գա-

լիլեյին հաղորդեցին, վոր 40 վոտնաչափ (մոտ 12 մետր) յերկարության խողովակ ունեցող ջրհանում ջուրը մոտ 33 վոտնաչափ (մոտ 10 մետր) ե միայն բարձրանում և չնայած վոր վլանում ու խողովակի վերին մասում դատարկություն ե առաջանում, ջուրն ավելի վեր չի բարձրանում, Գալիլեյն ընկապտարակուսանքի մեջ, վոր փորձեց փարատել այսպիսի դատաղությամբ։ «Դատարկության վախը, — զրում եր նա, — սահման ունեցող ույժ ե, և այդ սահմանը կարելի յե չափել Ջրի այն ամենամեծ սյունի բարձրությամբ, վոր արդ ույժի ազդեցությամբ ստացվում ե»։

Գալիլեյի մոտ բարեկամ և աշակերտ Տորիչելլին (1608—1647) ավելի մեծ հաջողությամբ հետազոտեց այդ հարցը և հանգավ այն յեզրակացության, վոր մթնոլորտային ողի կշռին ե պատճառը, վոր ջուրը ջրհանի խողովակում բարձրանում ե։

65. ՏՈՐԻՉԵԼԼԻԻ ՓՈՐՁԸ. — Տորիչելլին այսպես եր դատում. վորովհետև մնդիկը 13,6 անգամ ծանր ե Ջրից, ապա մնդիկի այն սյունը, վոր հավասարակշռում ե մթնոլորտի ողը, պետք ե 13,6 անգամ ցած լինի Ջրի սյունից։ Այս բանը Տորիչելլիի ցուցմունքով նրա յերկու աշակերտներն ստուգեցին մի փորձով, վոր ստացավ «Տորիչելլիի փորձ» անունը։ Այդ փորձը կարելի յե այսպես կատարել։ Մի ծայրը փակ ապաց յա խողովակը, վորի յերկայնությունն 80 սմ. լից պակաս չե, մնդիկով լցնում են, բերանը մատով փակում և այնուհետև այնպես շրջում, վոր մատով փակած ծայրն ընկղմանի մնդիկ պարունակող մի բաժակի մեջ։

Շրջած խողովակին ուղղաձիգ դիրք տալուց հետո մատը բերանից հեռացնում են։ Այդ ժամանակ մնդիկի սյունը խողովակի մեջ այնքան ե իջնում, վոր խողովակում մնդիկի մակարդակը մոտ 76 սմ. բարձր ե լինում, քան բաժակում։ Մնդիկի ծանրաչափը, վոր ներկայում գործածում ենք, այլ բան չե, քան Տորիչելլիի խողովակը, վոր պահպանակի մեջ ե զրված և աստիճանների բաժանված մի քանոն ունի՝ մնդիկի սյունի բարձրությունը չափելու համար։

Մրենուրային ողի նեռումը հավասարակում ե սնդիկի այնպիսի սյունի նեռմամբ, վորի բարձրությունը 76 սմ. ե.

66. ԻՆՉՈՒԻ ԶՐՀԱՆՈՒՄ ԶՈՒՐԾ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Ե.—Այժմ մենք կարող ենք պարզել այն հարցը, թե ինչու յե ջուրը ջրհնանի խողովակում բարձրանում և ինչու այդ բարձրացումը չի անցնում վորոշ մեծությունից, վոր կազմում ե 10 մետրից քիչ ավելի: Այդ նրանից ե կախված, վոր հեղուկը միայն այն պայմանում կարող ե հավասարակշռության մեջ լինել, յերբ ճնշումն ամեն ուղղությամբ նույնն է. իսկ յեթե ճնշումը նույնը չե, հեղուկը շարժվում ե փոքրագույն ճնշման կողմը: Յերբ ջրհնանի խողովակի վերին մասից ողը հեռացվում ե, խողովակի ներսը ջրի վրա ճնշումը ավելի փոքր ե լինում, քան մինուրատի ճնշումը ջրի մնացած մակերեսութիւնից վրա. դրա շնորհիվ ջուրը ներս ե մղվում խողովակը և սրա մեջ բարձրանում: Այս բարձրացումը դադարում ե, յերբ ջրի սյունի բարձրությունն այնպիսի մեծության և հասնում, վոր խողովակի ներքի մասում ներսի և զրախի ճնշումները հավասարվում են:

67. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԶՐՀԱՆԵՐԻ ՄԻԶՈՑՈՎ.—Քաղաքներում հարմար չե ջրի մատակարարումն առանձին ջրհնուրների միջոցով, իսկ յեթե մոտակայքում բարձրացիր հարմարավոր ջրամբարներ չկան, ապա հնարավոր չե ունենալ նաև ինքնահոսմամբ ջրամատակարարում: Այսպիսի դեպքերում ջուրը վերցնում են մոտակա լճից, գետից կամ հասուլ այդ նըպատակով շինած մեծ ջրհորից և ջրհանների միջոցով անհրաժեշտ ճնշում հաղորդելով մղում են խողովակների մեջ:

Մեր նկարագրած ծծող ջրհանն այդ նպատակի համար հարմար չե, վորովհետև նա չի կարող այնպիսի ճնշում առաջացնել, վոր ջուրը քաղաքի բարձր աների բոլոր խողովակներում իր գերքը պահպանի: Այդ բանին կարելի յե հասնել մի այլ տեսակի ջրհնանի միջոցով, վոր այժմ կը նկարագրենք:

68. ՄԴԻՉ ԶՐՀԱՆ.— 51-րդ նկարը գաղափար ե տալիս այսպես կոչվող միջիչ ջրհանի մասին. սա միայն նրանով ե տարբերվում ծծող ջրհանից, վոր արտաքին ՕՎ կափարիչը շինված ե վոչ թե մխոցի, այլ մի հատուկ խողովակի մեջ, վորը ճյուղափորփում ե զլանից սրա ստորին մասում: Պ մխոցը բարձրացնելիս՝ ջուրը մինուրութային ճնշման ույժով ներս ե


մղվում զլանը, իսկ իջեցնելիս ներքին կափարիչը փակվում ե, և ջուրը, արտաքին կափարիչը բանալով մտնում ե խողովակը. նայած թե մխոցն ինչ ույժով ենք իջեցնում, ջուրն այդ խողովակը մտնելիս յենթարկվում ե մեծ կամ փոքր ճնշման:

Այսպիսի ջրհանը ջրամատակարարման գործում բանեցնելու համար պետք ե իմանալ, թե ջրանցքի ցանցն ինչ ճշում ե պահանջում և դրա համար ճնշման ինչ ույժ պետք ե ազդի մխոցի վրա. ուրիշ խոսքով, պետք ե իմանալ, թե մխոցի առաջացրած ճնշումն ինչպես ե բաշխվում ջրանցքի խողովակի ների ցանցում:


#### 69. ՊԱՍԿԱԼԻ ՈՐԵՆՔԸ.—Նախորդ

հողվածի վերջում դրված հարցին պատասխանելու համար վերադառնաք

ինքնահոսմամբ գործող ջրանցքի մողելին (<§ 60>): Խողովակների սիստեմի մեջ ճնշումը չի փոփոխվի, յեթե R անոթի մյուս կողմում ավելացնենք Ա փոքրիկ խողովակը, վոր այդ անոթը միացնում ե մղիչ ջրհանի հետ (նկ 52). Քանի դեռ Պ մխոցն 10 խողովակի մակարդակի վրա յե գտնվում, մխոցի վրա ճնշումը հավասար է 10 ամբողջ խողովակում տիրող ճնշման, այսինքն հավասար է այ, եթ կամ օց ջրասյուների ճնշման:



Նկ. 52 ճնշումը գեպի բուրքը կողմերը հավասար ուժով ե հաղորդվում:



Նկ. 51 Մղիչ ջրհան:


Այժմ յեթե մխոցն սկսի աշխատել, այսինքն բարձրարանա և ջուր վերցնելով նորից իջնի, ապա ջուրը կը մղվի խողովակների ներսը և օգ մակարդակից կը բարձրանա մինչև հիմ մակարդակը: Ճնշման աճումը կը չափվի մակարդակի ըստ բարձրացմամբ

և բոլոր խողովակներում նույնը կը լինի: Ճնշումը հավասար չափով կամի նաև թում, օ-ում, ա-ում, թ-ում, և այլն: Այսպիսով թում գործադրած ճնշումը խողովակների ամբողջ սիստեմի մեջ ճնշման նույն աճումն է առաջ բերում: Հետեւաբար, յեթե ջուրը հանդարտ է, ջրհանի առաջացրած ճնշումը խողովակների ամբողջ սիստեմի մեջ միատեսակ ուժով է հաղորդվում: Նույնը կստացվեր նաև այն գեղաքում, յեթե օ, ֆ և ց կետերում խողովակները փակ լինելին: Այսպիսով մենք հանգում ենք մի դրության, զոր առաջին անգամ Պասկալի և պընդել և վորը կրում է Պասկալի որենի անունը:

Փակ անորում գտնվող հեղուկի գրա գորեվե տեղում գործադրած 66-ումը 1) հավասար ուշով հաղորդվում է զեպի բոլոր կողմերը, այնպես զոր հավասար մեծության մակերեւույթներն ամենուրեք հավասար 66-ումներ են կրում, 2) այդ 66-ումներ մակերեւույթներին ուղղահայաց են ազդում:

70. ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՄԵՐԵՆԱ. — Պասկալի որենի իմաստը լավ պարզելու համար՝ դիտենք նրա հիման վրա կառուցած հետեւյալ պարզ մեքենան: Յերկակայենք ջրով լի մի անոթ (նկ. 53), վորը բաղկացած է խողովակով միացրած յերկու գլաններից, մեկը՝ լայն, մյուսը՝ նեղ: Յերկու զլանն ել ընդհուպ շարժվող մխոցներ՝ ունին, վորոնց ընդմիջական հատվածքները դիցուք հավասար են 1 քառ. սմ.-ի և 100 քառ. սմ.-ի: Յեթե փոքր մխոցը ճնշենք 1 քլգր. ույժով, ապա մեծ մխոցի վրա ևս ճնշումը կը լինի յուրաքանչյուր քառ. սմ.-ին 1 քլգր., այսինքն մեծ մխոցը բարձրացնող ույժը կը լինի 100 քլգր.: Այսպիսով հեղուկի սիջոցով հաղորդվող ույժը մխոցների մակերեսներին ուղիղ համեմատական է մեծանում: «Այստեղից հետեւում է, — ասում է Պասկալը, — վոր հեղուկով լի անոթը մի նոր մեքենա յե, վորը հսարավորություն է տալիս ույժն այնքան անգամ մեծացնելու, վորքան կամենանք»:

71. ՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿՈՒՄԸ ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՄԵՐԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ. — Ասածներից հետեւում է, զոր յեթե փոքր մխոցը ճնշման ենք յենթարկում և մեծ մխոցով այս ինչ դիմադրությունը հաղթահարում, ապա ույժի մեջ այն անգամ ենի վասակում, վորքան անգամ մեծ մխոցի մակերեսը մեծ է փոքրի մակերեսից:



Նկ. 53. Մեկ զրկանքան կարող է 100 զրկ. բարձրացնել:

72. ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ՄԵՐԵՆԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՏԱՅՈՒՆՔ. — Վորպեսզի հաշվենք, թե ջրաբաշխական մեքենայի յերկու մխոցները տեղափոխվելիս ինչ աշխատանք են կատարում, պետք է վորոշենք, թե այդ մխոցների տեղափոխություններն իրարից ինչ կախում ունեն: Դիցուք փոքր մխոցը, վորի վրա 1 քլգր. ույժ է ազդում, 1 մետր իջավ: Այդ ժամանակ մխոցը փոքր զլանից գուրս կը մղի 100 լիոր. սի. ջուրը Զրի ծավալն այս նույն չափով կտվելանա մեծ մխոցի տակ. բայց վորովհետեւ մեծ մխոցի մակերեսը 100 քառ. սմ. է, ջուրը նրա տակ կը բարձրացնա միայն 1 սմ. կամ 0,01 մետր: Թե մեկ և թե մյուս մխոցի համար ույժը բազմապատճենով ճանապարհով տեսնում ենք, վոր ույժերի կատարած աշխատանքները յերկու մխոցների համար հավասար են:

$$1 \text{ քլգր.} \times 1 \text{ մետր} = 100 \text{ քլգր.} \times 0,01 \text{ մետր:}$$


Ջրաբաշխական մեքենայի մեջ աշխատանքների նույնական հավասարություն կստանանք նաև բոլոր այլ գեղաքերում, ինչ մեծություն ել ունենան մխոցները և սրանց համապատասխան տեղափոխությունները: Այսպիսով ջրաբաշխական մեքենայի համար աշխատանքների հավասարության որենին իր ույժը պահպանում է:

**73. ԶԲԱԲԱՇԽԱԿԱՆ ՄԱՄՈՒԻԼ.** — Տեխնիկայի մեջ մի շաբք մեքենաներ են գործածվում, վորոնք հիմնված են Պասկալի որենքի կիրառման վրա: Իբրև այդպիսի մեքենայի որինակ կարող ե ծառայել ջրաբաշխական մամուլը (նկ. 54): Այդ մեքենան բաղկացած ե մի մեծ ամրապինդ գլանից, վորը խողովակի միջոցով միացած ե մղիչ ջրհանի հետ (նկ. 51). զլանի մեջ մի մխոց ե շարժվում, վորի մակերեսը շատ ավելի մեծ ե, քան ջրհանի մխոցինը: Լծակի միջոցով շարժման մեջ են դնում ջրհանի մըխոցը: Այդ ժամանակ ջուրը գլանի մեջ ե մղվում և բարձրացնում Յ մխոցը: Այս, ինչ վոր պետք ե մակել, որինակ բարակի հակը, դնում են մխոցին ամրացրած Ծ տախտակի վրա: Յերբ մխոցը բարձրանում ե, տախտակը հակն ահազին ույժով սեղմում ե մի ամրապինդ սկավառակի, վոր անշարժ հաստատված ե զլանի վրա:

Նույն սկզբունքով ե շինվում նաև ջրաբաշխական դամկրատը, վոր ծառայում ե ծանրություններ բարձրացնելու համար:

#### 74. ՃՆՇՄԱՆ ԿԱՆՈՆԱԿՈՐՈՒՄԸ.


— § 60-ում մենք յիշատակեցինք, վոր ծորակները բանալիս և փակելիս ջրանցքի խողովակներում ճնշումը փոփոխվում է: Վորպեսզի ճնշման այդ արագ փոփոխությունները տեղի չունենան, ջրանցքի ցանցը պետք ե այնպես շինել, վոր ավելի «ճկուն», ավելի «հարմար-փող» լինի: Զուրն ըստինքյան գրեթե անճնշելի յե, այդ պատճառով ել ջրի հոսանքի հանկարծական առաքումը կամ դադարեցումը խիստ ցնցում են խողովակները, վորոնք այդպիսի դեպքերում կարող են պատըռվել:




նկ. 54 Ջրաբաշխական մամուլ:

մար յերկու տեսակ հարմարույթ են գործածում՝ ջրաճնշական աշտարակը և «ողային բարձր» («ողալից ընդունարանը»):

**75. ԶԲԱԲՆՇՄԱՆ ԱՇՏԱՐԱԿ.** — Ջրաճնշական աշտարակը պարզապես մի մեծ, բարձր անոթ ե, վոր վերեկից բաց ե, իսկ ներքեւից միացքած ե ջրանցքի խողովակների և ջրհանի հետ (նկար 55): 52-րդ նկարում պատկերացրած մեղելի մեջ R անոթին այդպիսի ջրաճնշական աշտարակի դեր ե խաղում: Յերբ արագ դուրս հոսելիս կամ հանկարծ կամգ առնելիս ջրի շարժումը փոփոխում է, այդ միայն այն հետևանքն է ունենում, վոր ջրի մակարդակն աշտարակի մեջ բարձրանում ե կամ ցածանում: Կը նշանակի՝ այս աշտարակը կարող ե ջրանցքի ցանցի համար պահեստի ջրամբարի դեր կատարել ջրհանի փշանալու դեպքում:



նկ. 55. Ջրաճնշական աշտարակ:



նկ. 56. Ողային բարձր:

**76. ՈԴԱՅԻՆ ԲԱՐՁՐ.** — Ողային բարձր մի գմբեթաձև անոթ ե, վորը լցված ե ողով և միացված ջրանցքի ցանցին, ինչպես ցույց ե տված 56-րդ նկարում: Ոկը, ջրի հակառակ, կարող ե խիստ սեղմիել, ուստի յերբ ճնշումը խողովակներում փոփոխում է, ողը մերթ սեղմիլով, մերթ ընդարձակվելով ջրին հաղորդում ե պահանջման առածքականությունը: Զանազան ջրհաններում և հրդեհաշիջ խողովակներում այդպիսի

ողային բարձեր են շինում, վորպեսզի հոսանքը մխոցի հարվածների ընդմիջումների ժամանակ չընդհատվի։ Ջրանցքի այն ծորակների մոտ, վորոնք տնային գործածության համար են, խողովակը յերբեմն ծորակից քիչ բարձր է տարվում (նկ. 57)։ Խողովակի այդ հավելվածի մեջ պարունակվում է ողային բարձկազող ոդ, վորի շնորհիվ թուլանում է ջրի այն հարվածը, վոր ծորակին արագ փակելիս ստացվում է։

Ճեղուկները պինգ մարմինների նման,  
ինեւեցիա ունեն լեզ յերք շարժվել են  
սկսում, նզում են իրենց շարժումը շա-  
րունակել։



### 77. ՈԴԻ ԱՌԱԶԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԲ. ԲՈՅԼ-ՄԱՐԻՈՏՏԻ ՈՐԵՆՔԸ. — Ոդաւ

նկ. 57.

յին բարձի գործողությունը լիովին պարզելու համար պետք է իմանալ, թե ոդն ինչքան է սեղմակում, յերբ ճնշումը տվյալ չափով մեծանում է։ Անդիքացի գիտնական Բոյլ (1627—1691) և Փրանսացի գիտնական Մարիոտտը (1620—1684) գրեթե միաժամանակ և միմիանցից անկախ գտան այն որենքը, վոր դազի ծագալի փոփոխությունը կապակցում է ճնշման փոփոխության հետ, ուստի այդ որենքն ընդունված է կոչել հիշյալ յերկու հետազոտողների անունով։ Այդ որենքը պարզաբանելու համար կարող ենք կը լինեն Բոյլի փորձը։ Վեցնենք մի ծուած խողովակ, վորի մի ծունկը՝ կարձը, փակ է, իսկ մյուսը՝ բաց (նկ. 58)։

Բաց ծնկան մեջ այնքան մնդիկ ածենք, վոր յերկու ծնկներում միենույն զի մակարդակի վրա կանգնի։ Այդ ժամանակ խողովակի յերկու ծնկներում թե մնդիկի սյուները հավասար բարձրություն կունենան և թե ոդի ճնշումը նըրանց վրա միենույնը կը լինի։ Դիցուք այդ ժամանակ կարձ ծնկում ոդի սյունի ած բարձրությունը 18 սմ. է, և բարոմետրը ցույց է տալիս, վոր մթնոլորտի ճնշումը 76 սմ. է։ Բաց ծնկան մեջ այնքան մնդիկ ածենք, վոր մակարդակների և տարբերությունը 76 սմ. դառնաւ ական բայց կը լինի սյունի ճնշումը և 76 սմ. բարձրության մնդիկային սյունի ճնշումը և մթնոլորտային ոդի

նկ. 58. Բոյլի փորձը։ Այն ժամանակ բաց ծնկան մեջ կը լինի և 76 սմ. բարձրության մնդիկային սյունի ճնշումը և մթնոլորտային ոդի

ճնշումը, վոր միասին կը կազմի  $76 \times 2$  սմ. ճնշում։ Ուրեմն ճնշումը 2 անգամ կաճի։ Միենույն ժամանակ կը նկատենք, վոր ոդի սյունի յերկարությունն 9 սմ. և դարձել, այսինքն ոդի ծագալը 2 անգամ փոքրացել է։ Յեթե ելի մնդիկ ածելինք, մինչև վոր մթնոլորտային ճնշումից 3 անգամ մեծ ճնշում ստացվեր, առաջ կը տեսնելինք, վոր ոդը յերեք անգամ փոքր ծագալ ստացավ։

Զանազան ճնշումների տակ ձիշտ չափումներ կատարելուց հետո պարզվեց, վոր Բոյլի փորձի արդյունքները մոտավորապես նույնն են բոլոր գազերի համար։

Այսպիսով հանգում ենք Բոյլ-Մարիոտտի հետեւյալ որենքին։

Գազի մի գորու զանգվածի ծագալը հաստատուել բարեխառնության գեպենում հակագարե համեմատական և այն նեւման, վորին այդ գազը լիներկան է։

78. ՄԹՆՈՂՈՐԾԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ ԶԱՆԱԶԱՆ ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. — Ֆրանսացի գիլիստովա Պասկալը (1623—1662) Տորիչելիի փորձն ուսումնասիրելով հանգավ այն յենթադրության, վոր բարձր տեղերում, որինակ՝ սարի գլխին, Տորիչելիի խողովակի մեջ մնդիկի սյունն ավելի փոքր պետք է լինի, քան հովտում, վորովհետեւ սարից վերև ոդի շերտն ավելի փոքր է, քան հովտից վերև։

Պասկալն իր փորձը կատարեց մոտակա մի սարի վրա և տեսավ, վոր այնտեղ մնդիկի սյունը մոտ 7 սմ. ցած և կանգնուում, քան հովտում եր ստացվեր, և յերբ խողովակը նորից հովիտ տեղափոխեց, նկատեց, վոր մնդիկի սյունը նորից նախկին բարձրության հասավ։ Այսպես ուրեմն, քանի բարձրանում ենք, մթնոլորտային ճնշումն այնքան ավելի նվազում է։

Վորովհետեւ ոդը հեշտ և սեղմակում, առաջ և տարբեր բարձրություններում, վորաեղ ճնշումները տարբեր են, ոդի տեսակարար կը լինը տարբեր է, ուստի ոդի ճնշումը չի կարող այնպես փոփոխվել, ինչպես հեղուկի գեղքում, այսինքն ուղիղ համեմատական վերել գանգող ոդաշերափ խորության։ Սակայն Բոյլ-Մարիոտտի որենքի հիման վրա հսարաւոր և հաշվել, թե ինչպես պետք է փոխվի ճնշումը, յերբ ծովի մակերեսութիւց

հաշված բարձրությունը փոխվում է։ Այս պատճառով բարումետրական չափումների միջոցով գոնելով մթնոլորտային ճնշումը, կարելի յե վորոշել տեղի բարձրությունը։ Բարձրությունները վորոշելու այս յեղանակը հաճախ բանեցնում են բարձր սարեր յենելիս։

79. ՄՆԴԻԿԻ ԲԱՐՈՄԵՏՐ. — Մնդիկի բարոմետրը, վորը թե գիտական և թե գործնական նպատակների համար մի խիստ կարեոր գործիք է, բաղկացած է Տորիչելիի խողովակից, վորի ստորին ծալրն ընկղմված է վոչ թե անոթի, այլ մնդիկով իլ մի կաշյա պարկի մեջ։ Թե խողովակը, և թե պարկը զրկած են մետաղյա պահպանակի մեջ։ Վերջինս ունի մի նուրբ աստիճանացույց, վորի միջոցով չափում են բարոմետրական սյունի բարձրությունը։ Մի քանի նախազգուշություններ պահպանելով բարոմետրական սյունի բարձրությունը կարելի յե շատ ճիշտ չափել այսպես վոր լավ բարոմետրները պատկանում են ֆիզիքական ամենանուրբ գործիքների թվին։ Նայած յեղանակին՝ միենույն տեղում մթնոլորտի ճնշումը յերբեմն մեծ է լինում, յերբեմն փոքր, ըստ այդմ ել բարոմետրական սյունը յերբեմն բարձր է լինում, յերբեմն ցած։ Այսպես, որինակ՝ Մոսկվայում բարոմետրական սյունը յերբեմն միայն 72 սմ. է լինում, յերբեմն ել համոււմ է 78 սմ.-ի։

Միջին Ռուսաստանում փոքր մթնոլորտային ճնշումը համապատասխանում է միգալատ, փոթորկալի յեղանակին, իսկ մեծ ճնշումը՝ պարզ, խաղաղ յեղանակին։ Բարոմետրական սյունի բարձրության փոփոխությունը սովորաբար նկատվում է յեղանակը փոխվելուց միքանի ժամ, նույն իսկ մի ամբողջ որ առաջ։ Այս պատճառով բարոմետրական դիտողությունների միջոցով կարելի յի յեղանակի փոփոխությունները կանխասել։ Այդպիսի կանխասացությունները հատկապես այն ժամանակ են ավելի ճիշտ լինում, յերբ դիտողությունները կատարվում են վորեւ մեծ ըրջանի բազմաթիվ վայրերում միաժամանակ։ այս դեպքում վոչ միայն մթնոլորտային ճնշումն է վորոշվում, այլ վորոշվում ենակ ուրիշ տվյալներ, ինչպես որինակ՝ բարեխառնությունը, ոդի խոնավությունը, ամպամածությունը, քամու ուղղությունն ու ույժը և այլն։

80. ՈԴԻ ՃՆՇՄՄՆ ՀԱՇՎՈՒՄԸ. — Մթնոլորտի միջին կամ, ինչպես ասում են, նորմալ ճնշման ժամանակ ողը յերկրի մակերևույթի վրա նույն ճնշումն է գործում, ինչ վոր մնդիկի 76 սմ. բարձրության շերտը։ Այստեղից կարող ենք հաշվել, թե այդ ճնշումը յուրաքանչյուր քառ. սմ.-ի վրա քանի գրամ է։ Պարզ է, վոր յերկրի մակերևույթի յուրաքանչյուր քառ. սմ.-ը յենթակա յե այնպիսի ույժի ճնշման, վոր հավասար է 76 խոր. սմ. մնդիկի կշռին։ իսկ այս կշիռը հավասար է՝

$$13,6 \times 76 = 1033,6 \text{ գրամ}.$$

Այսպիսով նորմալ մթնոլորտային ճնշումը մոտ 1033 գրամ է, կամ կլոր թվով 1 քիլոգրամ, յուրաքանչյուր քառ. սանտիմետրի վրա։

Տեխնիկայում ճնշումը հաճախ չափում են մբնուրցներով (արմութերներով)։ 1 քիլոգրամ ճնշումը 1 քառ. սմ.-ի վրա կոչվում է 1 մթնոլորտ ճնշում։ Յեթե որինակ, գոլորշու ճնշումը կաթսայում 12 քիլոգրամ է յուրաքանչյուր քառ. սմ.-ի վրա, ապա ասում են վոր ճնշումը 12 մթնոլորտ է։

Նորմալ մբնուրցային նեռումը յուրաքանչյուր բառ. սանտիմետրի վրա 1 քիլոգրամից բիշ ավելի չե։ Մբնուրցային ոգում նեռումը հաղորդվում է զեպի բոլոր կողմերը հավասար ույժով, ինչպես այդ տեղի ունեցե հեղուկի մեջ։

81. ՄԱԳԴԻԲՈՒԹՔԱՆ ԿԻՍԱԳՆԴԵՐ. — Մթնոլորտի ճշման ազդեցությունները սրանից 300 տարի առաջ մանրամասն հետազոտել ե գերման գիտնական Ռուտ Փոն-Գերիկեն (1602-1686), վորը վարում եր Մագդեբուրգի քաղաքապետի պաշտոնը։ Գերիկեյի բազմաթիվ փորձերի մեջ ամենահետաքրքրականներից մեկը հետևյալն է։ Նա վերցնում եր յերկու սնամեջ կիսագունդ, բերան բերանի իրար հետ լավ միացնում, վոր բաց տեղ չմնա, և ապա նրանց միջև գոյացած տարածությունից ողիան մեքենալով ողը հեռացնում։ Այն ժամանակ, ինչպես և նախատեսել եր Գերիկեն, մեծ ույժ եր հարկավոր լինում կիսագնդերն իրարից բաժանելու համար, վորովհետեւ այդ բանին արգելք եր հանդիսանում շրջապատող մթնոլորտային ոդի ճնշումը։ Գերիկեն հանդիսավոր պայմաններում այս փորձը կատարեց Ֆերդինանդ


Ո կայսեր և ռայխստագի անդամների ներկայությամբ։ Մոտ 40 սմ. տրամագիծ ունեցող կիսագնդերից ողը դուրս հանեցին, վորից հետո այդ կիսագնդերն իրարից բաժանելու համար կարիք յեղալ 16 ձիու ույժ բանեցնել (նկ. 58 ա)։

82. ԽՆՉՊԵՍ Ե, ՎՈՐ ՄԱՐԴԻԿ ԴԻՄԱՆՈՒՄ ԵՆ ՄԹՆՈԼՈՐԾԻ ՃՆՇՄԱՆՆԲ. — Մառլորտի ճնշումը 1 քիլոգրամ է 1 քառ. սանտիմետրի վրա. 1 քառ. մետրի վրա այդ կազմում է 10,000 քիլոգրամ ճնշում։ Հասակավոր մարդու մարմնի ամբողջ մակերեսույթը կարելի յե համարել 1,5 քառ. մետր։ Հետեաբար, մարդու մարմնի վրա մթնոլորտը ճնշում է զործում 15,000 քիլոգրամ ույժով, վոր ոռոսական չափերով մոտ 1,000 փութ է կազմում։ Այսուեղ հարց է ծաղում՝ ինչպես ե, վոր կարողանում ենք այդ ահազին ճնշմանը դիմանալ։ Այդ նրանով ե բացատրվում, վոր մեր մարմնի ներսն ես, արյան և հյուսվածքների մեջ, ող կա, վորը ներսից նույն ուժով է ճնշում, ինչ ույժով զրսից մթնոլորտը։ Վոր մեր մարմնի մեջ ող կա, այդ կարելի յե հետեւյալ փորձով իմանալ։ Վերցնենք ներքելը բաց լայն շալ ձեւ ունեցող մի անոթ, դնենք ողնան մեքենայի սկավառակի վրա և բերանն ափով ծածկենք (նկ. 59)։ Ողն անոթից հեռացնելու միջոցին մթնոլորտային ճնշման ազգեցությամբ մեր ձեռքը վոչ միայն ամուր սեղմակում է անոթին, այլև ափի կողմից խիստ ուռչում է։ Այս նրանով ե բացատրվում, վոր ափի հյուսվածքների մեջ յեղած ողը, զրսի ճնշումից ազատվելով ընդարձակվում է և հյուսվածքի բջիջները ձգում։ Այս նույն պատճառից են առաջանում ցավի այն զգայությունները, վոր ունենում է ողաչուն մեծ բարձրունքներում։ Շատ արագ բարձրանալիս յերենի պատճառում է, վոր մարմնի ներսը յեղած ողի ճնշման հետեւանքով կաշվից արյուն և դուրս զալիս։

83. ԼՈՂՈՒՄ, ԱՐՔԻՄԵԴԻ ՈՐԵՆՔԸ. — Ամեն մարդ զիտե, թե ինչ հակառական կարեռություն ունի մակույկների, նավե-



Նկ. 59. ՄԹՆՈԼՈՐՏԻ ՃՆՇՄԱՆ ԳՈՎՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՍՏԱՏՈՂ ՓՈՐՁՔ.




րի, շոգենավերի լողալու հարցը ահա այս հանգամանքը դըրդում ե մեզ լողալու որենքները հետազոտել: Ինչիցն ե լինում, վոր նավի ավելի կամ պակաս չափով ե ջրի մեջ ընկղմվում: Ի՞նչպես են շինվում սուզանավերը, վոր նրանք կարողանում են ջրում՝ ամբողջովին ընկղմված լողալ: Ի՞նչպես են շինվում ողապարիկները, վոր նրանք կարողանում են մթնոր տային ողում լողալ: Այս հարցերի պատասխանը կախված է մի քանի որենքներից, վորոնց ուսումնասիրման կանցնենք հենց այժմ:

Դիցուք մի մարմին, վորը պարզության համար վերցված ե օճեֆ խորանարդի ձեռվ, ընկղմված ե հեղուկ պարունակող մի անոթի մեջ (նկ. 60): Ապացուցենք, վոր հեղուկի ձնշումը պետք ե արտահայտվի մի ույժով, վոր այդ մարմնի վրա ներքեց դեպի վերև ե ազդում:

Պարզ ե, վոր հեղուկի կողմից մարմնի վրա հորիզոնական ուղղությամբ ազդող բոլոր ձնշումների համագորը զերոյի յե հավասար, վորովհետև ամեն մի այդպիսի ձնշում հավասարակըշուրվում ե նույն մեծության մի այլ ձնշումով, վորը հակադիր ուղղությամբ ազդում ե մարմնի մյուս կողմից: Խորանարդի օճ վերին նիստի վրա ազդող ույժը հավասար է հեղուկի ցհճ սյունի կշռին և վերևից դեպի ներքեւ և ուղղված: Իսկ խորանարդի յե սյունի կշռին: Այս վերջին ույժը, Պատկալի որենքի համաձայն, ուղղված ե ստորին նիստի հարթությանն ուղղահայց՝ ներքեկից դեպի վերև: Յերկու ույժերի համագորը, վորոնցից մեկը մարմնի վրա յե ազդում, իսկ մյուսը դեպի վեր, հավասար է նրանց տարբերության, այսինքն օճեֆ ծավալով հեղուկի կշռին, և ուղղված ե դեպի վեր: Օճեֆ ծավալով հեղուկի կշռին այլ բան չե, քան յեթե մարմնի դուրս մղած հեղուկի կշիռը: Այսպես ուրեմն, հեղուկի ձնշումը նրա մեջ ընկղմած մարմնի վրա՝ արտահայտվում է մի ույժով, վոր ուղղված է դեպի վեր և հավասար է դուրս մղած հեղուկի կշռին:


Այս որենքն իրավացի յէ ամեն հեղուկի համար, ինչպիսի  
ձև ել ունենա նրա մեջ ընկղմած պինդ  
մարմինը և ինչ խորությամբ ել ընկղղ-  
մած լինի վերջինս։ Այս որենքը, վոր  
առաջին անգամ գտել ե Արքիմեդ Սի-  
րակուզացին (287—212 թ. Ք. ծ. ա.),  
կոչվում է Արքիմեդի ուենի։



Նկ. 60. Խորանարդը դուրս և  
նրանց ներքեւ դեպի վերև  
ուղղված ույժով։

84. ՆԱՎԵՐԸ ՅԵՎ ՈԴԱՊԱՐԻԿԱՆԵՐԸ. — Արքեմիդի որենքի  
համաձայն ամեն նավ պետք է այնքան ընկղմվի ջրի մեջ, վոր  
նրա դուրս մղած ջրի կշիռը հավասարվի ամբողջ նավի կշռին։  
Յերբ նավը բերնավորում ենք, նրա կշռն ավելանում է, ուստի  
նա ավելի խորն է ընկղմվում, նորից դուրս մղելով համապա-  
տասխան քանակով ջուր։ Սուզանավը (Նկ. 61) քիչ թեթև են  
շինում, քան դուրս մղվող ջրի կշիռը, բայց նավի ներսը շին-  
վում ե ոդին անթափանցելի մի բաժանմունք, վորը կարելի յե  
ջրով լցնել և այսպիսով նավի կշռն այնքան մեծացնել, վոր  
նա ամբողջովին ընկղմվի։ Յերբ ջրհանների միջոցով ջուրն արդ  
բաժանմունքից դուրս ե հանվում, նավը նորից ջրի մակերե-  
փույթն է բարձրանում։ Բաժանմունքը լցնելու և դատարկելու  
համար կան հատուկ գործիքներ, վոր բանեցնում են նավի վրա  
գտնվող մարդիկ։

Ողապարիկները լցնում են ջրածնով կամ լուսագաղով, վո-  
րոնք, մանավանդ առաջնոր, ողից զդալիորեն թեթև են։ Ողա-



Նկ. 61. Սուզանավի ուղեցույն։

պարիկը, նրա բոլոր պիտույքները և մեջը լցրած գազը միա-  
սին վերցրած պետք է թեթև լինեն նրա դուրս մղած ողից։ Ո-  
ղապարիկը վեր բարձրանալով մինչև այստեղ ե համառում, վոր-  
տեղ նրա դուրս մղած ողի կշիռը ճիշտ և ճիշտ հավասար է  
լինում նրա կշռին։ Այդ բարձրության վրա ողապարիկն, առանց  
բարձրանալու և առանց իջնելու, շարժվում է հորիզոնական  
ուղղությամբ, տարվելով ողային հոսանքներից։ Յեթե ողա-  
չուն կամենում է ավելի վեր բարձրանար, նա դուրս է թա-  
փում բալլաստի, այսինքն ավազի մի մասը, վորի հետևանքով  
թեթևանում է։ Յեթե ողաչուն կամենում է ցա-  
ղապարիկը թեթևանում է, Յեթե ողաչուն կամենում է ցա-  
ղապարիկի միջոցով բաց և անում ողապարիկի վերին  
մասում շինած անցքի կափարիչը և դուրս և թողնում գազի  
վորոշ քանակ, վորի հետևանքով փոքրանում է ողապարիկի  
ծավալը և միաժամանակ նաև բարձրացնող ույժը։


85. ՏԵՍՍԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՅԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿՇԻՌԸ. —  
Վերն ասացինք, վոր նյութի տեսակարար կշիռ կոչվում է նրա  
1 խոր. սանտիմետրի կշիռը։ Հարաբերական կշիռ (կամ կշիռ  
1 համեմատությամբ) կոչվում է մարմնի կշիռի հարաբերու-  
թի համեմատությամբ) կոչվում է մարմնի կշիռի հարաբերու-  
թյունը նույն ծավալով ջրի կշռին։ Վորովհետեւ մարմնի կշիռը  
զրամներով ենք արտահայտում, իսկ 1 խոր. սմ. ջրի կշիռը  
զրամներով կամ ա, ապա նյութի տեսակարար կշիռը և հարաբերական  
կշիռը միենույն թվով են արտահայտում։ Որինակ՝ մնդիկի տե-  
սակարար կշիռն է 1 խոր. սանիտմետրին 13,6 գրամ. բայց յեթե  
մնդիկի յուրաքանչյուր խոր. սանտիմետրը 13,6 գրամ է կշռում,  
մնդիկի յուրաքանչյուր խոր. սանտիմետր 13,6 անգամ շատ  
ապա պարզ է, վոր սնդիկի ամեն մի ծավալ 13,6 անգամ շատ  
է կշռում, քան նույն ծավալով ջուրը։ Տեսակարար կշիռի և  
հարաբերական կշիռի տարբերությունը միայն այն է, վոր տե-  
սակարար կշիռն անվանական թվով (խոր. սանտիմետրի կշիռ  
զրամների թվով) է արտահայտվում, իսկ հարաբերական կշիռը՝  
վերացական թվով։

Պետք է սակայն նկատել, վոր հաճախ տեսակարար կշիռ են  
կոչվում և տեսակարար կշիռը, և հարաբերական կշիռը։  
Յեթե տված է մարմնի կշիռը և մարմնի ծավալով ջրի կ-  
շիռը, ապա առաջին մեծությունը յեկըրդով բաժանելով

կստանանք մարմինի հարաբերական կշիռը: Որինակ՝ յեթե առույրի կտորը  $160$  գրամ է, իսկ այդ կտորի ծավալով ջուրը  $20$  գրամ, ապա  $\frac{160}{20} = 8$  կը լինի արույրի հարաբերական կրշիռը:

Մարմնի հարաբերական կշիռը հավասար է այդ մարմնի կրշութեա, բաժանած նույն ծավալով չը կը ուն:

86. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿՇՈՒԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԱՐՔԻՄԵԴԻ ՈՐԵՆԹԻ ՀԻՄՍՆ ՎՐԱ.—Հարաբերական կշիռը վորոշելու համար պետք է իմանալ մարմնի կշիռը և այդ մարմնի ծավալով ջրի կշիռը: Մարմնի կշիռը հեշտ է վորոշել ուղղակի կշռելով, իսկ ինչ վերաբերում է մարմնի ծավալով ջրի կշռին, ապա այդ կարելի յե շատ հեշտ վորոշել Արքիմեդի որենքի հիման վրա:



նկ. 62. Մարմինը չը մեջ հարաբերական կշիռը:  
պակաս է կրշութեա:

$$\text{Հարաբերական կշիռը} = \frac{\text{կշիռը ողում}}{\text{կոնի կորուսը ջրում}}.$$

(§4) 87. ԼՈՂԱՑՈՂ ՅԵՎ ՍՈՒԶՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ.—Գրքի սկզբում ասացինք, վոր մարմնի ծանրության կենդրոնը միշտ ձգտում է վորքան կարելի յե ցած դիրք զրավել: Այժմ ուշք դարձնենք հետեւյալ յերեսույթներին: Յեթե մի կտոր փայտ ջրի խորքն ընկմղենք և այնտեղ բաց թողնենք, ապա նա ջրի յերեսը կրգա, և մինույն ժամանակ նրա ծանրության կենդրոնը կը բարձրանա: Յեթե ջուր պարունակող ամանի մեջ մնդիկ ածենք, վերջինս կինդի ամանի հատակը, և միաժամանակ ջրի ծանրության կենդրոնը կը բարձրանա:

Այժմ հետեւնք, թե ջուրն ու մնդիկը միասին իբրև մի ամբողջություն վերցնելու դեպքում ինչպես կը տեղափոխի ծանրության կենդրոնը: Պարզ է, վոր յեթե մնդիկը ջրի վերել կանգներ, ընդհանուր ծանրության կենդրոնը ավելի բարձր կը դանվեր, քան այն ժամանակ, յերբ մնդիկը ջրի տակն է գըտնը ուրվում: Նույնպես ել ջրի և փայտի ընդհանուր ծանրության կենդրոնն ավելի բարձր կը լիներ, յեթե փայտն ամանի հատակն իջներ, քան այն գեպքում, յերբ փայտը ջրի յերեսին է լողում: Ընդհանրապես, վորպեսզի մի քանի մարմինների ընդհանուր ծանրության կենդրոնը վորքան կարելի յե ցածը դիրքը զրավի, անհրաժեշտ է, վոր ավելի մեծ տեսակարար կշռ ունեցող մարմինները ներքել դասավորվեն, իսկ ավելի փոքր տեսակարար կշռու ունեցողները՝ վերել: Այս պատճառով, յեթե ջրի մեջ ընկղղմած մարմնի տեսակարար կշիռը ջրի տեսակարար կշռից փոքր է, այդ մարմինը դուրս է գալիս ջրի յերեսը, իսկ յեթե մեծ է, սուզվում է:

Մանրուրյան կենդրոնը միօւ ձգտում է գրավել հետափոր ասեացած դիրքը:

### ՈՐԵՆՔՆԵՐ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Ճշգում այն ույժն է, վոր ազդում է մակերեսի մեկ միավորի վրա: Ճնշումն արտահայտվում է՝ գրամներով 1 քառ. սանտիմետրի վրա, քիլոգրամներով 1 քառ. մետրի վրա և այլն:

2. Եյութի տեսակարար կշիռը նրա 1 խոր. սանտիմետրի կշիռն է գրամներով:

3. Ազատ մակերեսույթ ունեցող հեղուկի մեջ ճնշումն ուղղի համեմատական է հեղուկի խորությանը և տեսակարար կշռին:

4. Ազատ մակերեսույթ ունեցող հեղուկի տվյալ խորության մեջ ճնշումը կախված չե հեղուկը պարունակող անոթի վոչ մեծությունից և վոչ ել ձեից:

5. Այն խողովակում, վորով ջուրը հոսում է, ճնշումն աստիճանաբար նվազում է, ամենամեծ ճնշումն այնտեղ է, վորտեղ ջուրը խողովակն է մասում, իսկ ամենափոքրն այնտեղ, վորտեղ ջուրը խողովակից դուրս է գալիս:

6. Հեղուկը ցած մակարդակից տվելի բարձր մակարդակի հասցնելու համար անհրաժեշտ ե աշխատանք ծախսել:

#### 7. Հեղուկը բարձրացնելիս

աշխատանքը = ջրի կշիռը  $\times$  մակարդակների տարբերություն:

#### 8. Ողը կշիռը ունի:

9. Նորմալ մթնոլորտային ճնշումը ծովի մակարդակի վրա մոտ 1 քիլոգրամ և 1 քառ. սանտիմետրի վրա:

10. Ամեն կողմից փակ անոթի մեջ հեղուկի ճնշումը հաղորդվում է գեպի բոլոր կողմերը հավասար ույժով՝ այնպես վոր անոթի պատի վրանե մակերեսի վրա յեղած ճնշման ույժը ուղիղ համեմատական ե մակերեսի մեծության և ուղղված ե պատին ուղղահայց (Պասկալի որենք):

11. Կատարելատիպ (իդեալական) ջրաբաշխական մեքենայի համար

ծախսած աշխատանք = ստացած աշխատանք:

12. Գաղի միենույն զանգվածի ծավալը հաստատուն բարեխառնության դեպքում փոփոխվում է ճնշման հակադարձ համեմատությամբ (Բոյլ-Մար්ගրիտակի որենք):

13. Հեղուկի մեջ ընկղմված մարմինը յենթակա յե մի ճընշման, վոր ուղղված ե ներքեւից գեպի վերև, և հավասար ե տեղահանված հեղուկի կշռին (Սրբիմեղի որենք):

14. Հարաբերական կշիռը հավասար ե մարմի կշռին՝ բաժնած մարմի ծավալով ջրի կշռով:

15. Մի խումը մարմինների ընդհանուր ծանրության կենդրունն այն դեպքում ե ամենացած դիրքը գրավում, յերբ ավելի խիտ մարմինները տակն են դասավորվում, իսկ պակաս խտություն ունեցողները վերև:

#### Հ Ա Բ Յ Ե Բ.

1. Բացատրեցեք հետեւյալ յերկու գաղափարների տարբերությունը՝ ճնշում անոթի հատակի վրա և լրիվ ճնշման ույժ անոթի հատակի վրա:

2. Ի՞նչ ե հեղուկի (կամ զաղի) ճնշման պատճառը, յեթե նրա մակերեսույթն ազատ ե:

3. Ազատ մակերեսույթ ունեցող հեղուկի ներսն ինչպես ե փոփոխվում ճնշումը, յերբ խորությունը փոփոխվում է:

4. Ջրի ճնշումն ինչքան ե 100 մետր խորության մեջ:

5. Ջրի ճնշումը մոտավորապես ինչքան ե այն խորության մեջ, մինչև վորը լողանալիս ընկղմվում էք:

6. Ջրի ճնշումը ինչ խորության մեջ կը լինի 1 գրվանքա 1 քառ. սմ.<sup>2</sup>-ի վրա (գրվանքան կարելի յե մոտ 400 գրամ համարել):

7. Ջրի ճնշումն ինչ խորության մեջ և մթնոլորտային ճնշումից 3 անգամ մեծ:

8. Ճահճուռ տեղով դժվար է գնալ, վորովհետեւ ամեն քայլափոխում մարդու վտանկերը խրվում են, բայց յեթե տախտակ դնենք, հեշտ կը լինի նրա վրայով գնալ ինչու:

9. Չուրը յերը և ավելի հեշտ ականջներդ մտնում յերես սուզվելիս, թե խորը:

10. Ջրաճնշական աշտարակի վոր մասը պետք ավելի ամուր շինել՝ ներքեի թե վերևի:

11. Թեյամանը թեյով դրված ե սեղանին: Վորտեղ և թեյի մակարդակը բարձր՝ թեյամանի մեջ, թե նրա քթում:

12. Յերկու գետակների տառաջը կապել են միենույն բարձրության ամբարտակներով: Մի ամբարտակի մոտ 1 քիլոմետր յերկարության լին ե առաջացել, իսկ մյուսի մոտ 2 քիլոմետր յերկարության վոր ամբարտակի ստորին մասում ե ճնշումն ավելի մեծ:

13. Մանոմետրների միջոցով ջրանցքի ցանցի յերկու ծորակներում ճնշումը չափվում է: Ի՞նչպես պետք ե մանոմետրների ցուցմունքով հաշվել այն մակարդակների տարբերությունը, վորոնց վրա գտնվում են ծորակները: Փորձեցներ այդպիսի չափում կատարել դըպրոցի շենքի յերկու ծորակներում:

14. Նախընթաց հարցի վերը նշած չափումը կը հաջողվի՝ ձեզ կատարել, յեթե չափելու ժամանակ չուրը շենքի մի քանի ծորակներից հոսի:

15. Նկարագրեցք ծծող ջրհանի կազմությունը:

16. Ի՞նչպես պետք ե հաշվել այն աշխատանքը, վոր կատարում ենք ծծող ջրհանի միոցը մի անգամ բարձրացնելիս և իջեցնելիս:

17. Գալիլեյն ինչպես հաշվեց այն սահմանը, մինչև վորը բրությունը դատարկությունից վախենում է:

18. Չուրն ինչ ույժի ազդեցությամբ ե բարձրանում, յերբ ջըր հանը գործում է:

19. Ինչու բարոմետրի մեջ սնդիկի տեղ ջուր վերցնելը հարմար չէ:

20. Բարոմետրը գետեղված ե ողապարիկի կողովում: Բարոմետրի ցուցմունքն ինչպես կը փոխվի, յերբ ողապարիկը հավասարաչափ բարձրանալ ալիս:

21. Ի՞նչ յեղանակ և սպասելի, յերբ բարոմետրն ընկնում է:
22. Ի՞նչու խցանը ջրում լողում է:
23. Ի՞նչ են անում, յերբ հարկավոր և սուզանավը և ողաղարիկը բարձրացնել և իջեցնել:
24. Ի՞նչու ոդ ներշնչած հեշտ և լինում ջրի յերեսին մնալ:
25. Ի՞նչու ծովի աղի ջրում ավելի հեշտ և լողալ, քան քաղցրահամ ջրում:
26. Մեկը նավ և շինում և հրաժարվում և կապարյա բալլաստը նավի վողագույքի ներքեկի մասին ամրացնել Հիմնվելով նրա վրա, վոր «ջուրը ամեն ծանրություն գեղի վեր և մղում», նա բալլաստը վանի վերեկի մասում և տեղափորում: Ուղիղ և վարվում:
27. Պարանի ծայրին սետինից կամ փափուկ կավից մի շրջանակ կապելով կարելի յե «ծծակ» շինել վորը կը կազի վողորկ մակերեսություներին: Յեթե շրջանակը կպցնենք, որինակ՝ ափակին, ափա հեշտությամբ կարող ենք պարանը քաշելով ափան բարձրացնել: Բացարեցք այս յերևույթը:
28. Ի՞նչ փորձերով կարող եք հաստատել Արքիմեդի որենքը:
29. Հեծանվի շինի մեջ ոդ լցնելն սկզբում հեշտ և լինում, հետո դնալով դժվարանում է: Ի՞նչու:
30. Զեր ապրած քաղաքում ի՞նչպես և կառուցված ջրանցքը:
31. Ջրանցքի յերկու ծորակներում, վորոնք նույն մակարդակի վրա են գտնվում, ճնշումը հետազոտում են: Մի ծորակը ջրաճնշական աշտարակից և ջրհանից մոտ է, իսկ մյուսը հեռու ճնշումը վոր ծորակում է մեծ:
32. Բաժակը ջրով լցրեք և բերանը փակեցեք մի կտոր թաց թղթով: Ճեռքի ափով թուղթը պահելով բաժակը ըրջեցեք և ձեռներդ հեռացրեք: Բացատրեցեք այն յերեսույթը, վոր տեղի կունենա:
33. Շեշտ ջրով լցրեք, և շրջելով դիտեցեք, թե ջուրն ինչպես և դուրս թափվում: Բացատրեցեք, թե ի՞նչու ջուրն անընդհատ հոսանքով չի թափվում:
34. Ի՞նչու շիշը հետպհետեւ թեքելիս ջուրն ավելի արագ և թափվում և քիչ ցայտեր տալիս, քան արագ գլխիվայր ըրջելիս:

## Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

1. Ավագանում ջուրը 120 սմ. խորություն ունի: Ավագանի հատակի վրա ի՞նչ ճնշում կա:
2. Արտահայտեցեք քիլոգրամներով քառ. սանտիմետրի վրա, թե վորքան և ջրի ճնշումը 1 քիլոմետր խորության մեջ:
3. Սոդիկի ճնշումը ի՞նչ խորության մեջ և 272 գրամ 1 քառ. սմ-ի վրա:

4. Գիրնու սպիրտի ճնշումն ի՞նչ խորության մեջ կը լինի 4 գրամ 1 քառ. սանտիմետրի վրա:

5. Ջրանցքի ծորակներում տան առաջին և չորրորդ հարկերում ճնշումների տարրերությունը 1 մետրուրտ է: Վոշվ մն և հարկերի մակարդակների տարրերությունը:

6. Ավագանը, վորի ծավալը 2 խոր. մետր է, պետք և աղբյուրի ջրով լցնել: Նա աղբյուրի մակարդակից 25 մետր բարձր է: Քանի քիլոգրամ մետր աշխատանք պետք և ծախսել:

7. Մղիչ ջրհանի խողովակը կարող և նախորդ խնդրում հիշատակված ավագանի մեջ մասնել ներքեցից և վերեկից: Զուրը մղելու համար այս յերկու գեղքերում հավասար աշխատանք կը պահանջի:

8. Քաղաքային ջրանցքի ջրաճնշական աշտարակի ավագանը, վոր գլանածե և, ունի 16 մետր բարձրություն և 3 մետր հիմքի տրամագիծ: Մղիչ ջրհանի խողովակը մտնում է ավագանի հատակը: Ավագանը լցնելու համար ինչքան աշխատանք և հարկավոր:

9. Մթնոլորտի ճշումը հավասար և 76 սմ. բարձրության անդկային սյունի: Սիֆոնի մեջ (նկ. 63) վերին C կետն անոթի ջրի մակարդակից 15 սմ.-ով բարձր է: Ճնշումն ի՞նչ մեծություն ունի սիֆոնի խողովակի B կետում, վորը նույն մակարդակի վրա յե գտնվում, ի՞նչ վոր անոթի ջուրը:


10. Նախընթաց խնդրի սիֆոնի մեջ A ծայրը C կետից 35 սմ-ով ցած է: A ծայրում վորքան և ջրի ճնշումը: Վորքան և համազոր ճընշումը CBA-ի ուղղությամբ:

11. Ջրհանի մխոցը, վորի մակերեսը 200 քառ. սմ. և, յուրաքանչյուր հարվածի ժամանակի 50 սմ. ճանապարհ և անցնում, 1 քառ. սանտիմետրի վրա 2,5 քիլոգրամ ճնշում հաղթահարելով: Վորքան և մխոցի շարժման աշխատանքը:

12. Ջրաբաշխական մամուլի փոքր մխոցի մակերեսը 4 քառ. սմ. և, իսկ մեծինը 500 քառ. սմ.: Փոքր մխոցն ի՞նչ ույժով պետք և ճնշել վորպեսզի մեծի վրա աղղող ույժը 5000 քիլոգրամի հավասարվի:

13. Ջրաբաշխական մամուլի լծակի յերկարությունը (նկ. 54) 60 սմ. և, իսկ հենակետից մինչև մխոցը 15 սմ.: A փոքր մխոցի վրա աղղող ույժն ի՞նչ մեծություն կունենա, յեթե լծակի կոթը 40 քիլոգրամ ույժով ճնշենք:

14. Ի՞նչ մեծություն կունենա նախորդ խնդրի ջրաբաշխական մամուլի մեծ մխոցի վրա աղղող ույժը, յեթե մխոցների մակերեսներն են 3 քառ. սմ. և 360 քառ. սմ.:



նկ. 63. Սիֆոն:

15. Նախընթաց խնդիրներում նկարագրած ջրաբաշխական մառուլի փոքր մխոցը յուրաքանչյուր յերթենելի ժամանակ 10 սմ. և իջնում: Քանի յերթենելից հետո, մնած մխոցը 20 սմ. կը բարձրանա: 16. Նորմալ մթնողորտային ճնշման ժամանակ դատարկ շիշը բերանն ի վայր այնքան ե սուզում ջրի մեջ, մինչև կիսով չափ ջրով լըցվում ե, առանց վոր շշից ոդ գուրս գար: Վորքան և ոդի ճնշումը շշի մեջ: Ի՞նչ խորության մեջ պետք ե դաշնվի շիշը:

17. Հրդեհի ջրհանի ոդալից ընդունարանում ոդի ծավալը սեղմվելով դարձել ե իր սկզբնական մեծության  $\frac{1}{5}$ -ի չափ: Վորքան և այդ ոդի ճնշումը ջրի մակերեսույթի վրա ոդալից ընդունարանի ներսը:

18. Նավի կշիռը 100 քլգր, ե: Նա ինչքան ջուր ե տեղահանում:

19. Յեթե ընդունենք, վոր մարդը մոտավորապես հավասարակըշության մեջ ե մնում, յերբ ամբողջովին ջուրն ե ընկղմված, ապա ինչ պարզ միջոցով կարելի յե այդ մարդու կշռով նրա ծավալը վորոշել:

20. Փայտի կտորը կիսով չափ ջուրն ընկղմված լողում ե: Վորքան և փայտի տեսակարար կշիռը:

21. Ապակու կտորն ոդում 25 գր. ե կշռում, իսկ ջրում՝ 15 գր.: Վորքան և ապակու տեսակարար կշիռը:

22. Սուլանցավի ծավալը 2,500 խոր. մետր ե: Վորքան և այդ նավի կշիռը:

23. Ոդապարիկի ծավալը 300 խոր. մետր ե: 1 խոր. մետր ոդը կշռում ե 1,2 քլգր., ոդապարիկը լցնող 2 խոր. մետր ջրածինը՝ 750 գր., Վորքան կարող յե լինել ոդապարիկի գնդի, բոլոր պիտույքների և ոդագնացի կշիռը՝ միասին առած:

24. Շոգենավը, վորի կշիռը 6,000 տոնն ե, այնքան ե բարձված, վոր նրա տեղահանած ջրի կշիռը 10,000 տոնն ե: Վորքան և շոգենավի բեռը:


## V ԳԼՈՒԽ

### ԶՐԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

88. ՇԱՐԺՎՈՂ ԶՐԻ ՈՒՅՅՈՒ. — Ամեն վոք, վոր առիթ ե ունեցել անցնելու արագահոս գետի ծանծաղուտով կամ ձեռքը պահելու բարձրից ընկնող ջրի տակ, անշուշտ զգացել ե շարժվող ջրի ույյու: Վոր այդ ույյուն ընդունակ ե աշխատանք կատարելու, այդ մասին կարող են վկայել այն ավերածությունները, վոր տեղի

յեն ունենում գարնանը ջրերի վարարման և հեղեղների շնորհիվ: Դանդաղահոս գետի, խաղաղ լճի կամ լճակի ջուրը չի կարող շարժման մեջ դնել մի այնպիսի մեքենա: Ինչպիսին ջրաղացն ե: Զուրը միայն այն ժամանակ կարող ե վորեւ մեքենա շարժման մեջ դնել և աշխատանք կատարել, յերբ ջրվեժ ե գոյացնում, կամ լճից ջրաղացի նավով դեպի ավելի ցած տեղ ե հոսում: Շարժվող ջուրը կարելի յե ոգտագործել ջրաղացների և սղոցարանների համար, տների ու փողոցների ելեքտրական լուսավորության համար և այլն: Այս պատճառով ցրվեծը կամ արագահոս գետակը ուզակա ազգարնակության համար մեծ արձեք են ներկայացնում: Խոսենք մի քանի մեքենաների մասին, վորոնց միջոցով կարելի յե ջրի անկումն ոգտագործել մեքենական աշխատանք կատարելու համար:

89. ՎԵՐՆԱՄՈՒԻՂ ԱՆԻՎ. — Յերեխաները հաճախ իրենց համար մի տեսակ խաղալիկ են շինում, վոր նման և ջրաղացի անվին և կոչվում ե պտտան:




Նկ. 64.

Զուրը թափվում ե, անիվը պտտվում ե: Ժուրը թափվում ե, անիվը պտտվում ե: Անիվը պտտված մոտ այնպես են տեղափորում, վոր ջրի մակարդակը անվից բարձր լինի (նկ. 64): Զուրը հոսում ե F խողովակով կամ նավով և գրեթե վերին ջրակույտի բարձրությունից թափվում ե W անվի թիակների վրա: Այսպիսի կաղմություն ունեցող անիվը կոչվում ե վերնամուղ անիվ: Այդպիսի անիվը շարժող ույժը այն ջրի կշիռն ե, վոր անվի մի

կողմից թափվում ե թիակների վրա: Անիվը պտտվելու ժամանակ նրա առանցքն ել ե պտտվում, վորից և պտտումը հաղորդվում ե ջրաղացի մեխանիզմին: Զուրն այստեղ աշխատանք ե կատարում թափվելով թիակների վրա և վերջններս հրելով անվի մի կողմից, այդ ժամանակ նա բարձր մակարդակից իջնում ե գեղի ցած մակարդակը:


*Ա* 90. ԱՏՈՐՆԱՄՈՒԿԴ ԱՆԻՎԸ.—Ստորևսամուղ անիվը (նկ. 65), ինչպես անունն է ցույց տալիս, վերնամուղից նրանով ե տարբերվում, վոր ջուրը վոչ թե վերեկից թափվում ե նրա վրա, այլ տակից հոսում է: Այս գեղքում անիվը պտտվում ե այն հանգամանքի շնորհիվ, վոր ջուրը հորիզոնական ճնշում ե գործում անվի թևերի վրա:

Պելտոնի ներկայումս գործածվող ջրային շարժիչի մեջ ջուրը յենելով N խողովակից (նկ. 66) հարվածում ե անվի թևերը և իր շարժման մի մասը հաղորդում անվին, վորն և այդպիսով պտտվում է:



նկ. 65.

Ջուրը հոսում է, անիվը պտտվում է:




նկ. 66.


Պելտոնի ջրանիվը:

Ջրանիվների գեղքում ջրի շարժումը անվի հարթության գուղահեռ ուղղություն ունի: Թևերն ամրացած են անվի հարթության ուղղահայաց, ուստի և ջուրն ուղղահայաց հարվածներով նբանց հրում ե իր շարժման ուղղությամբ:

91. ՏՈՒԲԲԻՆՆԵՐ.— Քամուց պտտվող թղթի փռանը կարող ե ծառայել իբրև տուրբինի ամենապարզ մոդել (նկ. 67): Այդպիսի տուրբինը պտտելու համար քամու ուղղությունը RW անվի հարթության (նկ. 68) վոչ թե գուղահեռ պետք ելինի, այլ ուղղահայաց, ինչպես ան ցույց տալիս: Ցուրա-



նկ. 67. Թղթի փռանը: Ժության հետ:




նկ. 68.

Քամին խփելով ոռ թեկն ան ուղղությամբ՝ անդրառնում ե ոճ ուղղությամբ և միենույն ժամանակ ն թեր հրում ե եժի ուղղությամբ, վորի հետևանքով և փռանը պտտվում է:

Ջրային տուրբինները հաճախ բանեցնում են դինամո-մեքենաները պտտելու համար, վորոնք ելեքտրական հոսանք են տալիս: Այդ նպատակով տուրբիններ են գրված, որինակ՝ Նիսդարայի ջրվեժում, վոր աշխարհիս ամենամեծն ե: Ջրվեժի վերին մասում ջուրը մտնում ե P պողպատյա լայն խողովակը (նկ. 69), վորի ստորին ծայրում գետեղված ե T տուրբինը: Զուրն ահազին ույժով անցնում է տուրբինի միջով, վորը S ուղղաձիգ գլանային առանցքն արագ պտտման մեջ ե գնում, վոր և հաղորդվում ե D դինամո-մեքենային:

70-րդ նկարում պատկերացրած ե ջրային տուրբինի պարզագույն մոդելը: Մետաղյա T անվակը, վոր շինված ե փռանի կամ ողափոխիչի (վենտիլատորի) նման, հաստատված ե AB մետաղաթելի վրա, վորը անվակի հետ միասին կարող ե աշխատ պտտվել լամպի P ապակու՝ մեջ: Յերբ ապակու միջով ջրի հոսանք ե անցնում, տուրբինը պտտվում է և պտտման

մեջ և դնում առանցքին ամրացրած Յ փոկանիվը, վորի հետ կարելի յե միացնել վորեւ փոքրիկ մեքենա:




Նկ. 69.

Նիսպարայի ջրվեժի տուբերինը:

Ջրային շարժիչների համար ինչպես են չափվում ծախսված և ստացված աշխատանքը:

Իսկական տուրբինների մեջ ջուրը հոսում է բազմաթիվ վոլորուն Յ անցքերով (նկ. 71), վորոնք ջուրն այնպիսի անկյունով են ուղղում Դ տուրբինի թիակների վրա, վոր ամենից ավելի նպաստավոր ե տուրբինը պատելու համար:

Ինչպես ամեն մեքենայի, այնպես ել ջրային շարժիչների համար խիստ կարեվոր է իմանալ արգասիքը: Այս պատճառով պետք է ծանոթանանք, թե

Նկ. 70.  
Խաղալիկ տուբերին:

92. ԶՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓՈՒՄԸ.—Ինչպես § 62-ում ասացինք, ջուրը ցած մակարդակից բարձր մակարդակի հասցնելու համար պետք է աշխատանք ծախսել. այս աշխատանքը չափվում է ջրի կշռի և մակարդակների տարբերության արտադրյալով: Ըսդհակառակն, յերբ ջուրն է աշխատանք կատարում միայն իր կշռի ույժով, ինչպես այդ տեղի ունի, որինակ՝ վերնամուղ անվի դեպքում, այդ աշխատանքը չափվում է ջրի կշռի և նրա անկման բարձրության արտա-

դրյալով: Իսկ յեթե աշխատանք կատարողը ջրի հոսանքն է, վորը մնշման հետևանքով է շարժվում և հարվածում է տուրբինի անվի թիակները, ապա այդ աշխատանքն արդեն չի կարելի նույն յեղանակով հաշվել: Թե վերջին դեպքում ինչպես պետք է չափել աշխատանքը, այս հարցը հեշտությամբ կը լուծենը, յեթե նախապես լուծենք հակառակ հարցը և սովորենք չափել այն աշխատանքը, վոր պետք է ծախսել ջուրը մնշման հակառակ ուղղությամբ շարժելու համար:

Բննենք մղիչ ջրհանի աշխատանքը Քրային տուբերին:

(նկ. 51): Դիցուք մխոցի մակերեսը 600 քառ. սանտիմետր է, իսկ մխոցի ճանապարհի յերկարությունն ամեն մի հարվածի ժամանակ 50 սանտիմետր: Յեթե ջրհանը ջուրը մղում է ջրանցքի մեջ, վորտեղ ճընշումը 1 քառ. սանտիմետրի վրա 4 քլգր. է, ապա մխոցի վրա պղող ույժը պետք է հավասար լինի

$$600 \times 4 = 2400.$$

Իսկ այն աշխատանքը, վոր կատարվում է մխոցի յուրաքանչյուր հարվածի ժամանակ, հավասար կը լինի:

$$2400 \text{ քլգր.} \times 0,5 \text{ մետր} = 1200 \text{ քլգր.-մետր:}$$

Այսպիսով տեսնում ենք, վոր մխոցի վրա պղող ույժի աշխատանքն այսպես է արտահայտվում:

աշխատանքը = մնշում × մխոցի մակերես × մխոցի ճանապարհ:

Բայց մխոցի մակերեսի և նրա ճանապարհի արտադրյալը հավասար է զլանի ծավալին, ուստի և մխոցի յուրաքանչյուր հարվածի ժամանակ կատարվող աշխատանքը կարելի յե արտահայտել մնշման և ջրի այն ծավալի արտադրյալով, վոր մխոցը ներս է մղում: Այստեղ, սակայն անհրաժեշտ է հիշել, վոր մնշումը և ծավալը պետք է արտահայտել համապատասխան միավորներով: Յեթե կամենում ենք աշխատանքի մեծությունն ստանալ քիլոգրամ-մետրով, ապա պետք է ճշում արտահայ-

տենք քիլոգրամներով քառ. մետրի վրա, իսկ ծավալը՝ խորանարդ մետրերով։ Այսպիսով վերևի խնդրի համար ունենք. ճշնչումը հավասար է  $40,000$  քլգր.-ի քառ. մետրի վրա, իսկ ծավալն է  $0,03$  խոր. մետր, վորտեղից

$$\text{աշխատանքը} = 40,000 \times 0,03 = 1200 \text{ քլգր.-մ.}$$

Այս դատողություններն իրավացի յեն նաև ամեն մի այլ հեղուկի նկատմամբ։ Այսպիսով այն հեղուկի աշխատանքը, վորը նեւման տակ հոսում է վորենի մեմենայի միջով, հավասար է նեւմանը՝ բազմապատկած հեղուկի ծավալով։

$$\text{Հեղուկի աշխատանքը} = \text{հեռում} \times \text{ծավալ}.$$

93. ԿԻՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Որինակով ցույց տալու համար, թե ինչպես կարելի յե կիրառել ստացած որենքը, հաշվենք, թե որական ինչքան աշխատանք է պահանջվում քաղաքային ջրանցքի ջրհանի համար, վորը տալիս է  $4,000,000$  լիտր ջուր, յենթակա լինելով 3 քլգր. ճնշման 1 քառ. սմ.-ի վրա։ Ուրեմն ջրի ծավալն է  $4,000$  խոր. մետր, իսկ ճնշումը 30,000 քլգր. 1 քառ. մետրի վրա։ Այստեղից աշխատանքը հավասար է

$$4,000 \times 30,000 = 120,000,000 \text{ քլգր.-մետր։}$$

Դժվար չե տեսնել, վոր հաշվի ժամանակ կարող ելինք ծավալը թողնել լիտրերով, ճնշումը քիլոգրամներով 1 քառ. սմ.-ի վրա (այսինքն մթնոլորտներով), բայց այդ գեպում, աշխատանքը քիլոգրամ-մետրերով ստանալու համար հարկ կը լիներ արտադրյալը 10-ով բազմապատկեր։

Լուծենք մի այսպիսի ինդիք ևս։ Վորքան աշխատանք է ծախսվում այն ջրային շարժիչի վրա, վորի միջով  $200,000$  խոր. սմ. ջուր և հոսում յենթակա լինելով  $2000$  գրամ ճշնշման 1 քառ. սմ.-ի վրա։ Այդ միավորներով արտահայտված ճնշումն ու ծավալը բազմապատկերով կստումանք աշխատանքը գրամ-սանտիմետրներով։

$$200,000 \times 2,000 = 400,000,000 \text{ գր. -սմ.},$$

վոր կազմում է  $4,000$  քիլոգրամ-մետր։

94. ՀԶՈՒԹՅՈՒՆՆ. — Պատասխանենք հետեւյալ հարցին. արդյոք մեծ մեքենա յե հարկավոր մի որվա մեջ  $4,000,000$

լիտր ջուր մղելու համար, յեթե ճնշումը 1 քառ. սմ.-ի վրա 3 քլգր. եւ Յեթե նշանակություն չունենար, թե ինչ ժամանակի ընթացքում ե կատարվում այդ աշխատանքը, ապա մի մարդ կարող եր ձեռքի ջրհանով այդ ջուրը մղել։ Հաշվենք, թե ինչքան ժամանակ կը հարկավորվի մարդուն այդ աշխատանքի համար։ Դիցուք այդ ջրհանի գլանի ծավալը հավասար է 1 լիտրի կամ  $0,001$  խոր. մետրի։ Ճնշումն, ինչպես գիտենք, 1 քառ. սմ.-ի վրա 3 քլգր. ե կամ 1 քառ. մետրի վրա  $30,000$  քլգր.։ Այստեղից ել միոցն ամեն անդամ սեղմելու ժամանակ կատարած աշխատանքը հավասար է

$$30,000 \times 0,001 = 30 \text{ քլգր.-մետր։}$$

Յեթե մարդը 1 լոպեյում կարող է 10 անգամ սեղմել միոցը, ապա 1 լոպեյի աշխատանքը հավասար կը լինի  $300$  քլգր.-մետրի, իսկ 1 ժամվանը՝  $18,000$  քլգր.-մետրի։ Կատարելի ամբողջ աշխատանքն է  $120,000,000$  քլգր.-մետր։ Հետևաբար, մեկ մարդուն դրա համար հարկավոր կը լինի անընդհատ աշխատել

$$\frac{120,000}{1,800} = \text{մոտ } 6670 \text{ ժամ},$$

Կամ  $280$  որից քիչ ավելի։

Հստ պայմանի աշխատանքը պետք է կատարվի 24 ժամ-վա ընթացքում։ Հետևաբար, ջուրը մատակարարելու համար անհրաժեշտ է մոտ  $280$  մարդու միաժամանակյա անընդհատ աշխատանք։ Այստեղից յերեսում ե, վոր ջրանցքի ջրհանի համար մի մարդու հզորությունից շատ ավելի մեծ հզորության մեքենա յե հարկավոր։

Մեր հաշվով դուրս ե գալիս, վոր այսպիսի մեքենա յե հարկավոր, վորի հզորությունը  $280$  մարդու հզորությունից ավելի յե։

Հզորությունը (կամ աշխատունակությունը) աշխատանքի արագությունն է։ Հզորությունը գործվում է աշխատանքի յեզ ժամանակի հարաբերությամբ, վորի ընթացքում այդ աշխատանքը կատարվում է։

$$\text{Հզորությունը} = \frac{\text{աշխատանք}}{\text{ժամանակ}}.$$

Վորովհետեւ հզորությունը աշխատանքի և ժամանակի հա-

րաբերությամբ և չափվում, ապա հզորության միավորներն են՝ ֆիլոգրամ-մետրը 1 վայրկյանում կամ փուր-վունաչափը 1 վայրկյանում և այլն:

95. ԶԲԻ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒԹՅԸ.—Որինակի համար հաշվենք Նիավարայի ջրվեժում տուրբինը շարժման մեջ դնող ջրի հզորությունը (նկ. 69): Զրի և տուրբինի մակարդակների տարբերությունը 43,7 մետր է: Ուրեմն, ջրի ճնշումը տուրբինի մեջ հավասար է 43,700 քլգր.-ի 1 քառ. մետրի վրա: Տուրբինի միջով 1 վայրկյանում հոսած ջրի քանակը հավասար է 100 խոր. մետրի: Զրի 1 վայրկյանում կատարած աշխատանքը վերն առաջ բերած որենքի համաձայն ( $\S$  92) այսպես կարտահայտվի.

$\text{աշխատանքը} = \text{ճնշում} \times \text{ծավալ}.$

$$43,700 \times 100 = 4,370,000 \text{ քլգր.-մ.}:$$

Զուրեն այս մեծության աշխատանքը կատարում է յուրաքանչյուր վայրկյանում. հետևաբար, ջրի հզորությունը հավասար է 4,370,000 քլգր.-մետրի 1 վայրկյանում: Այսպես ուրեմն, յերեւ մետենայի միջով յուրաքանչյուր վայրկյան հոսում է հեղուկի սվյալ ծավալը սվյալ ննուման տակ, ապա հեղուկի հզորությունը չափվում է ննուման յեզ մեկ վայրկյանում հոսած հեղուկի ծավալի արտադրյալով:

$\text{Հեղուկի } \text{հզորությունը} = \text{ննում} \times \text{ծավալ} \text{ 1 վայրկյանում:}$

Հզորությունը 1 վայրկյանում կատարված քիլոգրամ-մետրերով ստանալու համար պետք է ճնշումն արտահայտել քիլոգրամներով 1 քառ. մետրի վրա, իսկ ծավալը՝ խոր. մետրերով:

96. ԶԻՈՒ ՈՒՅԺ. —Քիլոգրամ-մետրը 1 վայրկյանում՝ սովորական տեխնիկական հաշվենքի համար հզորության շատ փոքր միավոր է: Այդ միավորը գործածելիս շատ հաճախ ստիպված ենք լինում հզորություններն արտահայտել շատ մեծ թվերով, ինչպես, որինակ, նախընթաց հողվածի խնդրում: Այս ի նկատի ունենալով տեխնիկական հաշվենքի ժամանակ հաճախ բանեցնում են հզորության ավելի խոշոր միավոր, զոր կոչվում ե ձիու ույժ և զոր ավելի ուղիղ կը լիներ ձիու հզորությունը:

րուրուն անվանել: Հզորության այս միավորն առաջին անգամ գործածեց անգլիացի նշանավոր ինժեները, շոգեմեքենայի հարող Զեմս Ուատորը (1736—1819):

1 ձիու ույժի հզորությունը հավասար է 75 ֆիլոգրամ-մետրի 1 վայրկյանում:

Այս հզորությունը մոտավորապես հավասար է այն հզորության, զոր ուժեղ ձին աշխատանքի ժամանակ հանգես և բերում: § 94-ում մենք քննեցինք ջրհանով աշխատող մարդու որինակը. նա 6 վայրկյանում կատարում է 30 քլգր.-մետր աշխատանք: Վորքան է մարդու հզորությունը ձիու ույժերով: Վորովինեան 1 վայրկյանում նա  $\frac{30}{6} = 5$  քլգր.-մ. աշխատանք է կատարում, ապա նրա հզորությունը հավասար է  $\frac{5}{75} = \frac{1}{15}$  ձիու ույժի:

§ 95-ում հիշատակված տուրբինը շարժման մեջ դնող ջրի հզորությունը ձիու ույժերով այսպես կարտահայտվի:

$$\frac{4,370,000}{75} = \text{մոտ } 58400 \text{ ձիու ույժ.}$$

Ձիու ույժերով արտահայտենք այն մեքենայի հզորությունը, զոր հարկավոր եր § 94-ում հիշված ջրանցքի համար: Մեքենայի աշխատանքը 1 որվա ընթացքում հավասար է 120,000,000 քլգր.-մ.-ի: Ուրեմն, մի վայրկյանի աշխատանքը հավասար է

$$\frac{120,000,000}{24 \cdot 60 \cdot 60} = \text{մոտ } 1390 \text{ քլգր.-մ.,}$$

իսկ հզորությունը ձիու ույժերով հավասար է

$$\frac{1390}{75} = \text{մոտ } 18,5 \text{ ձիու ույժ:}$$

Ուրեմն ջրանցքի համար միանգամայն բավարար կը լինի 20 ձիու ույժ ունեցող մեքենա: Սա մեծ հզորություն չե. միջին մեծության ավտոմոբիլի համար սրանից ավելի մեծ հզորություն է հարկավոր:

Պետք է հստակորեն յուրացնել աշխատանքի և հզորության գաղափարների տարբերությունը: Աշխատանքի չափվում է ֆիլոգրամ-մետրերով, իսկ հզորությունը չափվում է ֆիլոգրամ-մետ-

ԵԵՐՆՎ 1 ՎԱՅՐԼՅԱԲՈՒՄ: Աշխատանքի և հզորության գաղափարների մեջ նույնպիսի տարբերություն կա, ինչպես անցած ճանապարհի և արագության մեջ: Անցած ճանապարհը չափվում է մետրով, իսկ արագությունը՝ մետրով 1 վայրկյանում:

97. ԶՐԱՅԻՆ ՇԱՐԺԻՉԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ: ԱՐԳԵԼԱԿԱՅԻՆ ՈՒԺԱԶԱՓՈՎ ԶԱՓԵԼԸ.— Զրային շարժիչի արդարությունը համար նախ պետք է չափել, թե նա փորոշամանակամիջոցում փորձան աշխատանք է տալիս: Դրա համար շարժիչի Տ սունակի վրա հաստատում են Ա փոքրիկ փոկանիվը, փորի լայնությունն է 5—7 սմ.: Այդ փոկանիվի վրա հազցնում են ՅԴ փոկը, փորի լայնությունը մոտավորապես հավասար է փոկանիվի լայնության: Փոկի ծայրերը կապում են Բ գերանի վրա ամրացրած զապանակավոր կշեռքներից: Այս գերանն այնքան են բարձրացնում, փոր փոկանիվը փոկին շրփելիս շարժիչը մոտավորապես նույն արագությամբ պտտվի, ինչ արագությամբ պտտվում է սովորական աշխատանքի ժամանակ: Շփման հետևանքով փոկանիվը փոկը քաշում է գեպի պտտման կողմը, ուստի և այն կշեռքը, փորից կապված է փոկի Յ ծայրը, ավելի մեծ ույժ է ցույց տալիս, քան մյուսը, փորից կապված է Դ ծայրը: Կշեռքների ցուցմունքների տարբերությունը տալիս է այն ուժի մեծությունը, փորով փոկանիվը փոկը քաշում է: Յենթադրենք այդ ույժը հավասար է 12,5 քլգր-ի: Մի պտույտի ընթացքում անցած ճանապարհը հավասար է Ա փոկանիվի շրջապատի յերկարության: Յեթե փոկանիվի շառավիղը հավասար է, որինակ՝ 10 սմ-ի, ապա ճանապարհի յերկարությունը հավասար կը լինի  $2\pi \times 10 = 62,8$  սմ-ի կամ  $0,628$  մետրի: Հետևաբար, փոկանիվի մի պտույտի ժամանակ աշխատանքը հավասար է

$$2,5 \times 0,628 = 7,85 \text{ քլոգրամ-մետրի:}$$

Դիցուք չափման ժամանակի ընթացքում շարժիչը 1,200 պտույտ արագ: Այդ ժամանակամիջոցում կատարած աշխատանքը կը լինի

$$7,85 \times 1200 = 9420 \text{ քլգր.-մ:}$$

Յեթե չափումը տեղի է, դիցուք, 2 բուկ, այսինքն 120

վայրկյան, ապա հզորությունը (1 վայրկյանի աշխատանքը) հավասար է

$$\frac{9420}{120} = 78,5 \text{ քլգր. 1 վայրկյանում,}$$

վոր 1 ձիռւ ույժից քիչ ավելի յեւ:

Այս գործիքը, վոր ծառայում է հզորությունը չափելու համար, կոչվում է արգելակային ուժաչափ: Այսպիսի գործիքով չափված հզորությունը յերեքն կոչվում է արգելակային հզորություն:

Այսպես ուրեմն, շարժիչի արգելակային հզորությունը չափվում է յերեւ արտադրիչների արտադրյալով, վորոնք են՝ արգելակի վրա ազդող ույժը (ֆիլոգրամներով), փոկանիվի ըրդապատի յերկարությունը (մետրով) յեվ պտույտների թիվը 1 վայրկյանում: Այսպիսով հզորությունը փորոշվում է ֆիլոգրամմետրով 1 վայրկյանում: յեթե կամենում ենք հզորությունն արտահայտել ձիռւ ույժերով, պետք է ստացած թիվը բաժանենք 75-ով:

ԶՐԱՅԻՆ ՇԱՐԺԻՉԻ ԱՐԳԱՍԻՔԸ: Մենք արդեն սովորեցինք հաշվել թե այն աշխատանքը, փոր ջուրը ծախսում է շարժիչի վրա և թե շարժիչից ստացած աշխատանքը. այժմ կարող ենք ջրային շարժիչի արգասիքն ել հաշվել: Դիցուք պետք է հաշվենք այն շարժիչի արգասիքը, փորի աշխատանքը հենց նոր չափեցինք արգելակային ուժաչափի միջոցով: Դիցուք չափելու ժամանակամիջոցում, այսինքն 120 վայրկյանում, շարժիչի միջով անցավ  $1200$  լիտր կամ  $1,2$  լ. մետր ջուր, յենթակա լինելով  $2$  քլգր. ճնշման 1 քառ. սմ-ի վրա կամ  $20,000$  քլգր. ճնշման 1 քառ. մետրի վրա: Այն ժամանակ

$$\text{Ջրի աշխատանքը} = \text{Ճնշում} \times \text{ծավալ:}$$

$$\text{Ջրի աշխատանքը} = 20000 \times 1,2 = 24000 \text{ քլգր.-մ:}$$

Նույն ժամանակի ընթացքում շարժիչից ստացած աշխատանքը, ինչպես տեսանք, հավասար է  $9,420$  քլգր.-մետրի, ուստի արգասիքը հավասար է

$$\frac{\text{ստացած աշխատանք}}{\text{ծախսած աշխատանք}} = \frac{9420}{24000} = \text{մոտ } 39\%.$$

ԹԵ ստացած և թԵ ծախսած աշխատանքը վերցրինք միևնույն ժամանակամիջոցի՝ 120 վայրկյանի համար:

Արդասիքն արտահայտող կոտորակի մեծությունը չի փոխվի, յեթե համարիչը և հայտարարը բաժանենք 120-ով. այս դեպքում համարիչում կատանանք շարժիչի հզորությունը, իսկ հայտարարում ջրի հզորությունը.

$$\frac{9420 \text{ (քլգր.-մ.)}}{120 \text{ (վայրկ.)}} = \text{շարժիչի հզորություն},$$

$$\frac{2400 \text{ (քլգր.-մ.)}}{120 \text{ (վայրկ.)}} = \text{ջրի հզորություն}:$$

Սյամեն ուշեմն, շարժիչի արգասիքը հավասար է ստացած աշխատանքի յեվ ծախսած աշխատանքի հարաբերության կամ, վոր միեվնույն ե, ստացած հզորության յեվ ծախսած հզորության հարաբերության:

### ՈՐԵՆՔՆԵՐ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Ջուրն աշխատանք է կատարում, յերբ բարձր մակարդակից դեպի ցածն և գնում կամ մեծ ճնշումից դեպի փոքրը:

2. Հեղուկի աշխատանքը = ճնշում × ծավալ.

3. Հզորությունը =  $\frac{\text{աշխատանք}}{\text{ժամանակ}}$ .

4. Հեղուկի հզորությունը = ճնշում × ծավալ 1 վայրկյանում:

5. Աշխատանքը չափվում է քիլոգրամ մետրերով: Հզորությունը չափվում է քիլոգրամ մետրերով 1 վայրկյանում:

6. Մի ձիռ ույժը = 75 քլգր.-մետր 1 վայրկյանում:

7. Արգելակային հզորությունը ձիռ ույժերով արտահայտելու համար պետք է արգելակի վրա ազդող ույժի, փոկանվի լրջապատի և պտույտների թվի արտադրյալը բաժանել 75-ով:

8. Շարժիչի արգասիքը =  $\frac{\text{ստացած աշխատանք}}{\text{ծախսած աշխատանք}}$ .

Կամ =  $\frac{\text{ստացած հզորություն}}{\text{ծախսած հզորություն}}$ .

### ՀԱՐԱՐԵԼ

1. Ի՞նչ պայման և անհրաժեշտ, վորպեսզի ջուրը կարողանա աշխատանք կատարել:

2. Ի՞նչպիսի դիրք պետք է ունենա վերնամուղ անիվը վերին ջրակույտի մակարդակի նկատմամբ:

3. Ստորևնամուղ անվով բանող ջրաղացի համար պատվար անանհրաժեշտ եւ:

4. Պտտանը կը պտտվի, յեթե ամբողջովին ընկղմենք հոսող առվակի մեջ:

5. Ինչո՞ւ տուրբինը պտտվում է, յերբ ամբողջովին ընկղմված և հոսող ջրի մեջ:

6. Յերբ մոտորային նավակի պտուտակը (պրոպալերը) պտտվում է, ինչո՞ւ նավակն առաջ և շարժվում:

7. Յերբ ելեքտրական ողափոխիչը պտտվում է, ինչո՞ւ ողը շարժվում է:

8. Ինչո՞ւ քամին կարող է աշխատանք կատարել:

9. Աշխատանքի մեջ կը վաստակենք, յեթե ջրակույտից ջուրը վոչ թե ուղղակի նավով բաց թողնենք, այլ 5 մետր բարձրության սիֆոնի միջով:

10. Նեւյն հզորությունն եք հանդես բերում, յերբ միևնույն սանդուխքը մի անգամ 10 վայրկյանում եք բարձրանում, մյուս անգամ 20 վայրկյանում:

11. Նեւյն աշխատանքն եք կատարում, յերբ միևնույն սանդուխքը մի անգամ 10 վայրկյանում եք բարձրանում, մյուս անգամ 20 վայրկյանում:

12. Յերբ վանսա յեք մտնում, ջրի մակարդակը բարձրանում է: Վերտեղից եւ վերցվում այն աշխատանքը, վոր անհրաժեշտ է, վոզեսզի ջրի մակարդակը բարձրանա:

13. Ջրակույտից ջուրը կարող է ստացվել կամ պատվարի վերելու դրամ նավով կամ նրա ստորին մասում շինած անցքով: Յերկու դեպքերում ել 1 վայրկյանում ստացվող ջրի քանակը նույնն է: Նույնն է արդյոք նաև ջրի հզորությունը:

14. Կարնդ ե մի մարդ ձեռքի ջրհանով 1,000,000 լիտր ջուրը հասցնել 50 մետր բարձրության:

15. Կարնդ ե մի մարդ ջրհանի միջոցով 100 որում այնքան աշխատանք կատարել վորքան 100 մարդը 1 որում:

16. Մի մարդ 100 ժամում մի վորոշ աշխատանք կատարեց: Նույն քան աշխատանք կատարեցին 100 մարդ 1 ժամում: Յերկու դեպքում նույնն է արդյոք հզորությունը:



17. Զրածնշական աշտարակի ավաղանի ծավալն է 1000 խոր. մետր, իսկ բարձրությունը՝ 35 մետր: Գևանին դրված ջրհանը ջուրն աշտարակի մեջ է մղում մի խողովակով, վոր ավաղանն է մտնում վերից: Վորքան աշխատանք է ծախսվում ավաղանը լցնելու համար:

18. Վորքան պետք է լինի ջրհանի հզորությունը ձիռ ույժերով, փորպես նախորդ խնդրում հիշված ավաղանը մի ժամում լցվի:

19. Վորքան աշխատանք կը պահանջիր նախընթաց խնդիրներում հիշված ավաղանը լցնելու համար, յեթե ջրհանի խողովակը միացրած լիներ ավաղանի հատակից:

20. Ի՞նչ հզորության ջրհան է պետք մի ժամում ավաղանը լցնելու համար, յեթե պահպաննենք նախորդ խնդրի պայմանները:

21. 7 խոր. դեցիմետր ծավալ ունեցող գնդակը կշռում է 500 զրամ: Ի՞նչ ույժ է հարկավոր, վոր այդ գնդակն ամբողջովին ջրի մեջ խորասուզած պահի:

22. Ի՞նչքան աշխատանք պետք է ծախսել նախընթաց խնդրի գնդակը ջրի մեջ 3 մետր խորությամբ ընկղմելու համար:

## VI ԳԼՈՒԽ

### ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

98. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Բևուային շրջաններում, ինչպես զիտենք, բավարար ջերմություն չինելու հետևանքով քիչ կենդանիներ և բույսեր կան: Սակայն, մինչդեռ ջերմության մի վորոշ քանակ միանդամայն անհրաժեշտ է կյանքի համար, խիստ մեծ տաքությունը քայլքայում է կյանքը: Կյանքի համար ամենանպաստավորն այն է, վոր տաքն ու ցուրտը չափավոր լինեն: Մենք, Անգլիովկասի բնակիչներս, բավական հարմար կյանք ենք վարում, չնայած վոր բարեխառնությունը տարվա ընթացքում զգալի փոփոխությունների յերենթարկվում (Խեռոյուրի ջերմաշափով մոտ —  $15^{\circ}$ -ից մինչև  $+30^{\circ}$ -ը): Բայց մեզ հաջողվում է բարեխառնության արդպիսի փոփոխությունների ժամանակ հարմար կյանք ունենալ միայն այն պատճառով, վոր կարողանում ենք ջերմությունը յենթարկել մեզ, մենք այնպես ենք հարմարեցնում, վոր


տներում բարեխառնությունն անհամեմատ ավելի քիչ է փոփոխվում, քան դուրսը:

Միայն մեզ և մեզ արջապատող կենդանիներին ու բույսերին չե վոր ջերմությունը տաքացնում է. Ջերմությանն ուղղություն տալով մենք կարողանում ենք նրա միջոցով կերակրությը յեփել ու տապակել, մեքենաները շարժել, մետաղները

հալել և հազարավոր այլ գործերում մեր աշխատանքն առաջ տանել: Բայց յերբ տաքությունը՝ կրակը, մեր զեկավարման յենթակա չե, նա կարող է գառնալ հզոր ավերիչ ույժ: Այստեղից պարզ է, վոր ջերմությունը մեզ յենթարկելու և նրան ուղղություն տալու հարցը պատականում է զիտության կարևորագույն՝ խնդիրների շարքին:

99. ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐ.—Նախնական պայմաններում ապրող վայրենիներն ուղղակի իրենց վրաներում եյին կրակ անում, իսկ ծխի համար առաստաղում յերդիկ եյին շինում: Ավելի բաղաքակիրթ մարդիկ հետզհետե սովորեցին վինել զանազան տեսակ խողովակավոր վառարաններ (նկ. 73), վորոնց մեջ ավելի հարմար է կրակ անել, և ծուխն ել ավելի լավ է յելնում: Վորպեսզի ծուխը յելնի, անհրաժեշտ է մշտական «ձգում», վոր առանց խողովակների դժվար է ստանալ: Ընդունված է ասել, վոր վառած ժամանակ վառարանը սենյակից «ձուխը դուրս է ձգում»: Տեսնենք վորքան ճիշտ է այս արտահայտությունը:

100. ՈԴՔ ՏԱՐԱՆԱԼԻՄ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ Ե.—Վերցնենք մի սրվակ (նկ. 74), փակենք խցանով և վերջնիս մեջ մըտցընենք յերկու կողմից բաց տապակյա մի խողովակ: Այս խողովակի մեջ մտցնենք գունավորած հեղուկի մի և կաթիր ջերբ սրվակում ողը մթնոլորտային ձաշման տակ է զանվում, և կա-



նկ. 73. Ֆանը ողը բանում և թեփեկ տեղը:

թելը կանգնում ե խողովակի մեջ վորեւ տեղում։ Յեթե սըր-  
վակն այժմ թեթևակի տաքացնենք բոցով կամ հենց ձեռքով,  
կաթիլը խողովակի մեջ կակսի վեր բարձրանալ, իսկ ողը սրվա-  
կի մեջ ելի մթնոլորտային ճնշման տակ կըդանվի։ ուրեմն


յերբ ողի վրա յեղած ճնշումն անփոփոխ  
թողնելով՝ ողը տաքացրինք, նրա ծավալը  
մեծացավ։ Անփոփոխ նեւման յենրակա  
ողը տաքանալուց ընդարձակվում է։ Վո-  
րովինետև սրվակում յեղած ամբողջ ողը տա-  
քացնելուց հետո ավելի մեծ ծավալ ընդու-  
նեց, ապա պարզ ե, վոր յուրաքանչյուր  
խոր. սմ.՝ մեջ այժմ առաջվանից ավելի  
քիչ ող կա։

Հետևաբար, անփոփոխ նեւման դեպքում  
մի խոր. սմ. տաքացրած ողն ալելի իից ե  
կըուում, բան նույն ծավալով սառն ողը։

**Ուրիշ խոռով,** անփոփոխ նեւման դեպքում՝ տաքանալուց ողի  
տեսակարար կըիոր նվազում է։

**101. ԻՆՉՈՐԻ ՎԱՐՄՐՄՆԻՑ ԾՈՒԽԸ ՎԵՐ Ե ԲԱՐՁՐԱՆՈՒՄ.**—  
Յերբ վառարանը վառվում ե (նկ. 73), կրակի վերելը գտնվող  
ողը տաքանում ե, ընդարձակվում և առաջվանից ավելի թե-  
թևանում։ Այդ տաք ողն ավելի թեթև ե լինում, քան նրա  
շրջապատի նույն ծավալով սառն ողը։ Այս պատճառով տաք  
ողը նույնպիսի պայմաններում ե լինում, ինչ վոր ողապա-  
րիկը, այսինքն ավելի թեթև ե կշռում, քան նրա զուրս մղած  
սառն ողը։ Ուստի տաք ողի վրա աղդում ե դեպի վեր ուղղված  
մի ույժ, վորը հավասար ե դուրս մղած սառն ողի և այդ տաք  
ողի կշռութելի տարբերության (§ 83)։

Վեր բարձրանալով՝ տաք ողը մտնում ե կրակի վերել գըտ-  
նվող խողովակի մեջ և շատ շուտով վերջինս ամբողջովին լցնում։  
Խողովակը լցնող ողի ամբողջ ծավան այնպես ե վեր բարձ-  
րանում, ինչպես կրակի վերել գտնվող տաքացած ողի առա-  
ջին փոքր ծավալը. բայց այժմ այդ ծավալը շատ ավելի մեծ  
ե, ուստի և դեպի վեր ավելի մեծ ճնշում ե ստացվում, ողն



նկ. 74.

ավելի արագ ե բարձրանում, և ձգումն ուժեղանում է։ Յեր-  
կար խողովակի մեջ ողի ծավալն ավելի մեծ ե, քան նույն տը-  
րամագիծն ունեցող կարճ խողովակի մեջ, ուստի, յեթե մա-  
ցած պարագաները նույնն են, վորքան ավելի յերկար լինի խո-  
ղովակը, այնին ավելի ուժեղ կլինի ձգումը։

Սրբառութելի ժամանակներն ասում եին, թե տաք ողը  
բարձրանում ե իր «թեթևության» շնորհիվ, իսկ քարն ընկնում  
ե իր «ծանրության» շնորհիվ։ Այժմ հասկանում ենք, վոր տաք  
ողի «թեթևություն» ստացվում ե տաք ողի և սառն ողի  
տեսակարար կշռութելի տարբերության հետևանքով։ Ծան-  
րության ույժն ամեն մարմին դեպի ներքեւ ե ձգում, բայց ա-  
վելի մեծ ույժով նա ձգում ե ծանր նյութը, որինակ մնդիկը,  
քան նույն ծավալով ավելի թեթև նյութը, որինակ ջուրը։ Յերբ  
մնդիկը լցնում ենք ջուր պարունակող ամանի մեջ, նա իջնում  
ե տակը և այդպիսով ջուրը վեր ե բարձրացնում։ Յուղը ջրից  
թեթև ե, ուստի և յեթե ամանի մեջ ջուր և յուղ ածենք, յուղն,  
ինչպես ասում են, յերես կանի։ Իրոք, ջուրը, վորպես ավելի  
ծանր հեղուկ, ներքեւ կիշնի, հարկադրելով՝ վոր յուղը բարձ-  
րանա։ Անիկիկ—ջուր, կամ ջուր—յուղ, սիսեմի ընդհանուր  
ծանրության կենդրոնը միայն այն դեպքում ե հնարավոր ամե-  
նացած դիրքը գրավում (§.87), յերբ մնդիկը ներքեն ե, իսկ  
ջուրը վերելը, կամ ջուրը ներքեն ե, իսկ յուղը վերել։

Նույնն ե տեղի ունենում նաև խողովակի մեջ ձգման նը-  
կատմամբ։ Տաք ողը վոչ թե ինքն իրեն ե բարձրանում, այլ  
այս պատճառով, վոր նրան հրում ե սառն ողը, վոր ավելի ու-  
ժեղ ե ներքեւ ձգման, քան տաք ողը։ Սառն յեվ ասք ողի սիս-  
եմի ծանրության կենդրոնը միայն այն դեպքում ե հնարավոր  
ամենացած դիրքը գրավում, յերբ ավելի ծանր սառն ողը ներ-  
քեվն ե գտնվում։

**102. ԶԵՌՈՒՑՈՒՄ.**—73-րդ նկարում պատկերացրած վա-  
ռարանը, վոր բաղկացած ե ակութից (կրակատեղից) և ուղիղ  
խողովակից, հարմար չե վոչ շենք տաքացնելու և վոչ ել կերա-  
կուր պատրաստելու համար և ամենեկն խնայողական չե, վո-  
րովինետև խողովակով շատ տաքություն ե խուսափում և զուր


կորչում։ Շատ ավելի հարմար և խնայողական են «ռուսական» վառարանը և խոհանոցի պլիտան, բայց նրանցով կարելի յե միայն փոքր շենքեր տաքացնել։ Այսպես կոչված հոլանդական վառարաններն անհարմար են մեծ տներ տաքացնելու համար այն պատճառով, վոր կարիք ե լինում գրեթե յուրաքանչյուր սենյակում առանձին վառարան շինելու։ Ներկայումս շատ ավելի նպատակահարմար ե մեծ տներում ունենալ այսպես կոչված կենդրոնական ջեռուցում։ Դրա համար տան ներքեկի մասում շինում են մի մեծ կրակարան, վորից և տաքությունը բաշխվում ե ամբողջ շենքին։ Կենդրոնական ջեռուցման դեպքում տաքության բաշխումը կատարվում է յերեք յեղանակով, 1) տաքացրած ողի միջոցով («ողային» ջեռուցում), 2) տաքացրած չոփի միջոցով («ջրային» ջեռուցում) և 3) տաք ջրային զոլորշու միջոցով («շոգու» և «շոգեջրային» ջեռուցում)։

**103. ՈԴԱՅԻՆ ԶԵՌՈՒՅՑՈՒՄ.**—75-րդ նկարում ուրվագծորեն պատկերացրած ե «ողային» ջեռուցման կազմությունը, այսին-

քն այնպիսի ջեռուցման, վորի ժամանակ տաքությունը շենքի մեջ տարածվում ե տաքացրած ողի միջոցով։ Կրակն անում են F բաժանմունքում, վորից դեպի տանիքն ե բարձրանում ծխահան խողովակը։


Ողի շարժման ուղղությունը հեշտ ե նկատել նկարի վրա նշանակած սլաքներով։ Սառն ողը խողովակով մտնում ե կրակարանը շրջապատող տարածությունը, այսինքն տաքանում ե և ապա խողովակներով տարածվում ե դեպի սենյակները։

**104. ՈԴԱՓՈԽՈՒՄ** (ՎԵՆ-ՏԻԼԻՍՅԻԱ).—Վերցնենք պատվարաթղթից մի տուփ (նկ. 76) և նրա կափարիչի վրա իրա-



Նկ. 75. Ողային ջեռուցում։

րից վորոշ հեռավորությամբ յերկու անցք բանանք, ամեն մեկը մոտ 2 սանտիմետր տրամագծով։ Այդ անցքերից մեկի մոտ դնենք մի փոքրիկ վառած մոմ և ապա անցքն ու մոմը ծածկենք լամպի ապակով։ Մյուս անցքը ևս փակենք լամպի ապակով և ապա վերելից այս ապակու մեջ մտցնենք մի միացող մարխ, վորին կարելի յե մի քիչ բամբակ կապել, վորպեսզի ավելի ծուխ առաջանա։ Այն ժամանակ կը նկատենք, վոր ծուխը մի անցքով իջնում ե և մյուսով բարձրանում։ Բացատրենք այս յերկույթը։ Մյուս պարունակող ապակու մեջ ողը տաքացած ե, ուստի և ավելի թեթև, քան շրջապատող սառն ողը։ Այս պատճառով ել սառն ողը ձրգում ե այդ տաք ողը ողուրս մղել, բայց սառն ողի միակ ճանապարհը, վորով նա կարող ե տաք ողի տակը մըտնել, յերկրորդ անցքն ե, վորով և մանում ե տուփի մեջ։ Ծուխը միայն նրա համար ենք բանեցնում, վոր կարողանանք ողի շարժումը նկատել։




Նկ. 76. Տաքությունն ողի շրջապատթյուն և առաջացնում։

Ողի այն շրջանառությունը, վոր այս հասարակ փորձում տեսանք, տեղի յե ունենում նաև դպրոցների, թատրոնների և այլ շենքերի ողափոխման ժամանակ։ Սակայն մի քանի դեպքերում միայն տաքացնելը բավական չե ողը բավարար չափով արագ շարժման մեջ դնելու համար։ այսպիսի դեպքերում փորձածում են ելեքտրական ողափոխիչներ (վենտիլատորներ), վորոնք ողը շարժում են պտավող պլուպելերներով։ Լավ ողափոխման համար անհրաժեշտ ե, վոր 1 ժամում ամեն մի մարդու համար մինչև 100 խոր. մետր մաքուր ող ներս մտնի։

Մթնոլորտային ողում քամու առաջացման պայմանները նման են վառարանի խողովակում ձգուի առաջացնող պայմաններին։ Վորովհետև յերկրի մակերեսույթի վրա ողը տրաքել

տեղերում տարբեր չափով եւ տաքանում, ապա և նրա խոռոշությունը տարբեր եւ լինում, վորով և առաջ եւ գալիս ողի շարժումը:

Ցերկը մակերեսույթին մոտ առաջ են գալիս հոսանքներ, վորոնք ուղղված են սեծ ճնշումից դեպի փոքր ճնշումը, իսկ մթնոլորտի վերին շերտերում այդ ժամանակ ստացվում են հակադիր ուղղության հոսանքներ, վորոնք ձգտում են ողի բաշխումը միորինակ դարձնել:



Կ. 77. Ջրային ջեռուցում:

Նը տալով ռադիատորներին՝ ցրտանում եւ և վերադառնում ավազանը: Ստացվում ե ջրի շրջանառություն, վորի ուղղությունը նկարում սլաքներով ցույց ե տված:

Ջրի այսպիսի շրջանառությունը շատ լավ կարելի յե դիտել ջեռարանի ապակյա մողելի վրա, յեթե ջրի մեջ մի քանի կաթիլ թանաք կաթեցնեք: Տաքացվող ջրի շրջանառությունն

### 105. ՋՐԱՅԻՆ ՋԵՌՈՒԻՑՈՒՄ. —

77-րդ նկարում ուրվագծուրեն պատկերացրած ե այն ջեռարանը, վոր բանեցնում են ջրային ջեռուցման ժամանակ: Ցուրտ ջուրն իջնում ե մի խողովակով, վոր մտնում ե ավազանի վերեից և հասնում ե գրեթե մինչև հատակը: Ավազանի հատակում շինված ե մի անցք, վորից ջուրը խողովակով մտնում ե ջեռուցչի մեջ: Սա բաղկացած է դրսից տաքացվող ՏՏՏ ծընկավոր խողովակից: Այնուհետեւ ջուրը խողովակով մտնում հասնում ե ավազանից բարձր մակարդակի, մտնում ե ռադիատորների խողովակի ցանցի մեջ, ապա ջերմությունը տալով ռադիատորներին՝ ցրտանում ե և վերադառնում ավազանը: Ստացվում ե ջրի շրջանառություն, վորի ուղղությունը նկարում սլաքներով ցույց ե տված:

ավելի հեշտ կարելի յե նկատել թույլ կրակի վրա դրված լայն ամանի մեջ: յեթե այդ ժամանակ ջրի մեջ թեփ կամ թղթի մանր կտորներ ածենք, ապա ջրի շարժումը շատ պարզ նկատելի կը դառնա: Ջրի շրջանառություն տեղի չի ունենում, յեթե անոթի վերին մասն ե տաքացվում:

Ցեթե 74-րդ նկարի սրվակը ջրով լցնենք և տաքացնենք, կը տեսնենք, վոր ջուրն ընդարձակվում է: Այստեղից հետեւմ ե, վոր 1 խոր. սմ. տաք ջուրն ավելի քիչ ե կշռում, քան 1 խոր. սմ. սառն. ջուրը, այսինքն ասք ջուրն ավելի փոքր տեսակարար կօխու ունի, քան սառն ջուրը: Ցերք տաքացվող անոթի մեջ ջրի վորեւե ծավալ շրջապատի ջրից ավելի յե տաքանում, նա թեթևանալով դեպի վեր ե բարձրանում, վորովհետև շրջապատի ավելի ծանր ջուրը ձգտում է ներքեւ իջնելու: Այսպիսով շրջանառությունը ջրի մեջ ձիշտ նույն ձեռվ ե առաջանում և պահպանվում, ինչպես ողի մեջ:

106. ՋԵՐՄՄԱՌՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՎԵԿՑԻԱ). — Մենք ծանոթացանք մի յերկույթի հետ, վորի ժամանակ ջերմությունը մի տեղից մյուսն ե անցնում՝ տաքվելով տաքացած ողի կամ ջրի հոսանքներից: Այս յերկույթը կոչվում է ջերմատարություն կամ կոնվեկցիա:

Կոնվեկցիա կոչվում է այն յերեվույրը, վորի ժամանակ ջերմությունը ասք մարմիններից ավելի սառը մարմիններին և անցնում ենուկի կամ գազի շարժման միջոցով:

107. ՋԵՐՄՄԱՀԱԴՐՈՒԹՅՈՒՆ. — Տաք թեյի մեջ արձաթի գդալը շատ շուտով մինչև կոթի ծայրը տաքանում է, յերկաթի կրակիսանիչը (աթարոց), վորի մի ծայրը տաք պարանի մեջ է, նույնպես մի քանի րոպեյում տաքանում է մինչև մյուս ծայրը: Քանի դեռ կրակիսանիչի մի ծայրն ավելի տաք է, քան մյուսը, ջերմությունը շարունակ տաք ծայրից դեպի մյուս ծայրն է անցնում: Վառարանի ջերմությունը հագեցի մյուս ծայրը ողին՝ անցնելով յերկաթի կամ աղյուսի պատի միջով և այդ այնքան ժամանակ ե տևում, քանի դեռ վառարանի ներման ավելի տաք է, քան դուրսը:

Այս դեպքում այն մետաղը, առհասարակ այն նյութը, վորի միջով չերմությունը հաղորդվում է, ինքը չի տեղափոխում, այլ չերմությունն է անցնում նրա միջով։ Չերմության տարածման այսպիսի յեղանակը կոչվում է զերմահաղորդություն։

Զերմահաղորդություն կոչում ե այն լեռնվույրը, զորի ժամանակ շերմուքունն անօարժ մնացող գորեվի նյութի միջով տաք մարմից անցնում է զեպի սառը մարմինը:

108. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԼԱԿ ՅԵՎ ՎԱՏ ՀԱՂՈՐԴԻՉՆԵՐԸ. — Յեթև կաթը մետաղի ամանում ուժեղ կրակի վրա տաքաց- նենք, հեշտ կըկպչի տակից: Այդ նրանից ե առաջանում, զոր մետաղի ամանը կաթին շատ արագ ե հաղորդում կրակի ջեր- մությունը: Վորպեսզի կաթը տակից չըկպչի, կրակի և ամանի միջև դնում են ասբեստի մի թերթ: Ասբեստն իր միջով ջեր- մությունն այն աստիճան դանդաղ ե հաղորդում, զոր նրա թեր- թի վերևի մակերեսուց թը շատ ափելի թույլ ե տաքանում, քան ներքինը, զոր կրակի կողմն ե դարձած: Այդ ժամանակ ջեր- մությունը բավական դանդաղ հոսելով դեպի կաթը՝ վրա յե հասցնում կռնիվելցիայի հետևանքով ամբողջ կաթի մեջ տարա- բածվելու, նախքան կաթը զորեւ տեղ տակից կրկպչի: Ասբեստի թերթով հաճախ պատռում են այն խողովակները, զորոնցով գոլորշի յե անցնում, այլև զանազան ջեռուցիչներ և յեռարան- ներ:

Φωμαρ, αργοτευρ և ապակին ջերմությունն իրենց միջով շատ դանդաղ են հաղորդում։ Այս հատկության շնորհիվ նրանք տների կառուցման համար շատ հարմար նյութեր են, վորով-հետև ձմեռվա ցրտերին տան տաքությունը չեն դուրս թողնում, իսկ ամառվա ուժեղ շոգերին ել դրսի տաքությունը չեն ներս թողնում։ Հենց այս նույն հատկության շնորհիվ աղյուսը շատ հարմար նյութ է վառարաններ և խողովակներ շինելու համար։ Աղյուսն այնքան վատ է հաղորդում ջերմությունը, վոր աղյուսի վառարանի ներսը կարելի յե շատ ուժեղ կրակ անել և շրջապատում միայն չտփափոր ջերմություն ստանալ։ Ուրիշ խոսքով, աղյուսի պատի ներսի և դրսի կողմում բարե-

խառնությունները կարող են շատ տարբեր լինել, և այնուամենայնիվ միայն քիչ ջերմություն կանցնի պատի միջով և դրսում կը կորչի:

Հաճախ հարկավոր ե լինում հոգալ, վոր վորեե բան, որին սակ՝ կերակուքը, ըստ հնարավորության յերկար ժամանակ տաք մնա, այսինքն իր ջերմությունը վորքան կարելի յե դանդաղ հաղորդի շըջապատող մարմիններին։ Հաճախ ել, ընդհակառակն, հարկ ե լինում հոգալ, վոր վորեե բան, որինակ՝ սակույցը, շըջապատող մարմիններից կարելիին չափ քիչ ջերմություն ստանա։ Թե մեկը և թե մյուս նպատակով շինում են կրկնակի պատեր ունեցող պահարաններ կամ արկդներ և այդ պատերի միջև դնում են բամբակ կամ վորեե այլ նյութ, վորի ներկայությունը թուլլ չի տալիս, վոր պատերի միջև ոդի ջերմատար (կոհվեկցիոն) հոսանքներ առաջանան։ Այդպիսի կրկնակի պատերի միջով ջերմությունը շատ դանդաղ է հաղորդվում թե դեպի ներս և թե դեպի դուրս։ Վորպեսզի ճանապարհորդելիս կարելի լինի յերկար ժամանակ տաք թեյ կամ, ընդհակառակն, սառը ջուր ունենալ գործածում են հատուկ շերլ, վորոնք կոչվում են «թերմոս»։ Սրանք բաղկացած են մեկը մյուսի մեջ գրված յերկու անոթներից, վորոնց պատերի միջև գտնված տարածությունն ողահան և արգած և ապա փակված, ուստի և պատերի միջև չի կարող վորեե կոնվեկցիա առաջանալ։ Ամեն նյութ, վորի միջով ջերմությունը դանդաղ է անցնում, կոչվում և ջերմության վաս հաղորդիչ։ Ընդհակառակն, յերկաթի շերտի, որինակ՝ տապակոցի (թափայի) միջով ջերմությունը շատ շուտ և հաղորդվում, այսպես վոր բարեխառնությունը պատի ներսի և զրսի կողմից գրեթե նույնն ե, և ջերմությունը հեշտ և հաղորդվում շըջապատող ոդին։ Ընդհանրապես բոլոր մետաղները ջերմությունն արագ են հաղորդում, ուստի և կոչվում են ջերմության լավ հաղորդիչներ։

109. ԲԱՐԵԽԱՌՈՒԹՅՈՒՆ.—Ամեն վոք, ի՞արկե, ռասկա-  
նում և, թե ինչ է նշանակում «տաք ե» և ինչ է նշանակում  
«ցուրտ ե»։ Կատարենք սակայն հետեւյալ փորձը։ Վերցնենք  
յերեք աման. մեկի մեջ ածենք սառը, մյուսի մեջ՝ գոլ, յեր-  
բորդի մեջ՝ տաք ջուր։ Այ ձեռքներս դնենք սառը ջրի մեջ,  
իսկ ձախի տաքի ձեռքերս միառժամանակ այդպես պա-

հելուց հետո հանենք ամաններից և դնենք գոլ ջուր պարունակող ամանի մեջ: Այն ժամանակ այդ ջուրը աջ ձեռքի համար տաք կը թվա, իսկ ձախի համար՝ սառը: Այս փորձից տեսնում ենք, վոր բարեխառնությունները վորոշելու համար չենք կարող միշտ հենվել մեր մարմնի զգայության վրա:

Մենք գիտենք, վոր ողը տաքանալուց ընդարձակվում է: Այստեղից միտք և ծագում, վոր կարելի յե ողի ընդարձակումն սուտագործելով բարեխառնությունն ավելի վստահելի միջոցով չափել, քան մեր զգայությունն է:

Այս միտքն առաջին անգամ հղացավ Գալիլեյը, վոր ջերմաչափի առաջին հնարողներից մեկն եւ նա վերցրեց նեղ անցքով մի ապակյա խողովակ, մի ծայրը գնդաձև դարձրեց, այնուհետև գունդը նախալես տաքացնելով խողովակի բաց ծայրըն ընկղմեց գունավորած ջուր պարունակող մի ամանի մեջ (նկ. 78): Յերբ գնդի մեջ ողը ցրտացավ, ջուրը խողովակի մեջբարձրանալով մի վարոշաեղ կանգնեց, այնուհետև յերբ գուն-

դը շրջապատող ողը տաքանում եր կամ ցըտանում, ջրի սյունակի բարձրությունը փոփոխվում եր: Գալիլեյի այս ջերմաչափն իր հիմնական սկզբունքով նըման և մեր սովորական ջերմաչափներին, վորոնք այսպես են շինվում. շատ նուրբ անցք ունեցող խողովակի ծայրին փոքրիկ գունդ են ձևացնում. այս գունդը և խողովակի մի մասը սկզբիկ կամ սպիրու են լցնում, այնուհետև խողովակի բաց ծայրը փակում են և խողովակին ամրացնում մի ցուցնակ՝ բարեխառնությունը վորոշելու համար:



110. ՋԵՐՄԱՉԱՓԱԿԻՆ ՅՈՒՑԱԿԻՆԵՐ. — Գալիլեյի ջերմաչափով կարելի յե բարեխառնության փոփոխությունները նկատել բայց նա հնարավորություն չի տալիս իմանալու, թե ջրի սյունակների բարձրությունների տարբերությանը բարեխառնությունների ջերմաչափը: Ինչ տարբերություն է համապատասխանում:

Բարեխառնությունը չափող ցուցնակ շինելու համար ամենից առաջ նշանակում են ջերմաչափի այսպես կոչ-

ված հաստատուն կետերը, այսինքն սնդիկի սյունակի ծայրի այն դիրքերը, վորոնք համապատասխանում են փորձով հեշտ իրագործելի յերկու անփոփոխ բարեխառնությունների: Իբրև այդպիսի բարեխառնություններ ընդունում են՝ հալվող մաքուր սառուցի բարեխառնությունը և յեռացող մաքուր ջրի բարեխառնությունը նորմալ միջնորդատարին ճնշման դեպքում: Նոր պատրաստած ջերմաչափը նախ դնում են հալվող սառուցի, ապա յեռացող ջրի մեջ, և ցուցնակի վրա նշանակում են սնդիկի սյունակի դիրքը այդ յերկու բարեխառնությունների համար: Այնուհետև նշանակած կետերի հեռավորությունը բաժանում են հավասար մասերի, վորոնք համապատասխանում են բարեխառնության աստիճաններին:

Քանի աստիճանի յե բաժանվում ջերմաչափի հաստատուն կետերի հեռավորությունը: Այն ջերմաչափների մեջ, վորոնք մեզնում գործածվում են առորյա նպատակների համար, հաստատուն կետերի հեռավորությունը բաժանվում է 80 աստիճանի: Սառուցի հալման կետը նշանակվում է 0°, իսկ ջրի յեռման կետը 80°: Այսպիսի ջերմաչափները կը ունի են իրենց հնարավ ֆրանսացի գիտնական Ռեոմյուրի անունը: Գիտական նպատակների համար, այլև բժշկական սլրակտիկայում ջերմաչափների մեջ այլ ցուցնակ է գործածվում: Այս ջերմաչափների մեջ հաստատուն կետերի հեռավորությունը 100 աստիճանի յե բաժանվում: Սառուցի հալման կետը նշանակվում է 0°, իսկ ջրի յեռման կետը 100°: Այս ցուցնակը գործածության մեջ է մացրել շինուազի գիտնական ծերսիուարը, վորի անունով և կոչվում է:

Ինչպես Ռեոմյուրի, այսպես ել Յելիփուսի ջերմաչափի մեջ ցուցնակը շարունակվում է 0-ից դեպի ցած և ջրի յեռման կետից դեպի վեր: 0-ից ցած աստիճանները այսինքն ցըտության աստիճանները, համարվում են բացասական և գըրվում են մինուս նշանով: Ռեոմյուրի աստիճանները Յելիփուսի աստիճաններից տարբերելու համար աստիճանների թվի սուս գըրում են R կամ C. որինակ՝ 17° R նշանակում է տաքության 17 աստիճան ըստ Ռեոմյուրի, իսկ — 7° C նշանակում է ցըտության 7 աստիճան ըստ Յելիփուսի:

Վորովիետև ջերմաչափի ցուցնակի վրա Ռեոմյուրի 80 աստիճանը նույնքան տեղ ե բռնում, վորքան և Ցելսիուսի 100 աստիճանը, ապա պարզ ե, վոր Ցելսիուսի աստիճանները փոքր են Ռեոմյուրի աստիճաններից, ուստի և միենույն բարեխառնությունն ըստ Ռեոմյուրի ավելի փոքր թվով ե արտահայտվում քան ըստ Ցելսիուսի: Դժվար չե հաշվել, վոր Ռեոմյուրի մեկ աստիճանը հավասար ե Ցելսիուսի  $\frac{5}{4}$  աստիճանին և, ընդհակառակն, Ցելսիուսի 1 աստիճանը հավասար ե Ռեոմյուրի  $\frac{5}{4}$  աստիճանին: Այս իմանալով դժվար չե Ռեոմյուրի ջերմաչափի ցուցմունքը վերածել Ցելսիուսի աստիճաններին, և ընդհակառակն, Դժվար չե, որինակ՝ հաշվել վոր  $20^{\circ}\text{R} = 25^{\circ}\text{C}$ , իսկ  $20^{\circ}\text{C} = 16^{\circ}\text{R}$ :

111. ԶԵՐՄԱԿԱՆ ՀՆԴԱՐՁԱԿՈՒՄ.—Մոդիկի ջերմաչափը ցույց ե տալիս, վոր սնդիկը, ողի նման, տաքանալիս ընդարձակվում ե և ցրտանալիս սեղմվում: Նույն ե տեղի ունենում նաև սպիրտի, մետաղների և ընդհանրապես գրեթե բոլոր մարտարածություններ են թողնում, վորպեսզի ամառվա շոգերին ուղաները տաքությունից յերկարելով իրար չճնշեն: Ցերկաթի կամուրջներ կառուցանելիս ֆերմերի (հեծանաձգության) ծայրը չեն ամրացնում, այլ դնում են գլանակների վրա, վորպեսզի յերբ ֆերմերը յերկարեն և կարճանան, վորմահեցերը չխորտակվեն: Ցեթե հաստ ապակուց շինած սառն բաժակի մեջ տաք ջուր ածենք, բաժակը կարող ե ճաքել, վորովհետև տաքության աղեցությամբ նրա ներսի մակերեսույթն ավելի շուտ ե ընդարձակվում, քան դրսինը:

Համարյա բոլոր մարմինները տաքությունից ընդարձակվում են և ցրտից սեղմվում, բայց բարեխառնության միենույն փոփոխության համար զանազան մարմիններ զանազան չափով են ընդարձակվում: Որինակ՝ յերբ 10 մետր յերկարության պողպատի ուղարկությունում ենք  $-20^{\circ}\text{C}$ -ից մինչև  $+20^{\circ}$ -ը, այսինքն Ցելսիուսի  $40^{\circ}$ -ով, կես սանտիմետր ե յերկարում: Այսումինի ուղարկության նույն փոփոխության համար կերկարել գրեթե մի ամրող սանտիմետր, իսկ կապարինը՝ մի սանտիմետրից ել ավելի:

112. ԶՐԻ ԶԵՐՄԱԿԱՆ ՀՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Զուրն այն սակավաթիվ նյութերից ե, վորոնք ցրտանալիս սեղմվում են վոչ բոլոր աստիճաններում: Մինչև  $4^{\circ}\text{C}$  ցրտանալիս ջուրը սեղմվում ե, այսուհետև յերբ շարունակում ենք ավելի ցրտացնել հետղիետե ընդարձակվում ե մինչև  $0^{\circ}$ -ին, այսինքն սառուցման կետին համարելու:  $0^{\circ}$ -ում ջուրը սառչում ե և միաժամանակ արագորեն ընդարձակվում, ջուրը սառչում վոր սառուցյի տեսակարար կշիռը փոքր ե զրի տեսայնակես վոր սառուցյի տեսակարար կշիռը փոքր ե զրի տեսակարար կշիռից: Այս պատճառով սառուցյը ջրում լողում ե, և կարար կշիռից մոտ  $\frac{1}{10}$ -ը Ջից դուրս ե մնում: Զրի ընդարձակնորա ծավալի մոտ  $\frac{1}{10}$ -ը Ջից դուրս ե մնում: Զրի ընդարձակնորա ծավալի մինչև  $0^{\circ}$ -ին, այս առանձնահատկությունը բնության կյանքում շատ ման այս առանձնահատկություններում դետերն ու ճերն ամբողվեր, ապա մեր լայնություններում դետերն ու ճերն ամբողվեր, ապա մեր լայնություններում դետերն ու ճերն ամբողվեր, ապա մեր լինելին, վոր ամառը կարող եր միայն յերջովին սառուցյ կը լինելին, վոր ամառը կարող եր միայն յերջովին սառուցյ հալվել:

113. ՏՄՐԾՑՄԱՆ ՅԵՎ ՑՐԾԱՑՄԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ.—Յեթե մի փոքր ամանի մեջ տաք ջուր ածենք և այդ ամանը Յեթե պարունակող մի մեծ ամանի մեջ, ապա դնենք ցուրտ ջուրը կը տաքանա, իսկ տաքը կը ցրտանա, մինչև վոր յերկաթի բարեխառնությունները հավասարվեն:

Յեթե ջրով ամանը դնենք նույն բարեխառնության ջուր պարունակող մի մեծ ամանի մեջ, ապա բարեխառնությունը յերկու ամանում ել անփոփոխ կը մնա:

Յուր տսենյակը միայն այն գեպօռմ կարողէ տաքանալ, յեթե նա շերմություն ե ստանում վորեւ տաք մարմնից, որինակ՝ վառանից, ուղիւատորից, լամպից, ողային ջեռուցման գեպօռմ տաքացած ողից և այլն: Այդպիսի տաք մարմնից շերմությունը հաղորդվում ե սենյակի ողին և սենյակում գտնվող բոլոր մարմիններին, և յեթե այդ ժամանակ գեպի դուրս շերմության կորուստ չի լինում, ապա շերմությունը այնքան ժամանակ կորուստ չի լինում, մինչև վոր սենյակում թե ողը և թե բոլոր հաղորդվում, մինչև վոր սենյակում գտնվող բոլոր մարմինները միենույն բարեխառնությունն են ընդունում: Այս մարմինները միենույն բարեխառնությունն են ընդունում: Այս պիտով տաքացման կամ ցրտացման յերկույթը կարող ե այն գեպօռմ տեղի ունենալ, յերբ կամ տարբեր բարեխառնություն

ունեցող առնվազն յերկու մարմին։ Ամեն մարմին տաքանում է վորեւ այլ մարմնի հաշվին։ Յուրա մարմինը կլանում է տաք մարմնի կողը ած ջերմությունը, վորովհետև ջերմությունը միշտ տաք մարմնից ցուրտ մարմնին է անսնում։

Տախանալը լեզ ցրանալը շերտուրյուն սահմալին ու արձակելին և, վար տեղի լի ունենալով ապրելու բարեկարգությունը և առաջարկը առաջարկությունը ապրելու բարեկարգությունը և առաջարկը

Ավելի սաք մարմնի արձակած ջերմությունը հաղողվում է նվազ սաք մարմնին:

114. ՅԵՌՈՒԻՄ.—Ով յերբեն առիթ ե ունեցել վորեն բան  
յեփելու, գիտե, վոր ջուրը վառարանում կամ պլիտայի վրա  
փակ ամանում ավելի շուտ ե յեռում, քան բաց. Այս յերեսույ-  
թի պատճառը պարզելու համար այժմ հետազոտենք ջրի գո-  
լորշանալը և, ընդհակառակն, գոլորշու ջուր դառնալու:

Վերցնենք բաց ամանով ջուր և կրակի վրա տաքացնենք. ջեր-  
մաչափը դնենք ջրի մեջ և հետեւնք, թե ինչ է կատարվում:  
Յերբ ջուրը տաքանում է, նկատում ենք, զոր ամանի հատակին  
մոտ սկսում են պղպջակներ յերևալ, զորոնք վեր են բարձրա-  
նում, բայց սկզբում այդ պղպջակները չքանում են դեռ ջրի  
յերեսին չհասած: Յերբ ջուրն ավելի ու ավելի յենք տաքաց-  
նում, սկսում են ավելի ու ավելի մեծ քանակով և ավելի խո-  
շոր պղպջակներ յերևան գալ: Նրանք բարձրանալով սկսում են  
ավելի ու ավելի մոտենալ ջրի մակերեսույթին և, վերջապես,  
մակերեսույթ դուրս գալով՝ ողի մեջ պայթում են: Այս յերե-  
փույթը կոչում ենք ջրի լեռում:

Սկզբում ջրի տաքանալու հետ միաժամանակ նրա մեջ ընկըզմած շերմաշափը ցույց է տալիս, վոր բարեխառնությունը շարունակ բարձրանում է. բայց հենց վոր յեռումն սկսվում է, շերմաշափի ցուցմունքը այլևս չի փոխվում անկախ այն հանգամանքից՝ թույլ ե յեռում ջուրը, թե ուժեղ, և չնայած նրան, վոր ջուրն, ի հարկե, շարունակում է կրակից տաքություն ստանալ, Յեթե շերմաշափը դնենք վոչթե ջրի, այլ ջրի մակերեսույթին մոտ դոլորշիների մեջ, կը նկատենք, վոր առաջացող դոլորշու բարեխառնությունը նույնն է, ինչ վոր ջինը:

Յերբ ջուրը յեռում է, առաջացող գոլորու պղպջակները ամա-  
սի հաշտելիք բարձրանում են մինչև մակերեւվութը:

Յի հատակը բարձրանում է ու դառնում է առաջավայր՝ անփոփոխ և անփոփոխ պահպանվության մեջ:

Յեռման ժամանակ առաջացող գոլորու բարեխառնությունը  
նույն է, ինչ վոր յեռացող շրինք:


115. ԳՈԼՈՐԾԱՅՄԱՆ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ.—Յերբ յեռացող ջուր պարունակող ամանի տակից բոցը հեռացնում ենք, յեռումը դադարում է, այսինքն այլևս գոլորշու պղպջակներ չեն առաջանում. բայց յերբ բոցը նորից ամանի տակ ենք դրնում, պղպջակներն իսկույն բկառում են նորից յերևալ: Գոլորշու պղպջակները միայն այն ժամանակ են առաջանում, յերբ ջերմության մատակարարումը չի դադարում: Հետեւբար, ջուրը նույն բարեխառնության գոյացի դարձնելու համար հարկադր է ժամանություն ծախսել:

Հայոց ե ջնշանքիւն առ արքա մատանակ կլանվող շերմուքյունը կոչ-  
Զուրք զոլորացնելու ժամանակ կլանվող շերմուքյունը:

Վուս գումարաց կոպիտ մոտավորությամբ հաշվենք, թու իսչեա  
վորպեսզի կոպիտ մոտավորությամբ հաշվենք, թու իսչեա  
ջերմություն ե հարկավոր 1 գրամ ջուրը գոլորշի դարձնելու  
համար, կարելի յէ այսպիսի փորձ անել: Սրվակի մեջ ա-  
ծենք 500 գրամ ջուր և չափենք նրա բարեխառնությունը:  
Դիցուք այդ բարեխառնությունն ե 20°C. սրվակը դնենք կը-  
րակին և հետեւնք, թե ինչքան ժամանակ ե անցնում մինչև  
փոր ջուրն սկսում ե յեռալ: Դրանից հետո սրվակը կրակին թող-  
նենք ելի ճիշտ նույնքան ժամանակ, այնուհետև կրակից վեր-  
ցնելով՝ կշռենք նրա մեջ մնացած ջուրը. դիցուք ստացանք  
420 գր., այսինքն պարզվեց, վոր յեռան ընթացքում գոլորշի յէ  
դարձել 80 գր. ջուր: Այն ժամանակ, յենթաղը ելով՝ վոր ամեն  
մի վայրկյանում կրակից ջրին անցած ջերմության քանակը  
մոտավորապես նույնն ե, այսպիսի հաշիվ ենք անում: 100°C  
բարեխառնության 80 գր. ջուրը նույն բարեխառնության գու-  
լորշի դարձնելու համար նույնքան ջերմությունն հարկավորվեց,  
վորքան հարկավոր եր 500 գր. ջուրը 80 աստիճան ( $20^{\circ}\text{C}$ -ից  
մինչև 100°C) տաքացնելու համար:

Այսակից կարող ենք հետևյալ յեզրակացության հանգել.  $100^{\circ}\text{C}$ -ի 1 գրամ ջուրը  $100^{\circ}\text{C}$ -ի գոլորշի դա ձեռնու համար հարկավոր է մոտավորապես այնքան ջեմորյուն, վորքան հարկավոր է 500 գրամ ջուրը Ցելսիուսի 1 աստիճան տաքացնելու համար:

**116. ԳՈԼՈՐՇՈՒ ԽՏԱՑՈՒՄԸ.**—Յեթե յեռացող ջրի գոլորշների մեջ մի մետաղյա սառը թիթեղ պահենք, ապա այդ թիթեղը շատ շուտով կը ծածկվի ջրի մանր կաթիլներով: Գոլորշին, գիպչելով թիթեղին՝ ցրտանում եւ կ խտանում թիթեղի մակերեսութիւն, նորից ջուրը դառնալով: Յեթե ջուրը յեռացնենք բերանը փակած սրվակում, վորի խցանի միջով անցնում եւ կ խողովակը (նկ. 79), ապա գոլորշին դուրս կը դա այդ խողովակով: Յեթե այս խողովակը շրջապատենք ցուրտ ջուր պարունակող ավելի լայն Տ խողովակով, ապա գոլորշին այդտեղ կը խտանա կ խողովակից դուրս կը հոսի իբրև ջուր: Այս ջրի բարեխտանությունը կը լինի մոտ  $100^{\circ}$ . իսկ Տ խողովակում ջուրը շուտով խիստ կը տաքանա. այս ապացուցում եւ, վոր գոլորշին ջուր դառնալիս մեծ քանակությամբ ջերմորյուն եւ արձակում:



նկ. 79.  
Գոլորշին խտանալով ջուր եւ տալիս.

նկ. 80. Ինչքան տաքություն եւ արձակում խտացող գոլորշին:

Վորպեսզի մոտավորապես չափենք, թե գոլորշին խտանալիս ինչքան ջերմություն եւ արձակում, կարող ենք այսպի-

սի վորձ անել: Բ սրվակում (նկ. 80) առաջացող գոլորշին է խողովակով կը մոցնենք մի բաժակի մեջ, վորը պարունակում է  $20^{\circ}\text{C}$ -ի 500 գր. ջուր: Այսակա գոլորշին կը խտանա, իսկ ջուրը կը մոցնենի նրա արձակած ջերմությունը. վորոշ ժամանակից հետո բաժակի ջուրը տաքացած կլինի մինչև  $100^{\circ}\text{C}$ , այսինքն մինչև յեռման կետը: Այդ մուտքայից գոլորշին կը դադարի հեղուկանալուց և բաժակի ջրից կը բարձրանա ողի մեջ: Հենց այդ ժամանակ դադարեցնելով գոլորշը մուտքը՝ կը կշռենք բաժակի ջուրը: Կը պարզվի, վոր ջրի կշիռն ավելացել է մոտ 80 գրամով: Ուրեմն 80 գրամ գոլորշին ջուր դարձավ և այդ ժամանակ այնքան ջերմություն արձակեց, վոր 500 գրամ ջուրը 80° տաքացավ ( $20^{\circ}\text{C}$ -ից մինչև  $100^{\circ}\text{C}$ ): Ջերմորյան այս հանկը նույն է, ինչ վոր հարկավորվեց 80 գրամ ջուրը զորոշի դարձնելու համար:

Հեղուկի գույրությանու ժամանակ կլանված ջերմությունը նորից արձակում է, յերբ գոլորշին հեղուկանում է:

Յերբ ջուրը գոլորշի յեւ դառնում, նրա մեջ խտանված զանազան նյութերը, վորոնք չեն գոլորշանում, չեն կարողանում գոլորշիների հետ բարձրանալ: Այս պատճառով գոլորշացնելու նորից հեղուկացնելու միջոցով կարելի յեւ ջուրը խառնուրդ ներից զտել: Չուրն այսպես զտելու յեղանակը կոչվում է բաներից կամ դեսիլացիա: 79-րդ նկարի գործիքը կարող է նկատվել վորպես մողել բուրանորի կամ դեսիլատորի, վորի միջոցով ջուրը զտում են խոշոր չափերով:

**117. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ՄԻԱՎՈՐԸ.**—Վերը նկարած վորձ փորձերի արդյունքները մենք չենք կարողանում հարցրած վորությամբ հաշվել վորովհետև մինչև այժմ գեռնա չենք կավոր ճշտությամբ հաշվել այն միավորը, վորի միջոցով կարող լինելինք ջերմության քանակները (ջերմաքանակները) չափել: Զերմաշափով չափում ենք բարեխտանությունը. բայց ամեն վոր հասկանում է, վոր 10 բաժակ ջուրը մինչև յեռման տաքացնելու համար ավելի մեծ քանակով ջերմություն է հարկավար, քան մի բաժակը մինչև նույն աստիճան տաքացնելու համար: Հետևաբար, բարեխտանությունը և ջերմության քանակը միևնույն

բանը չեն, ուստի և ջերմության քանակը՝ միայն ջերմաչափի միջոցով չափել չի լինի:

Նախընթաց հողվածներում նկարագրած փորձերից յերեւում ե, վոր շատ հարմար ե իբրև ջերմաքանակի միավոր ընդունել այն ջերմաքանակը, վոր գործադրվում ե մեկ գրամ ջուրը 1 աստիճան տաքացնելու համար։ Հենց այդ ջերմաքանակն ել ընդունվում ե վորպես միավոր և կոչվում ե փոքր կայութակամ-կայութիս։

Փոքր կալորիան այն ջերմաբանակն է, զոր հարկավոր և 1 գրամ ջուրը Յելսիուսի 1 աստիճան տափացնելու համար:

Տեխնիկական, յերբեմն նաև գիտական չափումների համար գործածում են ջերմաքանակի ավելի խոշոր միավոր, վոր կոչվում է մեծ կալորիա կամ ֆիզոքանչ-խոտը:

Մեծ կալորիան այն ջերմաքանակն է, զոր հարկավոր և 1 ժիշտամբ ջուրը C-ի 1 աստիճան տաքասինու համար:

**Մեծ կալորիան հավասար է 1000 փոքր խորոշական:**

**118. ԶՐԻ ԳՈԼՈՐՇԱՅՄԱՆ ԹՎՔՈՒՆ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ. —**  
Զրի գոլորշայման բախուն ջերմություն կոչվում ե այն ջերմաքանակը, վոր անհրաժեշտ ե յեռման ասիբնանի մեկ գրամ զուրը գոլորշի դարձնելու համար։ Վերը § 115-ի որինակում աեսանք, վոր 1 գրամ ջուրը գոլորշացնելու համար անհրաժեշտ ե մոտավորապես նույնքան ջերմություն, վորքան և 500 գրամ ջուրը 1 աստիճան տաքացնելու համար։ Հետևաբար, նըկարագրած փորձից յերկում ե, վոր գոլորշացման թաքուն ջերմությունը հավասար է 500 փորք կատարեալի։

Ավելի ճիշտ փորձերը փոքր ենչ ավելի մեծ թիվ են տալիս:

ԶԵՐ գոլուրացման բախուն ջերմուքյունը C-ի 100°-ում հավասար է 537 ֆուն կալորիֆաների:

Այժմ պարզ ե, թե ինչու ջուրը փակ ամանում ավելի շուտ յեռում, քան բաց ամանում։ Գոլորշի դառնալով՝ ջուրն ահաղին ջերմաքանակ ե կանում։ Բաց ամանից գոլորշին հեռանում ե, ուստի և ամանը շատ ջերմություն ե կորցնում։ Իսկ փակ ամանում գոլորշին մնում ե, ուստի և ջերմությունը ինային միայն այս բավական չե լիովին պարզաբանելու համար այն, զոր տեղի յե ունենում ջուրը լեռաց-

Նելիս. զըս համար դեռ պետք ե հետևենք, թե մինչև յեռակն ինչ ե կատարվում ջրի հետ:

119. ՅՆԴՈՒՄ (ԴԱՆԴԱՂ ԳՈԼՈՐԾԱՑՈՒՄ).— Յեթե բաց ափսեյի մեջ ջուրը տաք սենյակում թողնենք մի քանի ժամանակից հետո կը ցածրաքի: Յերբ ցանկանում են լվացքը չորացնել, փռում են բակում կամ տաք սենյակում, և մի քանի ժամանակից հետո չորանում ե, այսինքն ջուրը նրանից հեռանում ե, ցնդում ե: Ըսդհանրապես գիտենք, վոր ջուրը կարող ե գործը գառնալ վոչ միայն յեռման ժամանակ, այլ ամեն բարեխառնության մեջ:

Առանց ջրի չեն կարող ապրել վոչ բույսերը, և վոչ ել  
կենդանիները, բազմաթիվ լնդարձակ տարածություններ ան-  
բնակելի կը լինելին, յեթե այսուեղ անձրեներ չը գային։ Անձ-  
րեներն այս ջրից են կազմվում, վոր գոլորշանում ե ովկիանոս-  
րի, լճերի, գետերի և խոնավ գետնի մակերևույթից։ Գոլոր-  
շացման նպաստում ե արեգակը ջուրը տաքացնելով։ Առաջա-  
ցող գոլորշիները ջրի մակերևույթից բարձրանալով՝ քամուց  
քշվում են զեպի զանազան կողմեր։ Յեթե ողում տարվող գո-  
լորշիները վորեե պատճառով բավականաչափ ցրտանում են,  
ապա խտանալով առաջացնում են սմայերը, վորոնք կազմված  
են ջրի մանրագույն կաթիներից կամ սառույցի մանրիկ կը-  
տորներից։ Յեթե այդ կաթիները կամ կտորները վորեե պատ-  
ճառով ավելի խոշորանում ու ծանրանում են, ապա թափվում են  
իրեն անձրե, ձյուն կամ կարկուտ։ Անձրեները պահպանում են զե-  
տերի հոսանքը, վորոնք շարժման մեջ են զնում ջրաղացները.  
ուրեմն գոլորշացումը ջուր ե մասակարարում վոչ միայն բնու-  
թյան կյանքը պահպանելու, այլ և մարդու աշխատանքին ող-  
նելու համար։

120. ՅՐՏԱՅՈՒՄ ԳՈԼՈՐՇԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ. — ՅԵԹԵ ՃԵԿՔ-  
ՆԵՐԴ ՋՐՈՎ ԹՐՉԵՔ և ԹՊՈՂՆԵՔ, ՎՈՐ ԽՆՔՆ ԻՐԵՆ ՀՈՐԱՆԱ, ԿԵՐ-  
ՊԱՔ, ՎՈՐ ՋՈւԾԵ ԳՈԼՈՐՇԱՅՄԱԼԻՄ ՃԵԿՔՆԵՐԴ ՊՈՎԱՆՈՒՄ Ե: ՅԵԹԵ ՃԵԿՔ-  
ՆԵՐԴ ՎՈՀ ԹԵ ՋՐՈՎ ԹՐՉԵՔ, այլ ՍՊԻՐՈՇՈՎ ԿԱԱ ՃՃՄԲԵԹԵՐՈՎ, ՊՈ-  
ՎԱՋՈՒՄԸ շատ ավելի զգալի կը լինի, ՎՈՐՈՎԻԵՏԻ այդ հեղուկ-

Ները ջրից անհամեմատ ավելի արագ են գոլորշանում։ Յեթե  
տաք որը ջրով լի կույան թաց շորով փաթաթենք և դռըսը  
դնենք, ջուրն զգալիորեն կը ցըտանա, մանավանդ յեթե մի թե-  
թև գեփյուռ ել լինի։ Յեթե իրար կողքի յերկու ջերմաչափ կա-  
խենք և նրանցից մեկի զնդիկը թաց շորով փաթաթենք, ապա  
քանի գեռ շորը չի չորացել այդ ջերմաչափն ավելի ցած բա-  
րեխանություն ցույց կը տա, քան մոտար:

Յերբ թաց սպիտակեղենը հարկավոր և շտապ չորացներ կամ արեւում ենք փռում կամ վառարանի մոտ: Այսպես ենք վարվում, վորովհեակ գիտենք, վոր հեղուկի գոլորշացման վրա ջերմություն և ծախսվում, ուստի և ջերմության առատ հոսանքը պետք և գոլորշացման նպաստի:

Բնդիակառակն, յեթե վորեե յեղանակով, բայց վոչ տաքաց-  
նելով, գորոշացումն արագացնում էնք, տեղի յեղանենում ցըր-  
տացում, վորովհետեւ գոլորշացման ժամանակ միշտ ջերմություն  
ե կլանվում: Այս յերեսույթը տեխնիկայում գործադրվում ե ար-  
վեստական սառույց պատրաստելիս, այլ և ցուրտ պահեստներ  
կառուցանելիս: Այս գեղքում ողտպում են այն ցրտացումից,  
վոր սաացփում և հեղուկացրած գագերի արագ գոլորշացման  
ժամանակ. դրա համար ամմոնյակը կամ ածխածնի դիօքսիդը հե-  
ղուկացնում են ուժեղ մղիչ սղանների միջոցով, վորոնք շարժ-  
ման մեջ են դրվում շոգեմեքենայով: Հեղուկացրած գազը  
մացնում են խողովակների մի սիստեմի մեջ, վորոնցից ողը  
նախագես հեռացված ե: Այդ խողովակները ծնկաձև կորու-  
թյուններով անցնում են աղաջուր ածած մի մեծ ավագանի  
միջով: Հեղուկացրած գազը մտնելով խողովակների մեջ արագ  
գոլորշանում է և այդ ժամանակ ջերմություն և խլում աղա-  
ջրից, վոր ցրտանում եմ ինչև  $0^{\circ}$ : Աղաջուրն ինքն այդ ժամա-  
նակ չի սառչում, վորովհետեւ նրա սառուցման կետը  $0^{\circ}$ -ից  
բարձրական ցած ե. բայց մաքուր ջուրն այդ բարեխառնության  
մեջ արգեն կարող է սառչել: Մաքուր ջուրը բարակ թիթեղից  
շինված ամաններով դնում են ցուրտ աղաջրի մեջ և այնքան  
պահում, մինչև վոր ջուրը, բավական ջերմություն տալով ա-  
ղաջրին՝ սառույց և դառնում:

Ինչպես տեսնում ենք, գոլորշացման ժամանակ ուժեղ ցըրտացում առաջացավ. այդ ցույց է տալիս, վոր հեղուկը զուրացման մոմենտին մեծ բանակով չերմուքյան է կլանում:

121. ՀԱԳԵՑՆՈՂ ԳՈԼՈՐՇԻՆԵԲ. —Միգապատ որը վոչվոք  
լվացք չի փոխ չորացնելու համար։ Մեզը, ինչպես անձրևա-  
բեր ամպը, բաղկացած ե ջրի շատ մանր կաթիներից, վորոնք  
ողի մեջ լողալով, կախված են մոռւմ։ Այդ կաթիների ներկա-  
յությունն ողում ցույց ե տալիս, վոր գոլորշացում տեղի չու-  
նի, ուստի և այդպիսի ողում լվացքը չի չորանում։ Մթնոլոր-  
տային ողն այդ պայմաններում պարունակում ե գոլորշու այն  
մեծագույն քանակը, վոր հսարավոր ե, ուստի նոր գոլորշի  
այլևս չի կարող մտնել ողի մեջ։

**122.** ՅՈՂԻ ԿԵՏԸ.—ՅԵԹԵ տաք ամպամած որը մի վոչ շատ ցուրտ առարկա, որինակ՝ ջրով լի ջրամանը, վորի բարեխառնությունն ասենք  $10^{\circ}$  է, ներս տանենք սենյակը, վորտեղ բարեխառնությունը դիցուք  $25^{\circ}$  է, ջրամանի վրա կը նկատենք ջրի ժանրիկ կաթիների մի շերտ: Այս յերկութիւն մասին սովորաբ ասում են, վոր ջրամանը «քրանեց», բայց պարզ է,

վոր ջրի կաթիները վոչ ջրամանի ապակուց են ստացվում և վոչ ել նրա միջի ջրից։ Այդ կաթիները կազմվում են ջրի այն գոլորշիներից, վորոնք գտնվելով շրջապատող ողի մեջ՝ խտանում են։ Բայց նախքան խտանալը գոլորշիները պետք է անցնեն հագեցման վիճակով։ Ուրեմն յերբ ողը խոնավ է, այսինքն ջրի շատ գոլորշիներ ե պարունակում, այդ գոլորշիները համեմատաբար բարձր բարեխառնության մեջ են հագեցնող դառնում (մեր որինակում  $10^0$ -ից բարձր բարեխառնության մեջ)։

Ծողեջնուույց սենյակներում ողը ձմեռը հաճախ շատ չոր ե լինում։ Թաց սպիտակեղենն այդպիսի սենյակներում շատ արագ ե չորանում, վորովհետև ջրի գոլորշացումը շատ արագ ե կատարվում։ Ողի այդ չորությունը մարդկանց վրա նրանով ե արտահայտվում, վոր ինչպես ասում են, «կոկորդը չորանում է»։ Այդպիսի սենյակում թեկուղ  $25^0$  բարեխառնության մեջ նույնիսկ սառցաջուր (այսինքն  $0^0$ -ի ջուր) պարունակող ջրամանը ցողով չի ծածկվում։ Այդպիսի սենյակներում միայն խիստ ուժեղ սառնամանիքների ժամանակ լուսամուտների առակիների վրա «սառցաճամուկներ» են առաջանում։ Ուրեմն յերբ ողի մեջ ջրալին գոլորշիները քիչ են, բարեխառնությունը շատ պետք ե ցածանա, վորպեսզի այդ գոլորշիները հագեցման վիճակին հասնեն և խտանալ սկսեն։

Այսպիսով տեսնում ենք, վոր տարբեր որեր կարող են տարբեր քանակով ջրալին գոլորշիներ լինել ողում, և վորուան ցոլորշիներ կան ողում, այնքան ավելի բարձր է այն բարեխառնությունը, վորի ժամանակ նրանք ողը հագեցնում են յեվ սկսում խանալ։ Ուրեմն այն բարեխառնության միջոցով, վորի ժամանակ սկսվում ե գոլորշիների խտացումը, կարելի յեւ դատել ողում յեղած գոլորշիների քանակի մասին։ Այս բարեխառնությունը կոչվում ե ցողի կես, վորովհետև ողը հագեցնող ջրալին գոլորշիների խտացման ամենասովորական յերեփույթը «ցողի իջնելն» ե։

Ցողի կես կոչվում ե այն բարեխառնությունը, վորի ժամանակ չի գոլորշիները հագեցնող են զառնում յեվ սկսում խանալ։


123. ՀԱԳԵՑՆՈՂ ԳՈԼՈՇԻՆԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Վերցնենք յերկու բարոմետրական խողովակներ և մի կորացրած խողովակի միջոցով նրանցից մեկի մեջ մի քիչ ջուր մտցնենք, բայց այնպես, վոր ոդ չմտնի։ Զուրը կը բարձրանա սնդիկի յերեսը և այնտեղ մասամբ կը գոլորշիանա, մինչև վոր խողովակի այն ծայրը, վոր ջրի վերևն ե գանգում, կը լցվի հագեցնող գոլորշով։ Այդ ժամանակի սնդիկի սյունակը փոքր ինչ կիշնի, վոր կարելի յեւ մյուս բարոմետրի հետ համեմատելով նկատել։ Այս նրանից ե առաջանում, վոր հագեցնող գոլորշին սննդիկի սյունակի վրա նեռում է զործում։ Այդ ճնշումը չափվում է և ն' խողովակների սնդկային սյունակների ըտարբերությամբ (նկ. 81)։

ՅԵՅՔ Ն' խողովակը բարձրացնենք և իջեցնենք այնքան, վորքան այդ թույլ ե տալիս ամանում յեղած սնդիկի խորությունը, խողովակի վերեկի մասում գոլորշու ծավալը յերբեմն կը մեծանա, յերբեմն կը պակասի. բայց և և ն' խողովակներում սնդիկի մակարդակների տարբերությունը անփոփոխ կը մնա, քանի դեռ անփոփոխ ե բարեխառնությունը։ Այսպիսով, յեմք հագեցնող գոլորշին իր հեղուկի հետ շփման մեջ ե, ապա հաստատուն բարեխառնությունն դեպքում նրա նեռումը չի փոխվում ծավալի փոփոխությունների ժամանակ։ Յերբ խողովակի վերեկի մասում ծավալը մեծանում է, հեղուկի մի վորոշ քանակ գոլորշի յեւ դառնում, իսկ յերբ ծավալը փոքրանում է, գոլորշու մի վորոշ քանակ հեղուկի դառնում, իսկ ճնշումը շարունակ անփոփոխ է մնում։

Յերբ խողովակը տաքացնում ենք, հեղուկի շերտն սկսում է փոքրանալ, և սնդիկի մակարդակը իջնում է (տ. և ն' խողովակը 81-րդ նկ.)։

Այս ցույց ե տալիս, վոր յերբ բարեխառնությունը բարձրանում է, հագեցնող գոլորշու նեռումը մեծանում է։

Նույնանման ուրիշ փորձերն ել նույն արդյունքն են տալիս։ Այսպիսով հետևյալ յեղակացություններին ենք հանգում. հեղուկն այնքան ժամանակ ե գոլորշանում, մինչեւ վոր նրա



նկ. 81

վերեվ գտնվող տարածությունը գոլորոշ հազենա, իր հեղուկի հետ  
սփոս գոլորշին փակ ամանի մեջ ուժուով հազեցնող և դառնում:

Փակ ամանի մեջ գտնվող գոլորշին ամանի պատերի վրա նեռում  
ե գործում:

Փակ ամանի մեջ իր հեղուկի հետ սփոս հազեցնող գոլորոշ  
նեռումն անում և բարեխառնության բարձրացմամբ յնք կախված ե  
միան բարեխառնությունից:

Այժմ մենք կարող ենք լրիվ պատասխան տալ այն հար-  
ցին, թե ինչու ջուրը փակ ամանում ավելի շուտ ե յեռում  
քան բաց ամանում: Փակ ամանը և ջուր ե պարունակում, և  
ջրային գոլորշի: Դրի մակերեսույթից գոլորշացումը շարունակ-  
վում է այնան ժամանակ, մինչեւ վոր գոլորշին հազեցնող  
ե դառնում: Այնունեսեվ գոլորշացումը դադարում է: Ցեթե  
ամանը բաց ե, ապա գոլորշացումը միայն այն ժամանակ կը  
դադարեր, յերբ ամբողջ սենյակը հազեցած լիներ ջրի գոլորշ-  
վներով: Գոլորշացման ժամանակ ջերմություն ե կլանվում,  
ուստի քանի դեռ գոլորշացում ե տեղի ունենում, ջուրը ջեր-  
մություն ե կորցնում: Վորպեսզի այսպիսի կորուստ չը լինի,  
ամանը խուփով ծածկում ենք, վորի հետևանքով գոլորշացումը  
դադարում ե, և ջուրն ավելի արագ ե տաքանում:

124. ՀԱԳԵՑՆՈՂ ԶՐԱՅԻՆ ԳՈԼՈՐՇԻՆԵՐԻ ՃՆՇՈՒԽԸ ԶԱ-  
ՆԱԳԱՆՔ ԲՈՐԵԽԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒԽԸ.—Մենք գիտենք, վոր հա-  
զեցնող գոլորշվների ճնշումը բարեխառնության փոփոխման հետ  
միասին փոփոխվում ե: Սառույգ փորձերով, վորոնք նման են նա-  
խրնթաց հոդվածում նկարագրվածներին, կարելի յե չափ ել գոլոր-  
շվների ճնշումը զանազան բարեխառնություններում: Սառոր  
բերված ե ջրի հազեցնող գոլորշվների ճնշումների համառոտ  
աղյուսակը: Այդ աղյուսակի մեջ բարեխառնությունները տված  
են Ցելսիուսի աստիճաններով, իսկ ճնշումները մնագիկի սյու-  
նակների բարձրություններով, վորոնք արտահայտված են սան-  
տիմեարներով:

Բարեխառն.	Ճնշում	Բարեխառն.	Ճնշում
0°	0,5 սմ.	100°	76,0 սմ.
20°	1,7 »	120°	149,1 »
40°	5,5 »	140°	271,8 »
60°	14,9 »	160°	465,2 »
80°	35,5 »	180°	754,6 »
90°	52,5 »	200°	1169,0 »

125. ՅԵՌՄԱՆ ԿԵՑ.— Վերը զետեղված աղյուսակից տես-  
նում ենք, վոր 100°-ում, այսինքն ջրի յեռման աստիճանում,  
հազեցնող ջրային գոլորշվների ճնշումը 76 սմ. ե, այսինքն  
հավասար ե մինուլորտի նորմալ ճնշման: Ի՞նչ կապ կա յեռման  
կետի և մինուլորտային ճնշման մեջ: Գուցե կարգացած կամ  
լած լինեք, վոր բարձր լեռների վրա ձու յեփել չի լինում,  
վորովհետև այնակեղ յեռացող ջուրը բավականաշափ տաք չե:  
Վորովհետև կարգացած ջուրը բավականաշափ տաք չե:  
Հետեւյալ վորձի ողնությամբ մենք կարող ենք հասկանալ այդ  
հետաքրքրական յերեսութը:


Ոգտենք լաբորատորական յեռարանից, վորի կողմու-  
թյունը գժվար չե նկարի միջոցով հասկանալ (նկ. 82): Այդ  
գործիքը բաղկացած է մետաղյա մի ամանից, վոր ունի մի  
ջրաչափ խողովակ (նկարում աջբ) և օ անցքը, վորով գոլորշն  
կարող ե գուրս գալ: Վերեկց մի խողովակ ե շինված, վորի մեջ  
կարող ե գուրս գալ: Վերեկց մի խողովակ ե շինված, վորի մեջ  
գնում են ջերմաչափը, այդ խողովակի հետ միացրած ե մոդիկի  
գործը մասնամեարը, վոր ցուց ե տալիս գոլորշվների ճնշումը գոր-  
բաց մասնամեարը, վոր ցուց ե տալիս գոլորշվների ճնշումը գոր-  
բաց մասնամեարը: Օ անցքը խցանով այնպես փակենք, վոր ձն-  
ծիքի ներսում: Օ անցքը խցանով այնպես փակենք, վոր ձն-  
շումը ներսում կարողանա մեծանալ, բայց միաժամանակ նաև  
շումը ներսում կարողանա մասնալ, բայց դուրս գալ: Յեռացնենք չուրը և  
գոլորշու մի մասը կարողանա դուրս գալ: Յեռացնենք ջերմա-  
կանենք ջերմաչափի ու մասնամեարի ցուցմանքներին: Մենք  
կը տեսնենք, վոր յերբ բարեխառնությունը 0-ի 1°-ով բարձ-  
րաց արեալում մոտ 3 սանիմետր կամի: Այսպիսով յերբ նե-  
րանա, նընումը մոտ 3 սանիմետր ավելանում ե, նեա յեռման  
դուկի մակերեսույթի վեա նեումն ավելանում ե, նեա յեռման  
աստիճանն ել ե բարձրական հաղարականին, յերբ ճնշումը պա-  
տահանակ է, յեռման կետն իջնում ե: Բարձր սարերի վրա մըթ-  
կասում ե, յեռման կետն իջնում ե: Բարձր սարերի վրա մըթ-  
կասում ե, յեռման կետն իջնում ե: Վորովհետև կարգացած կամ  
լած լինեք, վոր բարձր լեռների վրա ձու յեփել չի լինում:

Զուրն այն ժամանակ ե յեռում, յերբ նեա հազեցնող գո-  
լորշիների նեումը հավասարվում է շրջապատող մթնոլորտա-  
յին ողի նեում: Այս յերեսութի պատճառը գժվար չե պար-  
զել: Ինչպես գիտենք, յեռումը դանդաղ գոլորշացումից նրանով  
ե զանազան վում: Վոր յեռման ժամանակ վոչ միայն հեղուկի  
մակերեսութի վրա յեն գոլորշվներ առուջանում, այլ նաև ներսը:

Քանի դեռ շրջապատող ողի ձնշումն ավելի մեծ է, քան առաջացող գոլորշու պղպջակների մեջ տիրող ձնշումը, այս պղպջակները չեն կարող ընդարձակվել և յերես գուրս գալ. բայց յերբ պղպջակների մեջ ձնշումն այնքան մեծանում է, վոր կարող և շրջապատող ձնշմանը հաղթել, պղպջակներն ընդարձակվելով յերես են գուրս գալիս, այսինքն տեղի յեռ ունենում յեռում: Յեթե շրջապատող ձնշումը հագեցնող գոլորշիների ձնշումից փոքր է, հեղուկը կարող է միանգամից ամբողջովին գոլորշի դառնալ: Այսպիսի յերեռոյթ տեղի յեռ ունենում անբավարար առություն ունեցող շողեկաթսայի պայթման ժամանակ: Եյսպես ուրեմն, յեռման կետն այն բարեխառնությունն է, վորի համար հազեցնող գոլորշիների ներումը հավասար է շրջապատող ներման:

### 126. Ո՞Ի ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱԳՈՒ-

ԹՅՈՒՆԸ.—Վերադառնանք ողի խոնավության հարցին: Դիցուք սենյակի բարեխառնությունը  $20^{\circ}$  է: Վորքան կլիներ ջրի գոլորշիների ճնշումը, յեթե նրանք ողը հազեցնեյին: § 124-ում զետեղած աղյուսակից գտնում ենք, վոր այդ ճնշումը հավասար է 1,7 սմ-ի: Այժմ յենթադրենք, վոր մեր սենյակի ողի համար ցողի կետը հավասար է  $0^{\circ}$ -ի, այսինքն ողի մեջ յեղած գոլորշիները կարող են ողը հազեցնել միայն  $0^{\circ}$ -ում. այս բարեխառնության մեջ հազեցնող գոլորշիների ճնշումը հավասար է 0,5 սմ-ի: Ուրեմն, սենյակի գոլորշիների ճնշումը նաև նախքան ցրացնելը հավասար է 0,5 սմ-ի, իսկ յեթե գոլորշիներն ողը հազեցնեյին, նրանց ճնշումը հավասար կը լիներ 1,7 սմ-ի: Գոլորշիների իրական նույնանությունը այն նույնան, վոր կտացվեր, յեթե նրանք ողը հազեցնեյին, կոչվում է ողի հարաբե-



44. 82

բական խոնավությունը։ Մեր որինակում հարաբերական խոնավությունը հավասար է

$$\frac{0,5}{1,7} = 0,29 \text{ lund } 29\%.$$

Այս նշանակում ե՞ ողը պարունակում է գոլորչիների այն քանակի 0,29 մասը, վոր պահանջվում  $20^{\circ}$ -ի ողը հազեցնելու համար:

Բնակարաններում և դպրոցական շենքերում հարաբերական խոնավությունը չպետք է  $50^{\circ}/_0$ -ից պակաս լինի: Դրան գիտելի հարաբերական խոնավությունը սովորաբար  $50^{\circ}/_0$ -ից բարձր է լինում: Արդի հասարակական շենքերում ջեռուցման կառուցումների ճետ միասին յերբեմն հատուկ հարմարույթներ են շինում ողի խոնավությունը կանոնավորելու համար:

Հարաբերական խոնավուրյունն արտահայտվում է սր զատակով, վորի համարից հավասար է ցողի կեսի ժամանակ ողը հագեցնող գոլորշիների ննօման, իսկ հայտարք՝ ողի բարեխառնուրյան ժամանակ ողը հագեցնող գոլորշիների ննօման:

127. ՍԱՐԳԵԼԸ.—Պաղպաղակ պատրաստելու համար սյու-

թը լցնում են բարակ թիթեղից շինած ամանի մեջ, վորը սրբ-  
ջապատում են սառույցի և աղի, կամ ձյունի և աղի, խառնուրդով:  
Աղի ավելացնելուց սառույցը հալվում է, իսկ պահպաղակն ա-  
մանի ներսը ցրտանում է և պնդում: Այս յերեսույթը բացա-  
տրելու համար նախ հետեւյալ փորձն անենք: Բաժակի մեջ մի  
քիչ սառույց դնենք և ջերմաչափն իջեցնելով սառույցի մեջ  
բաժակը հետզետե տաքացնենք: Սառույցը հալվելիս ջերմա-  
չափը ցույց կըտա 0°: Վորքան ավելի ջերմություն հաղորդվի  
բաժակին, այնքան ավելի շատ սառույց ջուր կը գառնա, բայց  
թե սառույցի և թե առաջացող ջրի բարեխառնությունը շա-  
րունակ 0° կը լինի: Այդտեղից յերեսում է, վոր սառույցը ջուր  
դառնալիս ջերմություն է կլանում, ինչպես և ջուրը գոլորշի  
գառնալիս: Ըստհակառակն, 0°-ի ջուրը նույն բարեխառնու-  
թյան սառույց գառնալով ջերմություն է արձակում: Այն ջեր-  
մությունը, վոր արձակում է նեղուկը սառչելիս կամ, ընդ-  
հակառակի, կլանվում է պինդ նյութը հալվելիս, կոչվում է  
հալման բարուն ջերմություն:

128. ԱԱՌՈՒՅՑԻ ՀԱԼՄԱՆ ԹԱՐՅՈՒՆ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ.— Սառույցի հալման ժամանակ կամպող ջերմության քանակը փորոշելու համար այսպիսի փորձ անենք: Դնենք բաժակի մեջ 100 գր. չոր սառույց և վրան լցնենք  $45^{\circ}$ -ի 400 գր. ջուր: Սառույցը ջրի հետ խառնելով սպասենք մինչև ամբողջ սառույցը հալվի և ապա չափենք բարեխառնությունը. կտացվի մոտ 20°. Այժմ այսպես կըդատներ. 400 գր. ջուրը  $45^{\circ}$ -ից մինչև  $20^{\circ}$ , այսինքն  $25^{\circ}$  ցրտանալով արձակեց  $25 \times 400 = 10000$  փոքր կալորիա: Այս ջերմությունն անցավ սառույցին, փորը նախ հալվեց, ապա իբրև ջուր տաքացավ  $0^{\circ}$ -ից մինչև  $20^{\circ}$ : Սառույցից սառացած ջուրը տաքացնելու համար գործազրվեց  $20 \times 100 = 2000$  փոքր կալորիա. ուրեմն սառույցի հալման վրա գործադրվեց  $10000 - 2000 = 8000$  փոքր կալորիա:

Այս ջերմաքանակը գործազրվեց 100 գր. սառույցը հալելու համար. ուրեմն 1 գր. սառույցը հալելու համար հարկավոր է 80 փոքր կալորիա:

Սառույցի հալման քայլուն ջերմությունը հավասար է 80 փոքր կալորիա:

Պաղպաղակ պատրաստելիս հալվող սառույցի յուրաքանչյուր գրամը կլանում է 80 փոքր կալորիա ջերմություն: Սառույցն այս ջերմությունը խլում է զրջապատող մարմիններից և ամենից ավելի պաղպաղակից: Յերբ ջուրը սառչում է, նրա յուրաքանչյուր գրամն 80 փոքր կալորիա յե արձակում: Այս շատ կարևոր նշանակություն ունի բնության կյանքում, փորով հետև յերբ ծովերը և մեծ ճերբը սառչում են, ջերմության հսկայական քանակներ են արձակվում, փորոնք ողն են մտնում և մեղմում բարեխառնության խիստ անկումները: Բոլոր նյութերը հալվելիս ջերմություն են կլանում, իսկ պնդանալիս ջերմություն արձակում: Տարբեր նյութերի համար հալման թաքուն ջերմությունը տարբեր մեծություններ ունի: Կապարի համար, որինակ՝ հալման ջերմությունը 1 գրամին 5 փոքր կալորիա յե, իսկ արձակի համար՝ 1 գրամին 21 փոքր կալորիա:

129. ՏԵՍԱԿԱՐԱՐ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ. — Միևնույն քանակով ջերմություն և հարկավոր տարբեր նյութերի հավասար

քանակները հավասար թվով աստիճաններ տաքացնելու համար: Քանակին պատասխանելու համար վերցնենք արույրյա 1 քիլոգրամանոց կշռաքարը, դնենք 1 քիլոգրամ ջուր պարունակող ամանի մեջ և տաքացնենք մինչև յեռման կետը: Թե կշռաքարը մեջ ջուրը կը տաքանան մինչև  $100^{\circ}$  Ըստմ կշռաքարը հանենք, ամանը ծածկենք, փորպես գոլորշացում տեղի չունենա, և դիտենք՝ ինչն է ավելի շուտ ցրտանում՝ ջուրը, թե կշռաքարը կշռաքարը ջրից շատ ավելի շուտ կը ցրտանա, փորով քարը: Կշռաքարը ջրից շատ ավելի քիչ ջերմություն հետև արույրը 100°-ում իր մեջ շատ ավելի քիչ ջերմություն է պարունակում, քան ջուրը: Բազմաթիվ այլ ավելի ճիշտ ե պարունակում, քան ջուրը: Վազմաթիվ այլ ավելի ճիշտ փորձեր ցույց են տալիս, վոր տարբեր նյութերի հավասար փորձեր ցույց են տալիս, վոր տարբեր նյութերի հավասար քանակները 1° տաքացնելու համար տարբեր ջերմաքանակներ են հարկավոր:

Կալորի տեսակարար ջերմությունն արտահայտվում է փոքր կալորիաների այն քիվ, զոր աներաժեքություն և այդ նյութի 1 գրամ տեսակարար 1 ասինան տաքացնելու համար:

Տեսակարար ջերմության սահմանումից ուղղակի հետևում է, վոր ջրի տեսակարար ջերմությունը հավասար է 1-ի:

Զանազան նյութերի տեսակարար ջերմությունները կարելի յե փորոշել բազմաթիվ զանազան փորձերով: Վերցնենք, կարելի յե փորոշել բազմաթիվ զանազան փորձերից մեկը: 100 գր. կշռությունակ՝ ամենապարզ յեղանակներից մինչև  $98^{\circ}$  Ըստ մի կառը ալյումինիում, վոր տաքացրած է մինչև  $98^{\circ}$  Ըստ մի կառը ենք  $2^{\circ}$  Ըստ բարեխառնությունն ունեցող 200 գրամ ջրի մեջ, փորից հետո և ջուրը, և ալյումինիումի տեսակարար ջերմություն: Ալյումինիումի տեսակարար ջերմությունը նշանակներ շուրջ այն ժամանակ ալյումինիումի մությունը ջերմաքանակը, յերբ նա ցրտանում է մինչև  $11,5^{\circ}$ , արձակած ջերմաքանակը, յերբ նա ցրտանում է մինչև  $11,5^{\circ}$ , այսպես կարտահայտվի.

Տեսակարար ջերմություն  $\times$  կշռ  $\times$  բարեխառնությունների տարբերություն,  $\epsilon \times 100 \times (98 - 11,5)$ .

Չուրը տաքանալով մինչև  $11,5^{\circ}$ , ստացավ ջերմության մի քանակ, վորը հավասար է

Տեսակարար ջերմություն  $\times$  կշիռ  $\times$  բարեխառնությունների տարբերություն

$$1 \times 200 \times (11,5 - 2).$$

Ալյումինիումի արծակած ջերմաքանակը պետք է հավասար լինի ջրի ստացածին՝

$$c \times 100 \times (98 - 11,5) = 1 \times 200 \times (11,5 - 2).$$

Այս հավասարումից ստանում ենք  $c = 0,219$ . Այս նշանակում է, զոր 1 գրամ ալյումինիումը  $1^{\circ}\text{C}$  տաքացնելու համար հարկավոր  $0,219$  փոքր կալորիա:

Տանը միքանի հանրածանոթ նյութերի տեսակարար ջերմությունների մեծությունները.

ջուր... 1, սառուց... 0,5, ապակի... 0,2, յերկաթ... 0,11, պղինձ... 0,09, արծաթ... 0,06, վոսկի... 0,03:

Ուշագրավ է, զոր ջրի և սառուցի տեսակարար ջերմունակություններն ավելի լին, քան մյուս մարմիններինը: Ջրի հենց այս հատկությունն է զլիսավոր պատճառներից մեկը, զոր ովկիանոսները, ծովերը և մեծ լճերն ազդում են առավինյա վայրերի կլիմայի վրա: Զուրն ահազին քանակով ջերմություն է կանում տաքանալիս և նույնպիսի հսկայական քանակներ ել արծակում ցրտանալիս. զրա հետեանքով ովկիանոսները և լճերն ամառը տաքանում են բավական դանդաղ, ձմեռն ել ցրտանում նույնպես բավական դանդաղ, ուստի առավինյա վայրերում վոչ ամառն է այնպես շոգ, վոչ ել ձմեռն այնպես ցուրտ, ինչպես մայր ցամաքների ներսերում:

### ՈՐԵՆՔՆԵՐ ՅԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Գրեթե բոլոր նյութերը տաքանալիս ընդարձակվում են և ցրտանալիս սեղմվում:

2. Այն յերկույթը, զորի ժամանակ ջերմությունը տաք մարմնից նվազ տաք մարմնին է անցնում շարժվող հեղուկի կամ գազի միջոցով, կոչվում է կոնվեկցիա (ջերմատարություն):

3. Այն յերկույթը, զորի ժամանակ ջերմությունը տաք մարմնից նվազ տաք մարմնին է անցնում անշարժ մնացող նյութի միջով, կոչվում է ջերմահաղորդություն:

4. Ջերմաչափի հասատուուն կետեր կոչվում են հալվող սառուցի բարեխառնությունը և յեռացող ջրի բարեխառնությունը նորմալ մթնոլորտային ճնշման դեպքում:

5. Սառուցի հալման կետը և Ռեռույթը ջերմաչափով և Ցելսիուսի ջերմաչափով նշանակվում է  $0^{\circ}$ : Ջրի յեռման կետը Ռեռույթը ջերմաչափով  $80^{\circ}$  և, իսկ Ցելսիուսի ջերմաչափով  $100^{\circ}$ .

$$0^{\circ}\text{R}=0^{\circ}\text{C}, 80^{\circ}\text{R}=100^{\circ}\text{C}.$$

6. Մինչև  $4^{\circ}\text{C}$  ցրտանալիս ջուրը սեղմվում է, ավելի ցըրտանալիս նա ընդարձակվում է:

7. Տաքացման և ցրտացման յերկույթը ջերմություն ստանալն ու ածակվելն է, զոր տեղի յեռնենում տարբեր բարեխառնություններ ունեցող մարմինների միջև:

8. Ջերմությունը միշտ տաք մարմնից նվազ տաք մարմնին է անցնում:

9. Փոքր կալորիան այն ջերմաքանակն է, զոր հարկավոր և 1 գրամ ջուրը Ցելսիուսի  $1^{\circ}$  տաքացնելու համար:

10. Գոլորշացման թաքուն ջերմությունը հավասար է 537 փոքր կալորիայի յուրաքանչյուր գրամին:

11. Հեղուկն ամեն բարեխառնության մեջ գոլորշանում է:

12. Հեղուկն այնքան ժամանակ է գոլորշանում, մինչև վոր նրա վերեկ տարածությունը նրա գոլորշիններով հագեցնա:

13. Փակ ամառի մեջ իր հեղուկի հետ շփվող գոլորշին շուտով հագեցնող է դառնում:

14. Տվյալ հեղուկի հագեցնող գոլորշու ճնշումն աճում է բարեխառնության բարձրանալով և կախված է միայն բարեխառնությունից:

15. Ցեղամն կետն այն բարեխառնությունն է, զորի դեպքում հագեցնող գոլորշինների ճնշումը հավասար է շրջապատող ճնշման:

16. Ցողի կետ կոչվում է այն բարեխառնությունը, զորի դեպքում ջրի գոլորշինները հագեցնող են դառնում և սկսում խտանալ:

17. Սառուցի հալման թաքուն ջերմությունը հավասար է 80 փոքր կալորիայի յուրաքանչյուր գրամին:

18. Նյութի տեսակաբար ջերմությունն արտահայտվում է փոքր կալորիաների այն թվով, վոր-անհրաժեշտ և այդ նյութի 1 գրամը ջելսիումի 1 աստիճան տաքացնելու համար:

### Հ Ա Բ Ց Ե Բ.

1. Ինչու են զործարանների ծխնելույղները բարձր շինում:
2. Ինչիցն ե, վոր ծուխը վառարանի խողովակում դեպի վեր և բարձրանում:

3. Բնակարանի վառարանն ի՞նչ պատճառներով է յերեմն ծխում:  
4. Խաղալիկ-ողապարիկ այսպես կարելի յի շինել. բարակ թղթից գունդ են պատրաստում, ներքեւից լայն անցք թողնելով. այս անցքի կենդրում նուրբ մետաղաթելի վրա ամրացնում են ծծմբեթերի մեջ թաթախած բամբակը: Յերբ եթերը վառում են, ողապարիկն ուռչում և բարձրանում: Ինչու, ի՞նչ մեծագույն բարձրության կարող և հասնել այդպիսի ողապարիկը:

5. Ինչու են ապուրն եփելիս կաթսայի բերանը ծածկում:  
6. Այրվող փայտերն ինչու են ձարձատում:  
7. Ինչու ողային չեռուցման ժամանակ տաք ողը դեպի սենյակի հատակն են ուղղում և վոչ առաստաղը:

8. Ինչու 77-րդ նկարի ջեռարանում ցուրտ ջուրը բերող խողովակն իջեցնում են մինչև ավազանի ներքերի մասը:

9. Յերկաթի վառարանն ինչու յի ավելի լավ տաքացնում սենյակը, յերբ աջապատված և մի շատկավ, վոր ներքեւից ու վերեւից բաց ե:

10. Ինչու շոգետար խողովակները յերեմն ծածկում են ասրեստով: Յեթե ասրեստ չկա, ի՞նչն ավելի լավ կարող է փոխարինել՝ յերկաթի թիթեղը, թե թաղիքը:

11. Ինչու հարդի տակ գտնվող ձյունը գարնանը յերկար ժամանակ չի հարփում:

12. Յերկար փորձանոթի մեջ ցուրտ ջուր ածեք և մի կտոր սառույց զցեք միջը, սառույցը նախապես մետաղաթելով փաթաթելով, վորպեսզի ընկղմվի, այնուհետև փորձանոթը բոցի վրա տաքացրեք վերեւից, այսինքն ջրի մակերեսութիւն մոտ: Այս գեղաքում սառույցը շատ դանդաղ է հալվում, նույնիսկ յերբ ջուրը վերեւ յեռում է: Ինչու:

13. Զուր պարունակող փորձանոթի մեջ մի կտոր սառույց զըցեք, թողեք սառույցը ջրի յերեսին լողա և փորձանոթը տակից տաքացրեք: Այս պայմաններում ավելի արագ կը հարվի սառույցը, թե նախորդ խնդրի պայմաններում: Ինչու:

14. Ի՞նչ պակասություններ ունի Գալլեյի ջերմաչափը (նկ. 78):

15. Հեռագրաթելերը սյուների միջև ամառն ու ձմեռը միենալոյն չափով են կախ ընկնում:

16. Յերբ թաղիքով փաթաթում ենք տաք ջրով լի շիշը, ջուրը յերկար ժամանակ տաք և մնում, իսկ յերբ ցուրտ ջրով լի շիշն ենք փաթաթում, ջուրը յերկար ժամանակ ցուրտ և մնում: Ինչու:

17. Լճի հատակում ձմեռն ի՞նչ բարեխառնություն պետք է լինի:

18. Ինչու լճերը մինչև հատակը չեն սառչում:

19. Ինչու ջրանցքի խողովակները արաքում են, յերբ ջուրը նըրանց մեջ սառչում է:

20. Ի՞նչպես են կազմվում պաղլորակները:

21. Քարի ճեղքերում ջրի հալվելը և սառչելը հետզհետե քայլքայում ե քարը: Ինչու:

22. Ինչու ջուրը տաքացնելիս զոլորշու պղպջակները նախ ամառի հատակումն են ստացվում:

23. Ինչու յեն զոլորշու պղպջակները (22-րդ հարց) վեր բարձրանում:

24. Ինչու զոլորշու պղպջակները (22-րդ հարց) սկզբում անհետանում են նախքան ջրի յերեսին հասնելը և միայն հետազյում սկսում են ջրից զուրս ցատկել:

25. Զուրը բոցի վրա յեռում է. բոցը հանգցնում ենք, իսկույն դադարում և յեռալ: Ինչու:

26. Ինչու զոլորշու պատճառած այրվածքն ավելի ուժեղ և լինում և ավելի և ցավեցնում, քան նույն բարեխառնության ջրինը:

27. Զրվեմի զուրն ընդունակ և աշխատանք կատարելու: Վճրակից և ստացել այդ ընդունակությունը:

28. Վճրն ե մեզի և ամպի տարբերությունը:

29. Ինչիցն ե, վոր ջրային զոլորշին յերեմն իբրև անձրև և թափվում, յերեմն իբրև ձյուն:

30. Յերբ խոնավ քամին ովկիանոսից փչում է և սարերի յի հանդիպում, ողի հոսանքը վեր և բարձրանում և ցրտանում: Այդ ժամանակ ի՞նչ և պատահում ողի մեջ պարունակված ջրային զոլորշիներին:

31. Տաք յերկրներում ջուրը ցրտացնելու համար յերեմն այս միջոցին են դիմում: Զուրը լցնում են ծակոտելեն, թույլ թթած կավի ամանի մեջ, վորը զնում են զուրսը: Ինչու ջուրն այս զեղաքում ցըրտանում է:

32. Զրի միենույն քանակը յերես ափսեյից շուտ կը զոլորշիան, թե չը ցնից:

33. Ինչու քամու ժամանակ ջուրն ավելի արագ և զոլորշանում, քան խաղաղ յեղանակին:

34. Անձրեից գոյացած լճակները յերբ են ավելի արագ ցամաքում՝ տաք որը, թե զով որը. պարզ որը, թե ամսպամած որը:

35. Ասում են «ցող և իջել»: Ցողն իրապես «իջնում ե»:

36. Ինչու թեթև քամու ժամանակ ավելի շատ ցող և ստացվում, քան այն ժամանակ, յերբ ամենեին շարժում չկա:

37. Ինչու ցողը միայն գիշերն և նստում:

38. Ցուրտ գեշերն և ավելի ցող նստում, թե տաք գիշերը:

39. Ի՞նչ պայմաններում և ցողի փափարեն գետնի վրա «սառնամանիք», այսինքն սասույցի բյուրեղիկների ծածկույթ, ստացվում:

40. Ինչու բարեխառնությունը բարձրանալիս ողն ավելի չոր և դառնում, թեև այդ ժամանակ խոնավություն չի կորցնում:

41. Ի՞նչ պայմաններում և ցողի կետը բարձր լինում:

42. Ինչու Մասսի զագաթին մոտ բարձունքներում չի հաջողվի բաց ամանում ձու յեփել:

43. Լեռնային տեղերի բարձրության մասին ինչպես կարելի յէ դատել բարեխառնության միջոցով (առանց բարոմետրի):

44. Շիշը մաքուր լվանալու և ախտահանելու համար մի առ ժամանակ զնում են յեռացող ջրում, ապա դատարկում են և կողքի դընում, բերանը բամբակ խցելով: Այդ ժամանակ շահ ներսը միզապատ և դառնում: Ինչու:

45. Ինչու լեռնինդրապում ամառն այնպես տաք չե և վոչ ել ձըմեռն այնպես ցուրտ, ինչպես Մոսկվայում:

46. Թեյլը հախճապակյա թեյտամանում և շուտ հովանում, թե մետաղյա:

47. Թեյտամանը դատարկեցին, վերջին բաժակ տաք թեյն ածելով: Բաժակը շուտ կը հովանա, թե դատարկ թեյտամանը:

## Խ Ն Դ Ր Ն Ե Բ.

1. Ինչքան ջերմություն և արձակվում կես զրվ. (կամ 200 զր.) կապարը պնդանալիս:

2. 30 զրվ. կշռող արձաթի զդալը, վորի բարեխառնությունը  $20^{\circ}$  ե, զրին թեյի մեջ, վորի բարեխառնությունը  $91^{\circ}$  ե, զդալը տաքացավ մինչև  $90^{\circ}$ : Ի՞նչքան ջերմություն ստացավ զդալը:

3. Յեթև բաժակի մեջ թեյլը (տ. նախորդ խնդիրը) 252 զրամ ե, ապա ինչքան կը հովանա, զդալի տաքացնելու համար հարկավոր ջերմությունը հաղորդելուց հետո:

4. Մի խորանարդ մետր ողը սովորական բարեխառնության մեջ մոտ 1200 զր. ե կշռում, Գործարանի ծխնելույզի հորիզոնական հատ-

վածքը 1 քառ. մետր ե, իսկ բարձրությունը 25 մետր: Վորքան և կըշում ծխնելույզի մեջ յեղած ողը:

5. Ծխնելույզի ողի բարեխառնությունն (տ. նախորդ խնդիրը) այնքան և բարձրանում, վոր ողի ծավալը  $1\frac{1}{2}$  անգամ մեծանում ե և այդ ժամանակ ողի ավելցուկը ծխնելույզից դուրս ե զալիս: Վորքան և ծխնելույզում մնացած ողի կշռը:

6. Ծխնելույզի ողն ( $4\text{-րդ}$  և  $5\text{-րդ}$  խնդ.) ինչ ույժով կը բարձրանա:

7. Սենյակի բարեխառնությունն  $14^{\circ}\text{R}$ . քանի աստիճան և Ցելսիուսի ջերմաչափով:

8. Մոդիկի պնդացման բարեխառնությունն  $40^{\circ}\text{C}$ . քանի աստիճան և Ռեոմյուրի ջերմաչափով:

9. Մարդու մարմնի միջին նորմալ բարեխառնությունն  $36,5^{\circ}\text{C}$ . քանի աստիճան և կազմում Ռեոմյուրի ջերմաչափով:

10. 1 մետր յերկարության յերկաթե ձողը  $1^{\circ}\text{C}$  տաքացնելիս  $0,012$  միլիմետրով յերկարում է: Յերկաթի գերան ամառը  $40^{\circ}\text{C}$  բարեխառնության մեջ ճիշտ 15 մետր յերկարություն ունի: Ի՞նչ փոփոխություն կը կրի նրա յերկարությունը ձմեռը— $35^{\circ}\text{C}$  բարեխառնության մեջ:

11. Շողեջեռուցման ուղիատորի մեջ 10 քիլոգրամ գոլորշի հեղուկացավ. այդ ժամանակ ինչքան ջերմություն և տալիս ուղիատորը:

12. Ինքնեռը 1 վերը (12 լիտր) ջուր և տանում: Այս ջուրը  $20^{\circ}\text{C}$  բարեխառնությունից տաքանում և մինչեւ յեռման կետը, այնուհետեւ մի վորոշ ժամանակ յեռում ե, վորի ընթացքում ջրի  $\frac{1}{20}$  մասը գոլորշի յե դառնում: Ինչքան ջերմություն գործադրվեց ջուրը տաքացնելու վրա:

13. Ամանի մեջ 1,072 զր. ջուր կա: Յեռարանից այդ ջրի մեջ զոլորշի յին բաց թողնում, վորի ժամանակ ջրի բարեխառնությունը բարձրանում և  $10^{\circ}\text{C}$ -ով: Ինչքան զոլորշի հեղուկացավ ամանի մեջ:

14. Ինչքան և ցողի կետը յեռացող ինքնեռի կափարիչի տակ:

15. Ողի բարեխառնությունն  $40^{\circ}\text{C}$ , իսկ ցողի կետը՝  $20^{\circ}\text{C}$ . վորքան և ողի հարաբերական խոնավությունը:

16. Ի՞նչ բարեխառնության մեջ կեսա ջուրը, յեթե արտաքին ձնշումը հավասար է  $52,5$  սմ. սնդկային սյունի:

17. Կես վերը (6 լիտր)  $32^{\circ}\text{C}$  ջուր պարունակող ամանի մեջ սառուց և զցած: Զրի բարեխառնությունն իջավ մինչեւ  $0^{\circ}$ : Ինչքան սառուց հալվեց:

18.  $10^{\circ}\text{-ի}$  ջուրը խառնեցին նույն քանակով  $98^{\circ}\text{-ի}$  ջրի հետ: Վորքան կը լինի խառնուրդի բարեխառնությունը:

19. Սառուց պարունակող մի ամանի մեջ լցրին 100 զր. ջուր,

վորի բարեխառնությունն էր  $20^{\circ}\text{C}$ , իսկ մյուս ամանի մեջ դրին  $200$  գր. կշռող յերկաթի մի կտոր, վոր տաքացված էր մինչև  $100^{\circ}\text{C}$ . Վեր ամանի մեջ ափելի շատ սառուց կը հալվի:

## VII ԳԼՈՒԽ

### ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ

**130. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱՑՐԱԾ ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ.**—Յեթե դրամը վորեւ խորդուրուտ բանով որինակ՝ մահուդով, շփենք, կը տաքանա: Փայտը կամ մետաղը մշակելիս գործիքները տաքանում են և յերբեմն շատ խիստ: Յեթե յերկու կոռոր սառուց ուժեղ իրար շփենք, կը հալվեն: Յերբ հետանանվի վրա պղողատի գործիքներ են սրում, նրանցից կայծեր են թուչում:

Այս բոլոր գեպքերում վոչ միայն ջերմություն ե առաջնում, այլ միևնույն ժամանակ այս կամ այն ուժն աշխատանք ե կատարում, վորոշ ճանապարհի վրա վորոշ դիմացրության հաղթահարելով: Վորովհետև այս գեպքերում վորեւ ափելի տաք մարմից ջերմություն չի խլվում, և բարեխառնությունն ել միայն աշխատանք ծախսելիս ե բարձրանում, ապա դալիս ենք այն յեղբակացության, վոր աշխատանքը ջերմության աղբյուր ե հանդիսանում:

Ուրեմն աշխատանք կարող ե ջերմության փոխարկվել:

**131. ԶԵՐՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ.**—Շոգեմեքենան միայն այնքան ժամանակ կարող ե աշխատանք կատարել, վորքան ժամանակ կաթսան տաքացվում ե: Բենզինի մոտորը (շարժիչը) միայն այնքան ժամանակ կարող ե ավառմոքիլը կամ մոտորային նավակը շարժել, վորքան ժամանակ մոտորի մեջ ե մտնում այն ջերմությունը, վոր առաջանում ե բենզինի բռնկումների ժամանակ: Բոլոր այսպիսի մեքենաները ջերմություն ստանալով են աշխատանք կատարում: Թե տաքացրած գոլորշին ինչպես ե շողեմեքենայի մխոցը հրելու աշխատանքը կատարում, գժվար չե հասկանալ, յեթե հիշենք  $\S$  100-ում և  $\S$  125-ում նկարագրած գործերը: Յերբ որվակում ողը տաքանում ե, նա մթնոլորտի ճնշումը հաղթահարելով ընդարձակվում ե և ջրի կաթիլը գեսլի վեր մղում: Յեթե ջուրը փակ

յեռարանում ( $\S$  125) բավական ուժեղ տաքացնենք, առաջացող գոլորշին սնդիկը մանոմետրից դուրս կը մղի և այդպիսով մի աշխատանք կը կատարի, վորի աղբյուրը բոցից ստացվող ջերմությունն ե: Այս յերեսույթների մեջ տաքացած զազը և գոլորշին ճիշտ նույն պատճառով են հեղուկը մղում, ինչ պատճառով վոր գոլորշին շողեմեքենայի մխոցը: Այս բոլոր գեպքերում աշխատանքը ջերմությունից ե ստացվում:

Ուրեմն ջերմությունը կարող ե աշխատանքի փոխարկվել:

**132. ԻՆՔՆԵՌՆԵՐԻ ՅԵՎ ԹԵՅԱՄԱՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.**—Քանի վոր աշխատանքը և ջերմությունը կարող են մեկը մյուսին փոխարկվել, ապա ամեն մի ջերմական գործիք և ամեն մի ջեռուցիչ գնահատելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե ծախավող ջերմության վոր մասն ե ոգտակար դառնում, կամ, ուրիշ խոսքով, վորքին ե գործիքի արգասիքը կամ արտադրականությունը:

Տնային տնտեսության մեջ մեծ նշանակություն ունի վառարանների, ինքնեռների, այրիչների, կաթսանների և այն գործիքների արտադրականության հարցը: Զերմական գործիքների արտադրականությունը վորոշելու յեղանակին ծանոթանալու համար նախ յենթադրենք, վոր մեզ հարկավոր ե համեմատել տարբեր կառուցվածք, բայց մոտավորապես հավասար տարրողություն ունեցող յերկու ինքնեն:

Յերկու ինքնեռն ել միևնույն չափով և միևնույն բարեխառնության ջուր ածենք և յերկու մեջ ել միևնույն չափանիքը ածուխ գցենք, սպասենք, վոր յերկու մեջ ել վոր քանակով ածուխ գցենք, սպասենք, վոր յերկու մեջ ել ածուխը մինչև վերջն այրվի, ապա թե մեկ և թե մյուս ինքնեռի ջրի բարեխառնությունը չափենք: Այն ինքնեռը, վոր ավելի տաքացած կը լինի, ի հարկե, ավելի մեծ արտադրականություն կունենա:

Այժմ յենթադրենք հարկավոր ե համեմատել տարբեր ձեր յերկու թիթեղյա թեյամանների արտադրականությանը: Ամեն մի թեյամանի մեջ միևնույն բարեխառնության 1 լիլողրամ, այսինքն  $1000$  գր. ջուր ածենք և յերթով տաքացնենք սպիրտի միևնույն այրիչի վրա: Վորպեսզի այրիչից թեյամաններին

հաղորդվող ջերմաքանակները միահավասար լինեն, թեյամանների հատակները պետք ե այրիչից հավասար հեռավորություն ունենան և հավասար ժամանակ տաքացվեն: Տաքացնելուց հետո թեյամանների ջրի բարեխառնությունը չափելով հեշտ ե հաշվել այն ջերմաքանակը, վոր ստացել ե ամեն մի թեյամանի ջուրը: Այդ ջերմաքանակը հավասար կը լինի:

$1000 \times$  բարեխառնության բարձրացում:

Այսական, յեթե բարեխառնությունները Ցիլինդրուսի աստիճաններով չափենք, ջերմաքանակները փոքր կալորիաներով կստացվեն: Այն թեյամանը, վորի ջրի բարեխառնությունն ավելի յե բարձրացել, ավելի մեծ արտադրականություն ունի:

133. ԱՅՐԻՉՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Այրիչների հարաբերական արտադրականությունը համեմատելու համար հարկավոր ե իմանալ վոչ միայն ջրին հաղորդվող ջերմաքանակը, այլև այրիչի մեջ բանեցված կիզանյութի, մեր որինակում այրված սպիրտի քանակը: Դիցուք վերը նկարագրած փորձի ժամանակ թեյամաններից մեկը տաքացնելիս  $1000$  գր. ջրի բարեխառնությունը  $15^{\circ}\text{C}$ -ից բարձրացավ մինչեւ  $90^{\circ}\text{C}$ , այսինքն  $75^{\circ}$ -ով, և այդ ժամանակի ընթացքում այրիչում  $20$  գր. սպիրտ գնաց: Այդ նշանակում ե, վոր  $20$  գր. սպիրտն այրվելիս ջուրն ստացավ  $1000 \times 75 = 7500$  փոքր կալորիա ջերմության, վոր ամեն մի զրամին կազմում ե  $3750$  փոքր կալորիա: Այսքան կալորիա յե ստացվում, յերբ մեր վերցրած այրիչի մեջ  $1$  գր. սպիրտ ե այրվում:

Յեթե փորձը կրկնենք թեյամանը նույնը թողնելով, բայց ուրիշ կառուցվածքի այրիչ վերցնելով, ծախսած ամեն մի գր. սպիրտից այլ ջերմաքանակի կստացվի, ամենք  $3000$  կալորիա:  $3750$  փոքր կալորիա և  $3000$  փոքր կալորիա թվերը մեզ տալիս են այրիչների հարաբերական արտադրականությունը: Լոկ հարաբերական արտադրականությունն ե ստացվում այն պատճառով, վոր մեզ հայտնի յեն ստացվող ոգտակար ջերմության քանակները, բայց ծախսած ջերմության քանակներն առայժմ անհայտ են: Այն զիտենք միայն, վոր  $1$  գրամ սպիրտն այրելիս ստացած ջերմությունն ե ծախսվում: Ուրեմն այրիչների

իրական արտադրականությունը վորոշելու համար անհրաժեշտ ե չափել, թե մեկ գրամ սպիրտն այրելիս ընդամենը ինչքան ջերմություն ե ստացվում:


134. ԱՅՐՄԱՆ ԶԵՐՄՈՒԽՅՅՈՒՆԸ: ԶԵՐՄԱՐՍՅՈՒՄ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Վառելիքի կամ ընդհանրապես ամեն մի կիզանութիւ այրման ժամանակ ստացվող ջերմաքանակը

կոչվում է այրման ջերմություն: 1 գրամ (կամ  $1$  քլիգ.) նյութի այրման ջերմությունը կոչվում է այդ նյութի ջերմանց ունակություն: Այրման ջերմությունը և ջերմարար ունակությունն, որինակ՝ սպիրտի համար, հետեւյալ յեղանակով կարելի յե վորոշել: Այրիչը նկարում ցույց տված ձևով (նկ. 83) պատում են ջրային և ծածկույթով. սա մի անոթ ե, վորի ներսը խոսոչ ե ներկայացնում և ունի  $\dagger$  խողովակները, և վորի զրոխց շինված են  $\ddagger$  և  $\ddagger$  անցքերը: Ջրի մուտքի և յելքի համար, այլև յերկու անցք՝  $\Gamma$  և  $\Gamma_1$  ջերմաչափների համար: Այրման ժամանակ ստացվող տաք գագերն անցնում են  $\dagger$  խողովակը՝ նկ. 83. Գաղափին այրիչը ներով, վորոնք ամեն կողմից ջրով շրջապատված են: Զուրը հոսում ե, մտնելով ներքեմի անցքից և յենելով վերևինից: Զերամաշափերով չափում ենք ներհոսող և արտահոսող ջրի բարեխառնությունը: Իմանալով բարեխառնությունների տարրերությունը և ջրի այն քանակը, վոր հոսում է  $1$  գր. սպիրտն այրվելիս, կարող ենք վորոշել վերջնիս ջերմար ունակությունը:

Դիցուք ներքեմի ջերմաչափը ցույց ե տալիս  $10^{\circ}\text{C}$ , իսկ վերևինը  $45^{\circ}\text{C}$  և դիցուք  $1$  գրամ սպիրտն այրվելու ընթացքում  $200$  գր. ջուր ե հոսում գործիքի միջով: Այս գեպքում ջրի ստացած ջերմաքանակն ե

$200 \times 35 = 7000$  փոքր կալորիա:

Ուրեմն  $1$  գրամ սպիրտի ջերմարար ունակությունը հավասար ե  $7000$  փոքր կալորիաների:



Նման յեղանակով փորոշում են զանազան նյութերի, որին ակ՝ քարածուխի, ջերմարար ունակությունները: Լավ փորակի քարածուխի ջերմարար ունակությունը հավասար է 7600 փոքր կալորիայի 1 զրամին կամ 7600 մեծ կալորիայի 1 քիլոգրամին:

**135. ԶԵՐՄԱԿԱՆ ՍՐՑՍԴՐՄԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԱՐԳԱՍԻՔ).—** Այժմ մենք արդեն կարող ենք մեր թեյամանի և այրիչի արտադրասակնությունը կամ իրական արգասիքն արտահայտել ստացած գոտակար ջերմության և ամբողջ ծախսած ջերմության քանակների հարաբերությամբ: Մեր որինակում ջուրն ստացավ 3750 փոքր կալորիա, մինչդեռ այրման ժամանակ ծախսվեց 7000 փոքր կալորիա: Այստեղից արգասիքը կը լինի ստացած ջերմություն  $3750 \text{ փ. կալ.}$   $=$  մոտ  $53\%$ . ծախսած ջերմություն  $= 7000 \text{ փ. կալ.}$

Պայման ջերմական արտագրականուրբունք կամ ջերմական արգասիքն արտահայտում է ամբողջ ծախսած ջերմուրյան այն մասը, որը գործադրվում է ոգտակար տաքացման համար:


$$\text{Ջերմական արգասիքը} = \frac{\text{ստացած ջերմուրյուն}}{\text{ծախսած ջերմուրյուն}}.$$

**136. ԱՌԱՋԻՆ ՇՈԴԵՄԵՔԵՆԱՆԵՐԸ.—** Առաջիւ ժամանակներն աշխատանքը կատարվում եր մարդկանց և կենդանիների, այլև քամու և ջրի ույժերով: Արդյունաբերությունն ու առևտուրը հսկեմատարար թուլ եյն զարգացած, ուստի աշխատանքի ափելի հզոր աղբյուրների կարիք չեր զգացվում: Բայց 17-րդ դարի սկզբներին արդեն սկսեց զարգանալ խոշոր և հզոր մեքենաների պահանջը, այն ժամանակ գոլորշին հստորգների ուշադրության առարկան դարձավ, և մեծ ջանք գործադրվեց գոլորշին իբրև աշխատանքի աղբյուր ոդուագործելու:

Առաջին շոգեմեքենաներից մեկը, վոր 1705 թվին կառուցեց մեքենագետնուկոմենը, աված է 84-րդնկարում: Վերևից բաց Ը գլանի մեջ գետեղված ե Պ մխոցը, վոր կախված է յերկակշորի մի ծայրից: յերկակշորի մխուս ծայրից կախած է Վ ծանրոցը և բացրած և ջրհանի և ձողը: Յերբ յ անցքով շոգին մացվում է գլանի մեջ նա մխոցը գետի վեր և շարժում: Այնուհետև գոլորշու մուտքը դադարեցնում են և Ծ անցքով սառը ջուրը հոսեց-

նում զլանի ներսը: Յրտանալու հետևանքով գոլորշին խտանում է և զլանի մեջ ստացվում է մթնոլորտային ճնշումից շատ ավելի փոքր ճնշում: Այն ժամանակ մթնոլորտային ողի ճնշումը մխոցը դեպի ներքի և մղում: Զուրը զլանից հեռացնում են օ խողովակով և գործողությունը նորից կրկնում: Պ մխոցի շարժմամբ ի ձողը ևս շարժման մեջ և ընկնում և ջրհանը բանեցնում:

Նյուկոմենի մեքենան խիստ շատ գորորշի յեր ծախսում: Մինչև Զեմս Ուատոն, ըստ յերեսութիւն, վոչվոք չեր չափել այդ մեքենայի արգասիքը, վորպեսզի պարզեց նրա փոքր արտադրականության պատճառը և վորեւ յեղանակ զտներ այդ մեքենան կատարելագործելու համար:



Նկ. 84 Նյուկոմենի մեքենան:

Նի մեքենայի փոքրիկ մողելի վրա իր փորձերն սկսեց 1763 թվին անգլիական Գլազգո քաղաքի համալսարանի լաբորատորիայում, վորտեղ մեքենագետի պաշտոն եր վարում: Ուատոն ուղղակի զարմանում եր, թե ինչ մեծ քանակությամբ գոլորշի յե գնում մխոցը բարձրացնելու վրա: Նա սկսեց չափութել կատարել և գտավ, վոր մխոցը մեկ անգամ բարձրացնելու համար զլանի մեջ մուծվող գոլորշու քանակը կը բավեր չորս անգամ բարձրացնելու, յիթե գոլորշին նույն ճնշումը գործեր, ինչ վոր ունի կաթսայում:

Ուատոն այստեղից յեղակացրեց, վոր գոլորշու ավելորդ ծախք և առաջանում, վորովետեւ գոլորշին ցրտացրած զլանը մտնելիս խտանում է: Գոլորշին ներս թողնելու ժամանակ զլանը միշտ ցուրտ է լինում, վորովետեւ անմիջապես նախքան


այդ՝ ջրով ցրտացվում ե. ուստի և գոլորշու մի զգալի ժամը, աշխատանք կատարելու փոխարեն, գործադրվում ե զլանը նորից տաքացնելու վրա: Գոլորշու ջերմությունն ողտագուծելու համար պետք ե թույլ չտալ, վոր նա նախքան աշխատանք կատարելլ ցրտանա: Բայց յերբ գոլորշին մխոցը բարձրացնելով աշխատանք ե կատարել, պետք ե խտացման միջոցով հեռացվի, վորպեսզի ողի ճնշումը կարողանա մխոցն իջեցնել իսկ գոլորշին խտացնելու համար հարկափոր ե ցրտացնել: Բայց յեթե գոլորշին զլանի մեջ ենք ցրտացնում, կարիք ե լինում մխոցի ամեն մի յերթեեկի ժամանակ զլանը նորից տաքացնելու: Այս այս ե չափազանց շատ գոլորշի ծախսվելու պատճառը:

Մխոցի յուրաքանչյուր յերթեեկի ժամանակ զլանը ցրտացնելու և տաքացնելու անհրաժեշտությունից խուսափելու համար Ուստատը վորոշեց զլանին միացնել մի այլ զլան, վորը պետք ե ցրտացվեր և գոլորշու խտացմանը ծառայեր: Այդ նըսպատակով նյուկոմենի մեքենայի զլանին միացվեց յերկրորդ Ծ զլանը (նկ. 85), վոր ցրտացվում եր ցուրտ ջրով: Այս զլանը վոր միայն ցրտացման համար ե, կոչվում ե խորասն (կոնիֆենատոր):


138. Ի՞նչի՞ ե, ՎՈՐ ՈՒՍՏՏԻ ԽՏԱՐԱՆՆ ԱՐԳԱՍԻՔԸ  
ՄԵԾԱՅՈՒՄ Ե.—Վերոհիշյալ յեզրակացություններին հանգեցրով Ուստատը մեքենան այսպես շինեց. գոլորշին կաթսայից Ի ծորակով (նկ. 85) անցնում ե Ծ զլանը և բարձրացնում Պ մը իոցը: Այնուհետև Ի ծորակը փակում են և Օ ծորակով գոլորշին ներս թողնում Ծ զլանը, վորը ջրով ցրտացնում են: Տաք գոլորշին ձգուում ե Ծ զլանից անցնել Ծ զլանը, վորովհետեւ վերջնիս մեջ հագեցնող գոլորշու ճնշումը մթնոլորտային ճնշումից փոքր ե. հետևանքն այն ե լինում, վոր մխոցը ցած ե իջնում: Յերբ մեքենան այսպես է կառուցված, կարիք չը կա Ծ զլանը ցրտացնելու:

139. ՈՒՍՏՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆ.— Խտաբանը միացնելուց նյուկոմենի մեքենայի արգասիքն զլա-

լիորեն ավելացավ: Բայց Ուստատը մեքենայի եական պակասությունն եր համարում նաև այն, վոր զլանը վերեից բաց եր շինվում, վորի հետեանքով մխոցն իջնելիս զլանն ողի հետ շփվելուց խիստ ցրտանում եր: Այս ի նկատի ունենալով Ուստատը մի այլ մեքենա կառուցեց, վորի Ծ զլանը փակ ե (նկ. 86) և վորի մեջ գոլորշին մըտնում ե մերթ Ի ծորակով, վորի ժամանակ մխոցը բարձրանում ե, մերթ մխոցից վեր գտնվող Ճ ծորակը վորի հետեանքով մխոցն իջնում ե: Դրանից զատ շինված են նաև Օ յերկու ծորակները, վորոնցով գոլորշին զլանից խտաբանն ե մտնում: Աշխատանքի ժամանակ նախ Ի և Օ կափարիչները բացվում են, Ճ և Օ կափարիչները փակվում, և այդ ժամանակ մխոցը վեր ե բարձրանում. ապա Ճ և Օ կափարիչները բացվում, և այդ ժամանակ մխոցն իջնում ե, և այսպես շարունակ: Ծորակները փակվում են և բացվում մխոցի ձողի հետ միացը ածակների միջոցով:




նկ. 85. Վ խտաբանն արգասիքը մեծացնում է:



նկ. 86. Ուստատի կրկնակի

գործողության մեքենան:




նկ. 87. Մխոցն սկսում ե

զետի ձախ շարժվել:

87-ըդ նկ.): Նկարագրած կատարելագործումներով կառուցված՝ Ռւաստի մեքենան ընդհանուր զծերով արդեն նման է արդի այն շողեմեքենաներին, վորոնք խտարան ունեն, այսինքն այսպես կոչված սորին ներման մեմենաներին:

140. ԳՈԼՈՐԾՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՀՆԴԱՐՉԱԿԵԼԻՄ. — Մեքենան աշխատելիս գոլորշին զլանն է մտնում այնպիսի բարեխառնության մեջ, վոր մոտ և յեռման կետին: Յեթե ծորակն այնքան ժամանակ բաց մնար՝ մինչև վոր մխոցը զլանի ծայրը հասներ, ինչպես այդ նկարագրված և § 136-ում, ապա գոլորշին դուրս գալիս նույն բարեխառնությունը և նույն ճնշումը կը պահպաներ, վոր ուներ մտնելիս: Այդ դեպքում գոլորշին, մեծ ճնշում ունենալով՝ արագորեն կը մտներ խտարանը, և այն ամբողջ չերմությունը, վոր նա կը հաղորդեր խտարանին, զուր կանցներ: Նպատակ ունենալով կարելիին չափ լրիվ ոգտագործել այդ չերմությունը՝ Ռւաստը հնարեց գոլորշու «ինքնաբերական արդելումը»:

Գոլորշու արգելումը տեղի յեռնենում առնալի միջոցով: Սողնակը մի մետաղյա արկղ է, վոր և ձողի միջոցով (նկ. 87) հետ ու առաջ և շարժվում Տ «շողեարկղի» ներսը: Յերբ սողնակը 87-ըդ նկարում պատկերացրած դիրքն ունի, գոլորշին շողեարկղից թանցքով մտնում է և մխոցը դեպի ծախ մղում. նույն այդ ժամանակ մխոցի մյուս կողմում գտնվող բանած գոլորշին թանցքով հեռանում է սողնակի խոռոշը և այստեղից ել և անցքով խտարանը: Սողնակի դիրքը այն մոմենտին, յերբ մը խոցն սկսում է դեպի աջ շարժվել, պատկերացրած և 88-ըդ նկարում: Սողնակն այնպես է հարմարեցված, վոր գոլորշին այն մոմենտին է դադարում Տ-ից թանցնել յերբ մխոցն արդեն կատարել և իր ընթացքի մոտ  $\frac{1}{4}$  մասը:



Նկ. 88. Մխոցն սկսում է դեպի աջ շարժվել:

մղելու համար, ուստի և այդ գոլորշին ընդարձակելով՝ շարու-

նակում է շարժման մեջ պահել մխոցը, մինչև վոր վերջինս անցնում է իր ընթացքի միացած  $\frac{3}{4}$  մասը: Այս ընդարձակման ժամանակ գոլորշին, աշխատանք կատարելով՝ վոչ միայն իր ճնշումն է թուլացնում, այլև ցրտանում է: Այն ջերմությունը, վոր գոլորշին այդ ցրտացման ժամանակ կորցնում է, ողտակար աշխատանքի յեւ փոխարկվում:

Ինքնաբերական արգելումը գոլորշուն հնարավորություն է տալիս զլանի ներսում ընդարձակվելու և ցրտանալու, այս բանի հետևանքով աշխատանքի յեւ փոխարկվում մի զգալի ջերմաքանակ, վորն այլապես խտարանին կամ ողին կը հաղորդվեր և անողութ կանցներ:

Գոլորշին, մեմենայի գլանում ընդարձակվելով՝ ցրտանում է, և պետք է այդ ժամանակ առանակած ջերմուրյունն աժամանակ է գառնում:

141. ՄԵՐԵՆԱՅԻ ՀԶՈՐՈՒԹՈՒՆԸ. — Սմեն մի մեքենայի կարեռագույն հատկություններն են առաջին՝ նրա հզորությունը, յերկրորդ՝ նրա արգասիքը: Տեսնենք՝ ինչպես են վորոշում թե մեկը, և թե մյուսը: Մեքենայի հզորությունը նույն ճնշումը (արտահայտած քիլոգրամներով 1 քառ. մետրի վրա) բազմապատկելով դրանի ծավալով (խորանարդ մետրի վրա) կատարանք մխոցի յուրաքանչյուր ընթացքի ժամանակը կատարված աշխատանքը (քիլոգրամ-մետրերով): Քիլոգրամ-մետրի այդ թիվը բազմապատկելով մխոցի 1 վայրկյանում կատարած ընթացքների թվով և արտադրյալը՝ 75-ով բաժանելով՝ կատարանք մեքենայի հզորությունը ձիու ուժերով:

Որինակի համար հաշվենք այն մեծ շողեարկի հզորությունը, վորը 1 ժամում 100 քիլոմետր արագությամբ և շարժվում: Զափումները հետեւյալ մեծություններն են ավել:

Միջին ճնշումն է 3,78 քլոր. 1 քառ. մետրի վրա, վոր կադմում է 37800 քլոր. 1 քառ. մետրի վրա:

Մխոցի ընթացքի յերկարությունն է 61 սմ., այսինքն 0,61 մետր:

Մխոցի մակերեսն է 1830 քառ. սմ., այսինքն 0,183 քառ. մ.

Միոցի ընթացքների թիվն է 1 բոպեյում 520, այսինքն

$$1 \text{ վայրկյանում} = \frac{520}{60}.$$

Ուրեմն

$$\text{Հզորությունը} = \frac{37800.0,61.0,183.520}{60 \cdot 75} = \text{մատ } 488 \text{ ձիու ուժ:}$$

Վորովինեակ խոսքը շոգեկառքի մասին ե, վորը յերկու կատարելապես միատեսակ աշխատող դլաններ ունի, ապա շոգեկառքի ամբողջական հզորությունը կը լինի

$$488 \times 2 = 976 \text{ ձիու ուժ:}$$

Մեքենայի միոցի վրա ազդող միջին ճնշումը չափում են Ուստաի ճնարած մի հատուկ մանոմետրի միջոցով, վոր կոչվում է «շոգու ցուցիչ». այս պատճառով վերը նշած ձեռվ վորոշված հզորությունը կոչում են «ցուցչային» հզորություն: Մեքենայի շարժվող մասերի շփման հետևանքով նրա իրական կամ «արգելակային» հզորությունը միշտ փոքր ինչ պակաս է «ցուցչային»-ից: Հզորությունը կոպիտ մոտավորությամբ վորոշելիս կարելի յե իրրե միոցի վրա ազդող միջին ճնշում ընդունել կաթսայում և խտարանում տիրող ճնշումների տարրերության կեսը. այս ճնշումների մեծությունները վորոշում են մանոմետրների ցուցմունքներից:

142. ԻՆՉՔԱՆ ԱԾՈՒԽՆ Ե ԾԱԽՍՎՈՒԽՄ 1 ԶԻՌԻ ՈՒՅԹԻ  
ՎՐԱ. 1 ԺԱՄՈՒԽՄ.— Շոգեկառքի արտադրականությունը կամ արդասիքը վորոշելու համար պետք է չափել այն աշխատանքը, վոր շոգեկառքը կատարում է վորեւ ժամանակի, որինակ՝ 1 ժամվա ընթացքում, ապա չափել, թե ինչքան ածուխ և ծախսվել այդ նույն ժամանակամիջոցում շոգեկառքի հնոցում: Յեթե աշխատանքը քիլոգրամ-մետրերով չափենք, խիստ մեծ թվեր կստանանք, այս պատճառով ընդունված է այդպիսի դեպքերում աշխատանքն արտահայտել ավելի խոշոր միավորներով, այն ե՝ ձիու ուժերով 1 ժամում կամ ուժաժամերով: Մի ձիու ուժը մի ժամում, կամ 1 ուժաժամը ինչպես անունն է ցույց տալիս, հավասար է այն աշխատանիքին, վոր կատարվում է մի ժամում, յեր նզորությունը 1 ձիու ուժ է: Ուրեմն մի ուժաժամը հավասար է

ՀՀ Ազգային գրադարան



NL0259794

